

82-
9-45

Lily
267

277

2000

~~№ 134~~ ~~№ 346.~~ 977

ԳԵՂՐԳ ԹՈԼԸՆՅՈՒՆ

Ամս

267

1010
40992

ԱՀ

IV

ԹԱՐԳԱՆՆՈՒԹԻՒՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԿ. ԱՐԱՔԵԼԵԱՆՑԻ

147

ՏՓԽՍ

ՅՈՎՀՈՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ

1879



Առաջնային
պատմութեան

147

Дозволено цензурою. Тифлисъ. 15 Февраля 1879 г.



267-2003

28-266

Տիպ. И. Мартиросианца, на Орбеліановской улицѣ д. № 5

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մանկական ընթերցանութեան գրքերի կարօ-
տութիւնը օրէցօր զգալիէ դառնում, որովհետեւ
բացւումնն նորանոր դպրոցներ և ուրեմն աւելանում
են նոր ընթերցող մանուկներ։ Սոցա ընթերցասի-
րական ծարւը յագեցնելու համար հարկաւոր են
բազմաթիւ ընթերցանութեան գրքեր, որոնք թէ իւ-
րեանց բովանդակութեամբ և թէ մանաւանդ թե-
թեւ գներով բոլորովին կարողանան լրացնել այդ պի-
տոյքը։ Բայց նկատումն, որ համեմատարար
առաւել շատ են ընթերցողները, հետեւապէս և
մեծէ պահանջը, քան թէ լոյս տեսած հրատարա-
կութիւնների թիւը։

Դիցուք թէ պատահում են էլ անձինք, որոնք
թարգմանումն մի մի փոքրիկ մանկական վէպ, բայց
և նոքա անտես են առնում այն պահանջները, որոնք
անհրաժեշտ են գրականութեան այդ մասով պարա-
պողներին և նաև այն հանգամանքը, որ մեր մէջ
լինելով և հասակաւոր—մանուկներ, միւնոյն ժամա-
նակ պէտքէ նոցա ևս ընթերցանութեան նիւթ տալ։

Այսպիսով գրականութեան այդ ճիւղի յառա-
ջադիմութեան գործը դարձեալ կաղիկաղ է ընթա-
նում մեզանում և մեր ուսանող պատանիներից շա-
տերը դարձեալ ստիպուած են լինում օտար լեզու-

ների հրատարակութիւններին դիմել իւրեանց մտաւոր պաշարն աւելացնելու և այդ բնական ծարաւը յագեցնելու համար :

Եթէ յոյներո դնենք այդ պատահական գործողների վերայ, գժուար թէ կարողանանք հոսնել ցանկալի նպատակին:

Պատահումէ նոյնպէս, որ մի անձն յանձնէ առնում այդպիսի գրքեր հրատարակել և աշխատումէ այդպիսով հարստացնել Հայ մանուկների ընթերցարանը, սկսումէ գործել տեսնումն որ յանկարծ նաստիպուածէ լինում դադարեցնել իւր գործունէութիւնը, որովհետեւ նկատումէ, որ իւր տպագրութիւնների վաճառումից այնքան դրամ չե գոյանում գոնէ, որով կարողանայ տպագրական ծախսերը ծածկել, ուրեմն նա ստիպուածէ գտնւում դիմել մի այլ միջոցի իւր մտադրութիւնը առաջ միելու համար և մեղանում այդպիսի մի թեթև միջոց բաժանորդագրութիւնն է, որ ուրիշ խօսքով ասւումէ հուրոյշունութիւն: Կարծեմ այլես բացատրութեան կարօտութիւն չունի բաժանորդագրութիւն ասած բանս, որովհետեւ վերջին բառը բաւական ձիշտ պատկերնէ այն գործողութեան, որը սովորաբար բաժանորդագրութիւն ենք անուանում:

Լուսաւորեալ աշխարհում մեր յիշած նպատակին համելու համար կան շատ և շատ միջոցներ, որոնցով գրականութեան այդ ձիւնն էլ նոցանում հասածէ արդիւնաւոր յառաջադիմութեան և բռնածունի իւր պատուաւոր տեղը ընդհանուր զարգացման գործի մէջ: Այդ միջոցներն են, — զանազան ընթերց-

թիւններ, որոնք անդադար հրատարակումեն և աշխատումեն ամեն կերպով մեծ քանակութեամբ ցրուել թէ ինքնուրոյն և թէ թարգմանաբար յօրինած մանկական գրքեր. բազմաթիւ անագրէր, նոյն նպատակին ծառայոլ են, են:

Յանկալի էր, որ մեզանում ևս օր առաջ լցուածնէր մի այնպիսի ամսագիր, որ իւրեան նպատակ ընարելով մանկական ընթերցանութեան վերաբերեալ առ այժմ թարգմանական վէպեր հրատարակել այդպիսով թեթեացնէր մեզանում ևս զրականութեան այդ ձիւղի յառաջադիմութիւնը և ազատէր մեր ընթերցածարաւ ուսանողներին զանազան տգեղ ու խառնիշփոթ գրքերի ընթերցումից:

Մի երկու խօսք էլ ներկայ վէպիս մասին:

Թէ որքան շատ նիւթեր կան հայ ընտանիքի ներքին և արտաքին կենցազավարութեան մէջ, որոնք կատարելագիտ կմաստասիրութեան արժանի են, այդ ամենքին յայտնի ճշմարտութիւն է, որ սակայն շատ քիչ հետեւոններ ունի. Հայ կեանքը մնումէ միշտ անզարգացած, որովհետեւ նորա հետազոտողներ համարեալ չունինք, որոնք պէտքէ հանդէս բերէին մեր կեանքի լաւ և վատ կողմերը:

Ահա այս վէպը պարունակումէ մի այնպիսի նիւթ, որ եթէ սոլոտ միջի օտարը անունների տեղ Հայ անուններ գնելինք, վէպը կարծես ամեննեին չէր փոխի ոչ իւր ներքին և ոչ արտաքին արժանաւորութիւնները և իրաւամբ կառողէր համարուկիլ մի վէպ բուն Հայ սգւով և Հայի ընտանեկան կեանքի մի արտարկարգություն: Ո՞վ արդեօք մեզանից չէ լսած խորթ

մօր վարմունքը իւր խորթ որդու հետ, նորան զրկելը և վերջիվերջոյ զանազան թշուառութիւնների մատնելը, որոնցից, սակայն, պատահումեն դէպքեր, որ նախախնամութեան առանձին տնօրէնութեամբ կարողանումեն ազատուել և աւելի յաջող հանգամնիքների հանդիպել: Այս նիւթը այնքան բնական է Հայ ընտանիքի վերաբերութեամբ, որ մինչև անգամ բազմաթիւ առեղջուածների և առակների նիւթէ տուել մեղ առաջ և նոյն իսկ այժմն էլ:

Սոյն այս նիւթնէ զբաղեցնում այսօր «Գէորգ Ռոլլէստօնի» ընթերցողին. նոյն նիւթնէ, որ Հայ ժողովրդին մօտիկ համարելով՝ առաջարկումէ Հայ ընթերցող մատաղ հասարակութեանը:

ՑԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԿ. ԱՌԱՔԵԼԵՎԱՆՑ

1879. Փետրվար

ԳԵՈՐԳ ՌՈԼԼԷՍՏՕՆ

ԳԼՈՒԽԸ Ե.

Վ. ԵՊԻՍ

Բէրկշեր դքսութեան մէջ դժնուած Ռոլլէստօնների ամրոցը տանող լայն ծառուղին ծածկուած էր անհամար չոր գեղնագոյն տերեւներով: Ճանապարհին ցեխի միջով անցնումէր Գէորգ Ռոլլէստօնը: Անձրեւ թափումէր ուղղակի նորա երեսին և հողմը փրեփուացնումէր նորա որսորդական հանդերձը, բայց նա գնում էր ուրախ ու անհոգ: Մի բարձրահասակ, նիշար տասնեհնգամեայ պատանի էր նա, որ ըստ երեսութիւն աւելի տարիքով էր թւում: Գէորգ Ռոլլէստօնը խոստանումէր կտտարեալ մոքաբացութիւն տասնեւեօթ տարեկան հասակում:

— Ահա կը տեսնէք, թէ Գէորգը մի գեղեցիկ մարդ չի գուրս գայ, յաճախ կրկնումէր կառավար Ռէյլիեամը պառաւ Մարտինին, որը երբեմն փոքրիկ Գէորգի դայեակն էր, իսկ այժմ գիւղումը պանդոկ ունէր:

Եւ փոքր ինչ յետոյ ծանր հաւաքչով աւելացնում էր ծերուկը.

— Եւ նա մի բարի ու ազնիւ տղամարդ կդառնայ, եթէ միայն տիկինը նորան համբերութիւնից չէ հանի ու չի խեղդի նորանում բոլոր ազնիւ զգացմունքները:

Որովհետև Ռէյիլեամը աիկնոջը յիշեց, ուստի և
անհրաժեշտ է այստեղ բացատրել, որ այս «տիկինը»
Գէորգի խորթ մայլն էր: Ռօլէստօնի երկրորդ ամռափնը
մի մնափառ ու ինքնասէր կին էր և բացի գեղեցիու-
թիւնից ուրիշ ոչինչ արժանաւորութիւն չունէր: Փանի
որ Գէորգը երեխայ էր, նա սորա հետ քաղցրու-
թեամբ էր վարում: Գէորգն էլ շատ չէր նորան ան-
հանգիստ անում, որովհետև ամբողջ օրը անցէր կաց-
նում նորանից հեռու ամրոցի մի ծայրում դայեկի
հոգացողութեան ներքոյ, որ զգուշութեամբ պահ-
պանումէր նորան ամենայն դէպքում:

Գէորգը մօտ չորս տարեկան էր, երբ ծնուեց
փոքրիկ երիկը: Սկզբում, քանի որ երիկը դեռ չէր
կարողանում մանդալ, ոչինչ զանազանութիւն չէր
նկատում միտրիս Ռօլէստօնի՝ իւր խորթ—որդու-
հետ վարուելու մէջ: Բայց իւր իսկական որդու մե-
ծանալով՝ ատելութիւնն էլ սկսաւ բուն գնել նորա
հոգու մէջ և նորա բնութեան բոլոր վատ հակում
ները սկսան երեան գալ: Եօթնամեայ Գէորգին յանձ-
նեցին միտրէր Ռւայտֆիլդին, որին և յանձնեցին նորա
կրթութեան գործը: Մինչև այդ վայրին անը նա էր իւր
հօր սիրելին: Միտրէր Ռօլէստօնը ջերմ սիրով սիրու-
մէր իւր նախին կնոջը և երբ սա մեռաւ, թողնելով
մի թոյլ—հիւանդոտ մանուկի, նա իւր ամբողջ կեանքը
երդուեց մանկանը նուիրել: Սակայն հօր երկրորդ
ամռափնութիւնից յետոյ, Գէորգը նորա սիրոյ առաջին
առարկան չէր այլ ևս:

Եօթ թէ ութ տարուայ ընթացքում Գէորգը
միայն արձակուրդի միջոցնէր տանը անցկացնում:

Նորա սէրը գէպի հայրը թուլացաւ երկար բացակա-
յութիւնից. խորթ մօրը ամենեին չէր սիրում. իսկ
փոքրիկ չար երիկը նորանում միայն արհամարհանք
ու կարեկցութիւն էր զարթեցնում: Բայց չնայելով սո-
րան Գէորգը սիրումէր տանը մնալ. նա լաւ զգումէր
իւր նշանակութիւնը այնտեղի իբրև ապագայ տի-
րապետ Ռօլէստօն ամրոցի: Մանկութեան ժամանակ
նա լաւ սիրո ունէր ու բարի բնութիւն, բայց յե-
տոյ բոլորովին փոխուեց նորա բնաւորութիւնը: Միս-
տրիս Ռօլէստօնը իւր խորթ որդուն անգատուելու
նպատակով միշտ արհամարհումէր նորա արարմունքը,
նա էլ իւր կողմից կարեսոր էր համարում խորթ—մօր
հետ յանդուգն կերպով վարուիլը: Սկզբում նա այս-
պիսի վարմունք ունէր, միայն իւր անձը պաշտպա-
նելու խորթ մօր անդադար վարմունքի դէմ, իսկ
յետոյ այս սովորութիւն շինեց: Այս պակասութեան
հետ միացաւ և մի ուրիշը, որ պակաս ցաւալի չէ
առաջինից. Գէորգը շատ անհոգ էր. նորա հա-
մար անտանելի բան էր որեկիցէ անհաճոյ կամ ծանր
բան մտածելը: Ապագան շատ պայծառ գյոներով էր
ներկայանում նորան: Զէ՞ որ նորա հայրը հիանալի
ամրոց ունէր և բացի գորանից մեծ տարածութեամբ
գեղեցիկ ու պաղաբեր երկիր:

Գէորգը անհոգ քայլումէր ծառուղիի մէջ և
ակամայ ժպտում, երբ մտածումէր, թէ ինչպէս իւր
խորթ մայլը կբարկանայ, երբ ները այսպէս կմօտե-
նայ ամրոցի մեծ գուանը: Մի քանի քայլ հե-
ռուից նորան հետեւում էր ծառան հրացանն ու որ-
սորդական պայուսակը ձեռքին, որի միջից երևումէին

Նապաստակի ոտներն ու երկու թռչուն։ Այս տարի Գէորգը սովորականից երկար մնաց տանը, իւր դաստիարակչի տկարութեան պատճառով և Սեպտեմբերի մօտենալոն պէս՝ ամբողջ օրերը որսորդութեամբ էր անցկացնում։ Նա մտաւ չուգունէ դռնակով, որ բաժանումէր անտառը պարտիզեց և շեղուելով աւազով ծածկած ձանապարհից խոտերի վերայով վազեց դէպի ամրոցի գլւսաւոր դուռը։

Ոօլլէստօն ամրոցը միանգամայն նոր և բաւական անկանոն ձարտարապետութեամբ էր շինուած։ Նա կառուցածէր Եղիսարէդի ժամանակուայ ամրոցների ձաշակով։

Ոօլլէստօնները գաղթեցին այստեղ հիւսիսից։ Գէորգի օրորոցն ու նորա մօր վերջին բնակարանը մի հին տուն էր Նօրթումբերլանդում։ Երբ միստրիս Ոօլլէստօնը ամուսնացաւ Գէորգի հօր հետ, թախանձեց ծախել իւրեանց այս հին կացարանը, որ արդէն մի քանի սերունդ ժառանգաբար ձեռքէ ձեռք էր անցնում։ Գլսաւոր պատճառոներից մինը, որոնցով նա բացատրեց այս տեղափոխութեան կարևորութիւնը, այն էր, որ նա կարծումէր, թէ ինքը չկ կարող տառնել հիւսիսի խիստ կիման։ դուցէ միստրիս Ոօլլէստօնը այս գէպքում ուրիշ նպատակներ էլ ունէր աշքի առաջ։ Հին ամրոցը ուրիշ ձեռք անցաւ, նորա փոխանակ միեւնոյն գնով Բերկշեր դքսութեան մէջ առնուեցաւ նորը նոր ամրոցում նոր ծառաներ վարձեցին։ Հին ընդոճիններից միայն երկուսը տեղափոխուեցան գերգաստանի հետ, այնէ Գէորգի դայեակն ու ծերունի Ույիլեամը, որ Ոօլլէստօնի

երիստասարդութեան ժամանակ նորա սպասաւորն էր։ Գէորգը կամոց ձեռքը տարաւ հրացանին, պատուիրելով պայուսակն ու որսը խոհանոցը տանել ու վրայ ընկաւ դռանը։ Նա զարմանքով տեսաւ, որ դուռը ներսից փակած էր։ Ներսից ծալըելով նայումէր երիկը։ Նորա գեղեցիկ դէմքը այդ լուսէին այն աստիճան չարութիւն ու նենգութիւն էր արտայացտում, որ զզուանք պատճառեց Գէորգին։ Էրիկը կանգնած էր նախասենեկում, հագնուած գեղեցիկ թաւշեայ բաճին, մաքուր գուլպաներ ու կիսակօշիկներ, գեղեցիկ սանրուած, մաքուր ու փայլուն։ Գէորգը թրջուածէր ու ցեխոտած, յոգնած ու անհամբեր։ Դոքա միմեանց նայումէին գլխից մինչև ոտքերը։

— Դուռը բաց, ձայն տուեց Գէորգը։

— Զեմ բանայ, պատասխանեց Էրիկը։ մայրիկն ասաց, որ դու ցեխոտ կօշիկներով չմտնես այստեղ։ Գէորգի դէմքը կրակոտեց։

— Ներս թող, պիտի շորերս փոխեմ, քանի որ ճաշելու ժամանակը չէ։ Ներս թող, թէ չէ կիոշմանես։

Էրիկը լեզուն դուրս հանեց և ծամածուելով պատասխանեց։

— Խոհանոցովն արի. այստեղ չես կարող մտնել։


Սակայն Գէորգը չզեջաւ եղբօր արաբքներին, որոնք արդէն չափից զուրս անտանելի էին։ Նորան—ամրոցի ապագայ տիրօջը ներս չեն թողնում զարդարած տանը և ստիպումեն խոհանոցով մտնել։

՚Ի հարկէ, մեծ յիմարութիւն էր Գէորգի կողմից այդպէս ցեխոտ մտնել ուզելը զարդարած տան մէջ,

բայց չպէտքէ զարմանալ դորա վերայ, որովհետեւ երիկի յանդգնութիւնն էր, որ նորա կամակորութիւնը այս աստիճան դրգուց: Նա երկար շմտածելով՝ բռնցքի հարուածով կուրեց ապակին, դուռը բացեց ու մտաւ նենեակը: Գէորգը դոհ մնալով իւր այս արարմունքից և ոչինչ ուշադրութիւն չդարձնելով եղօրը, հանդիստ կերպով սկսեց մաքրել հրացանը: Երիկը թռցնելով ձեռքի մօտ դրած մորակը՝ մօսեցաւ նոր մն ու գոչեց:

— Դու ի՞նչպէս համարձակեցար ապակին կոտրել: Իսկոյն մայրիկին կը գանգատուեմ: Խնչո՞ւ ես հրացանը ներս բերում այստեղ, մինչդեռ մայրիկը շատ վախումէ զորանից:

Այս ասելով նա մարակը զարկեց Գէորգի դէմքին: Գէորգը դեղնեց. մարակի հետքը պայծառ շերտի ձեռվով կրոշմուեցաւ նորա այտի վերայ. Նա աջ ձեռքում բռնած հրացանի ձողը հասցրեց եղօրը զլսին: Սրիւնը սկսաւ վազել դէմքի և այնուեղից շապիկի սպիտակ օձիքի վերայ: Գէորգը ահշեց վըայ ընկաւ նորան և արդէն կուենումէր օգնութեան կանչեաւ երբ արագ քայլերի ձայն լսուեց նորա ետեից և յետ դառնալով՝ տեսաւ խորթ մօրը:



ՊԼՈՒԽ Բ.

Խ Ե Ղ Ճ Ս Ա Ն Խ Ո Ն

Միստրիս Ռոլլէստօնը ծնկաչող վայր ընկաւ, զրկեց իւր սիրելու գլուխը և ասղնեգործ թաշկինակով սրբեց արիւնը նորա գունաթափ դէմքից: Նա ձայն ծպտուն չհանեց, այլ մի բարկացոտ հայեացք ձգեց իւր խորթ որդու վերայ և Գէորգին այնպէս թուաց, թէ մարդկային դէմքի վերայ ամենելին նկատած չէր այդ աստիճան չարութիւն ու ատելութիւն: Մի քանի վայրկենից յետոյ երիկը բացեց աչքերը և ցոյց տալու համար, թէ վերքը մահացու չէ, սկսեց բոլոր ուժով գոռալ ու հայհոյել Գէորգին. Նա պահանջումէր, որ մայրը նորան ծեծէր ու տանից գուրս անէր:

Ազմուկն ու աղաղակը վերջապէս միստէր Ռոլլէստօնի ականջին էլ հասան: Կարծահասակ ու հաստիկ պարոնը գնդակի պէս ցած գլորուեց երկայն կաղնեայ սանդիմատի վերայից և անակնկալ կերպով յայտնուեցաւ փոքրիկ խմբի մօտ նախասենեկում:

Միստէր Ռոլլէստօնը միմիայն նայեց կնօջ աչքերին և վճիռը արդէն պատրաստ էր: Նա ասք ու խիստ բնութիւն ունէր և բոպէական բարկութիւնից ընդունակէր մինչեւ անգամ անարդար ընթացք բռնելու: Նա բռունցքը բարձրացնելով վըայ ընկաւ Գէորգին.

— Գնա՞ քո սենեակդ ու աչքիս մի՛ երևալ գուշեց նա. դու չես կարող քեզանից լաւ ու խելօք մար-

Դրա հետ ապրել։ Վաղը այս տունը կը թողնես ու կվերադառնաս ուսուցիս մօտ. այս վերջին արձակուրդնէր, որ դու իմ տանս անցկացրիր։

Գէորգը փորձեց արդարանալ բայց անօդուտ էր. ոչ ոք չկար կռուի վկայ, իսկ կոտրած ապակին, միստէր Ռոլլէստոնի կարծիքով, նոր ապացոյց էր իւր որդու. անզուսապ ինաւալութեան։

Գէորգը կամաց կամաց խելքը գլխին հաւաքեց. նորա արիւնը խառնուում էր, երբ մտածումէր հօր անարդար վարմունքի մասին։ Գուցէ զղջար էլ միստէր Ռոլլէստոնը, եթէ նա իւր կոմքի տէրը լինէր։

Գէմ առ գէմ ճաշի նստելով ամրոցի ընդարձակ սեղանատանը, միստէր և միստրիս Ռոլլէստոնները հաղիւ թէ երկու երեք խօսք էին հանում բերանից։ Տանտէրը դաժան կերպով լուածէր և համարեա ոչինչ չէր ուսում։ Նորա գէմքը այնպիսի մութ արտայայտութիւն ունէր, կարծես թէ ինքն իւրեանից էլ բաւական չէր և արդէն զղջումէր որդու գէմ դործ դրած անչափ խստութիւնը։

Երեկոյին Ռոլլէստոնը Գէորգին դրեց, որ եթէ նա միւս օրը առաւօտեան կրայ իւր առանձնասենեակը և կխստանայ երբէք ոյժ գործ չդնել եղօր գէմ։ Թոյլտուութիւն կատանայ ծննդեանը ամրոց վերադառնալու. բայց թէ նա ամենից առաջ պէտքէ ներդութիւն խնդրէր միստրիս Ռոլլէստոնից։ Գէորգը նամակը կտոր կտոր արեց և հրաժարուեց խորթ—մօրից ներոգութիւն խնդրելուց. իսկ ինչ երիկին է վերաբերում, նա արդէն իւր արժանաւոր վարձը ստացել էր։ Գէորգը սկզբում սրտանց զղջաց իւր

արարմունքը. նա ամաշումէր, երբ մտածումէր, թէ ինքը այնպիս խիստ զարկեց այն տղային, որ չորս տարով խրեանից փոքր էր. բայց հօր անարդար վարմունքը կարծրացրեց նորա սիրալ և նորամում դարձեալ զարթեցան հպարտութիւն ու կամակորութիւնը։ Այս գէպքը բարւոյ և չարի մի զօրեղ կռիւ զմթեցրեց, որ համորեա միշտ նկատումէր Գէորգի հոգու մէջ։ Եթէ նորա հետ քաղզլութեամբ վարուեին, նա գուցէ իւր կողմից անշահասէր ու անձնուրաց գտնուէր, բայց երբ խորթ մօր արարմունքից համբերութիւնը կորցնելով՝ բարկութեամբ ու հպարտութեամբ սկսաւ վարուել, այն ժամանակ նա ան գիտակցաբար դիպչումէր նորա շահերին։

Գէորգ Ռոլլէստոնը միւս առաւօտ թողեց ամրոցը առանց հօրը մնաս բարեաւ ասելու։ Նա գնաց երկանիւ կառքով իւրեանց վաղեմի կառավար Ռէյլշեամի հետ։ Ոչ ոք նորան «բարի ձանապարհ» չասաց, ոչ ոք չուղեցեց նորան, բացի ծառայից, որ նորան առաւօտը վաղ նախաճաշ առուեց։ Անիւները պտտւում էին նախընթաց օրուայ անձրեկից գոյացած ցելիփ մէջ, իսկ պայծառ արել վայլումէր և թուզունները ուրախ ուրախ ձռուողումէին, մի ծառից միւսը թըռչուութիւնից Գէորգը անցնելով զալարուն ձանապարհներով։ Գէորգը անցնելով զալարուն ձանապարհներու շատ մտածումէր, թէ որ քան ծանրէ հայրական ըստ մողնելլը։ Ուիլեամը տեսնելով որ իւր մատան թողնելլը։ Ուիլեամը տեսնելով որ իւր մատաղահաս տէրը ալսուրէ ու կնճռոտած, աշխատումէր նորան զուարձացնել. նա խօսք գցեց որսի, յաջողակ որսորդութեան առաջին նշանների վերայ։ Խօսակցութեան նիւթի ընտրութիւնը յաջողակ չէր. մինչև

անդամմօտակայ դաշտից բարձրացող կաքաւների կամ ձանապարհին պատահած Փասիանի տեսքը՝ միմիայն շարժումէին Գէորգի բարկութիւնը. Հրապուրիչ գոյներով նկարագրելով նորա առաջ այն զուարձութիւններն ու ուրախութիւնները, որոնցից զրկուել էր նորա կայարանին հասան գնացքի ժամանակակետից մի քանի րոպէ առաջ. Գէորգը ցած թռաւ կառքից ու ոչնիչ քաղցր խօսք չասելով ծերունի ծառային, իսկոյն պատուիրեց նորան պայուսակը տալ և շտապով գնաց տոմանակ վերցնելու.:

Նրեք ժամին ճանշելով կօնդօնում, Գէորգը Բլէյտոնի տոմանակ վերցրեց, ուր և հասաւ նոյն երեկոյին: Միտու Ուայոֆիլդը արդէն ամրոցից առաւտօնեան ստացած հեռագրից տեղեկացել էր ամեն բան: Նա դեռ նոր էր հիւանդութիւնից առողջացել և Գէորգին շատ ծանր ու բազմահոգ ձեռով ընդունեց: Մեր հերոսը այնպէս էր տրամադրուած, որ աւելի կոպիտ սառնասրատութեամբ էր վերաբերում գէսի ամենը ամենայն բանի մէջ: Նա իւր տովորական պարապմունքն սկսեց և իւր դիւրագրգռութեան և հոգեկան վատ դրութեան շնորհի՝ իւրաքանչիւր օր աւելի ու աւելի կորցնումէր իւր դաստիարակի և չորս ընկերների յարգանքը:

Երիկը աննկատելի կերպով մեծ որդու տեղը բանեց իւր հօր տանը: Նա մօտ տասնեմի տարեկան էր և մեծ մասամբ հօր մօտ էր ժամանակին անցկացնում: Մի առաւտ միտու Ռոլլէստօնը որսի տարաւ նորան: Որսորդական փոքրիկ խմբակը կազմումէին՝ Ռոլլէստօնը, Երիկը, նորա դաստիարակը, որ ամրոցումէր ապրում:

*10/10
40932*
գլխաւոր որսորդը և երկու շուն՝ որոնցից մինը գեղեցիկ որսորդական շուն էր և կուլումէր անանխօս և առանձնապէս սիրելի էր Գէորգին: Ռոլլէստօնը չէ թէ միայն որսի տարաւ էրիկին, այլ և յանձնեց նրան Գէորգի հրացանը. նորան թոյլ տրուեցաւ երեք անգամ արձակել այն: Միտու Ռոլլէստօնը պատշգամիրը դուրս եկաւ իւր սիրելի որդուն ճանապարհ գցելու համար:

Որսորդները ճանապարհ ընկան: Երիկը հօր հետ միասին էր գնում, գլուխը հակարտութեամբ կախած և միանգամայն երջանիկ զգալով իւրեան, որ ձեռք էր բերել եղօր հրացանը: Երբ գաշոր մոռան, չներն առաջ վագեցին, այս և այն կողմը հոտոտելով և ազահութեամբ որով ործնելով: Երիկին խօսք էր տուած առաջին անգում հրացանը արձակել, երբ միայն թռչուն կերւար: Յանկարծ Առնիխօն կանգնեց, գլուխը շտապով աջ կողմը դարձրեց և թաթը բարձրացրեց: Սանխօց մի քանի քայլ հեռու մի ջրկ կաքտներ, թռուվ տասներկու հատ, թեւերը թափտարվ բարձրացան գիտնի վերայից: Երիկը Ռոլլէստօնի հրամանով արձակեց հրացանը. յուսակտուր ձայներ լսուեցան ու կաքտները բոլորը միասին վայր իջան մօտակայ դաշտի մերայ, իսկ իսկզ Սանխօն Երիկի հրացանի գնդակներից մէջքին, վզին ու ոտին վերքեր ստանալով՝ արխուշաղախ վայր ընկաւ գետին: Միտու Ռոլլէստօնը բարկութիւնից վիելքը գլմին չէր, որտորդները մրմնածումէին:

Որսը ընդհատուեց: Միտու Ռոլլէստօնը Երիկին պատուիրեց երկար ժամանակ այլ կես ձեռք չտալ

Հրացանին: Գուցէ հենց մատծեց, թէ այս տղան չի կարող իւրեան այնպիսի լաւ ընկեր լինել որսի ժամանակ, ինչպիսին Գէորգն էր:

Անիսօն կենդանի էր, բայց ծանր վիրաւորուած լինելով՝ երկար ժամանակ բանի պէտք չէր, այլ համբերում էր խոնարհութեամբ, որպիսի յատկութեամբ օրինակելի կարող էր լինել ինչպէս շատ մանուկներին, այնպէս և հասակաւոր մարդոց: Նա մի ժամանակ առողջացաւ, սակայն որսի համար պէտքական չէր:

Օրերն անցնուամեին. վըայ հասան նոյեմբերեան միգապատ օրերն ու ձմեռուայ երկայն գիշելները: Տարուայ այս ժամանակը ուսանող պատանիներին նախագուշակումէ Քրիստոսի ծննդեան արձակուրդի ու ուրախ աղմկալից խաղերի մօտենալը: Գէորգն անգամ, որ թէպէտե տանից ոչինչ լուր չունէր, ակամայ ուրախանումէր գորա մասին, զաղտնի յուսալով, որ ամեն բան կարողէ իւր կանոնաւոր ընթացքը ստանալ:

Բայց Ծննդից առաջ այլ ևս երկու դէպք պատահեցին, որոնք նորա վիճակի վերայ մեծ ազդեցութիւն ունեցան: Մի երեկոյ նոյեմբերի կեսերքին սպասաւորը և միստրիս Ռօլէստօնը կանչուեցան պարսի առանձնասենեակը, որպէս զի նորա արած կտակի յաւելուածին ստորագրեն նոքա էլ իրեւ վկաներ: Թէ ինչ էր գրուած այն յաւելուածի մէջ, նոքա ևս չղիսեին, բայց սպասաւորը պարոնի դէմքին նայելով՝ այն եզրակացութեան հասաւ, որ այս գործը միտեր Գէորգի համար ոչինչ լաւ բան չէր նախադուշակում: Միւս դէպքը, — բայց սորա մասին առաջիւոյ դիմում կը խօսինք:

Գլուխ գ.

Կ Ե Ա Ն Ք Ե Ւ Մ Ա Հ:

Դեկաեմբերի պարզ ու թարմ առաւօտներից մէկն էր: Ախոռապետներն ու ուղեկից ծառաները (չափար) անակնիալ հրաման սացան, որ նոր կառք պատրաստեն: Ռօլէստօնը՝ նախաձաշելուց յետոյ նստեց նորանում և մտաւ ամրոցի պարիսպը: Այս զօսանքի նպատակը աղուէս որսան էր: Միստրիս Ռօլէստօնը երբէք որսին չէր մասնակցում, բայց սիրումէր նորան հեռությունը: Այդ տարին նա գեռառաջին անգամնէր ներկայ գտնւում որսին, ուր անշուշտ պիտի հաւաքուէին տեղական բոլոր երեւելի մարդիկը:

Միստրիս Ռօլէստօնը իւր ամեւսնու օգնութեամբ բարձրացաւ վերեկի նստարանը և քառաձի գեղեցիկ կառքը սկսաւ առաջ վագել: Ճանապարհին ամեն տեղ երեւումէին կարմրագեստ որսորդներ, որոնք շտագումէին հաւաքուելու տեղը: Կարծ միջոց այնտեղ մնալուց յետոյ՝ միստրիս Ռօլէստօնը տուն գաւանալու ցանկութիւն յայտնեց: Ծառաները նստեցան կառքի ետևի կողմը ու մեր որսորդները ճանապարհ ընկան դէպի տուն: Բայց մի փոքր տարածութիւն անցան թէ չէ, սկսաւ անձրեւել: Միստրիս Ռօլէստօնը շտագով նստեց կառքի մէջ: Կառքի զլիին միայնակ մնալով Ռօլէստօնը՝ կառավարումէր ձիաներին և կառքը առաջ էր գնում: Հողմը տիսուր կերպով փշու-

մէր մերկ ծառերի միջով՝ խաւար մտածմունքներ
բերելով իւր հետ։ Արդեօք միստէր Ռոլլէստօնը այս
միջոցին չյիշեց Գէորգին։ Նորա մոքովը չանցաւ,
թէ որչափ մեծ զուպիճութիւն կպատճառէր այն
տղային այսպիսի զբոսանքը։ Այսպէս թէ այնպէս, նա
ակամայ ինքն իրան ասումէր։

— Այո՛, սա անարդարութիւն է։ Ես չափիցն
անցկացը։ բայց սխալս կ'ուզզեմ։

Այդ միջոցին կառքը սահումէր բլրի վերայից.
ձիաները տաքացել էին և քրաինքը թափումէր նոցա
վրայից։ Միստէր Ռոլլէստօնը նկատեց, որ առջեկի
ձիաներից մինը կաղումէ. սմբակը հօ չե՞ ծակուել
կամ գուցէ նաևն է կորցրել մոտածեց նա։ Եւ գուրս
թեքուեց կառքի միջեց ու տուաջ ձգուեցաւ՝ աւելի
մօտից տեսնելու թէ բանն ինչումնէ։ Յանկարծ մօտա-
կայ կաղնուց մի չոր ճիւղ կոտրուեցաւ, նորան քա-
մու ուժով առաջ ձգեց ձիու գլխների մօտ. միւսները
երկիւզեց կողքն անցան. և կառքը թեքուեց կողքի
վերայ. մի վայրկեան չանցաւ՝ ամեն բան կարդի ըն-
կաւ։ Միմիայն այդ վայրկենին միստէր Ռոլլէստօնը
հաւասարակշռութիւնը կորցնելով՝ վայր ընկաւ ձիու
առաջ և շուտով իւրեան զգաց ձիու սմբակների տակ։
Կատաղի ձիաները անսանձ մնալով՝ զարհուրելի արա-
գութեամբ սկսան առաջ վազել։

Միստէրիս Ռոլլէստօնը խիստ վախենալով՝ պա-
տուհանի ասպակին վայր ընողեց և բարձր ձայնով
սկսաւ օգնութեան կանչել մարդուն, ենթա-
զրելով, որ նա առաջուայ պէս վերեկի նատարանի
վերայ է նստած։ Բայց ի զուր, այդ աղաղակներն

ու աղաւանքները չէին հասնում նորա ականջին։
Զիաները վազումէին ձանապարհի ուղղութեամբ.
կառքը մի տեսակ հրաշքով դեռ ևս ամբողջ էր։
Միստէրիս Ռոլլէստօնը այնպէս էր կառքի երթեմն այս
ու երթեմն այն պատին զարկւում, ինչպէս թուջունը
վանդակում, մինչդեռ երկու ծառաները բոլոր ուժը
գործէին դնում իւրեանց տեղը պինդ նստելու հա-
մար։ Վերջապէս գիւղին հասնելով՝ կապը քանդուեց
և առջեկի երկու ձիաները բաժանուեցան կառքից։
իսկ ետեւ ձիաներին կանգնացրեց պանդոկապետ
ջան Մարտինը։

Միստէրիս Ռոլլէստօնին հիւրանոց տարան։ Զօն
Մարտինը Ռոլլէստօնի ծառաներով ու գիւղացի երի-
տասարդներով գնաց որոնելու Ռոլլէստօնին։ ձանա-
պարհին ամրոցից հեռու գտան նորա մարմինը։
զգուշութեամբ վերցրին նորան ցեխից ու շալակեցին
այն պատկառելի երկիւզեց զգացմունքով, որ միշտ
մահնէ պատճառում։

ԳԼՈՒԽ Դ.

ՅՈՒ Լ Ի Ս Կ Ե Ս Ո Ր

Յիշած անցքերի հետեւալ օրը Գէորգը քաղա-
քից գուրս գնաց զբունչը և ուղևորուեց «Սատանի
փոս» անուանած փոքրիկ զառիվայրի կողմը, որտեղից
ձգւումէր մերձակայ հօվիտը։ Օդը շատ սառն էր, որի
ապացոյց կարողէր լինել Գէորգի կարմրած քիթը։
Բոլոր շըջակայքը խիտ մառախնուղով էր պատած և

ամսը բոլորովին աև գունով էր ներկուած։ Գէորգը երկու ժամին դուրս եկաւ տանից և Սատանի գրի մօտ գտնուած հիւրանոցին հազիւ երեկոյեան հասաւ։ Զեռքերը զրպանները դնելով ու տիրութեամբ գլուխը կախելով, նա անցաւ հիւրանոցից և մոտածելով նայումէր հովանին, որ սկանումէր նորա ոտների մօտ։

Խեղձ տղան հօր մասին էր մոտածում։ Նա ամը լոցը թողնելուց յետոյ ոչ մի տող գրութիւն չէր ստացել այնտեղց։ Ծնունդն արդէն մօտ էր, իսկ նա դեռ ևս չգիտէր, թէ կարողէ՞ր արդեօք այս արձակուրդն ևս տանն անցկացնել։

Յանկարծ մի կողմից վէճի ձայներ լսուեցան։ Գէորգը մի քանի սաժէն ցած իջաւ և զարմանքով տեսաւ զառիվայրի մի փոքրիկ տափարակի վերայ հետեւեալ զարհուրելի ու հետաքրքիր տեսարանը։

Երկու մարդ կրպիտ ու ցեխոտ, թաւշեայ ու գոյնզգոյն ասուէ շորերով, կռւումէին մի նեղրի հետ, որը արտաքին տեսքով ու ձայնից նոցա յաղթող հակառակորդ էր թւում։ Նեղրը հազնուած էր վերջին նորութեան զգեստ, արինը նորա ջարդած քթից հոսելով՝ իջնումէր փողապատի վերայ։

— Այ, այ, այ, դոչեց նա, այժմ ի՞նչ կասի ինձ իմ բարի տէրս։

Եւ դուրս խլուելով իւր հակառակորդներից մէկի ձեռքից, պատրաստուեց յարձուկուելու միւսի վերայ, որ տեկի ցեխոտ ու զզուելի էր։ Նեղրը ուզելով իւր թշնամու ոտներին ծեծել, առաջ թեքեց նորա գանգրահուր գլուխը։ Բայց այն սրիկան իսկոյն դուրս պիտօւ նորա ձեռքից և հարուածը դիպաւ

Գէորգին, որը հենց այդ միջոցին մօտեցել էր նոցա։ Գէորգը յետ քաշուեց, բայց վայր չընկաւ, մինչդեռ նեղրը ընկաւ նորա ոտների մօտ, սա սկզբում Գէորգին էլ մի նոր հակառակորդ կարծեց։ Բայց նայելով այն երիտասարդի գէմքին, որ քաղցրութեամբ նայումէր իւրեան, շատապով գետնից բարձրանալով ծունկ չոգեց ու աղիովորմ ձայնով ասաց նորան։

— Խզացէք, պարոն, օգնեցէք ինձ, աղատեցէք խզացուկիս, տէր։ Այս աւազակները կողոպաւեցին ինձ։ Ես սրիկաններից չեմ, տէր, անունս էլ Յուլիս Կեսարէ։

— Ձեզ կողոպաւեցի՞ն, հարցրեց Գէորգը։

— Սոքա իմ ժամացոյցս գողացան, տէր, ոսկէ ժամացոյցս։

Գէորգը ամենեւին երկուա չէր։ Պառնալով գէպի յափշտակոյները՝ նա հպարտութեամբ նայեց նոցա ու հրամայական ձայնով ասաց։

— Տուէք այս նեղրին իւր ժամացոյցը։

— Հապա, Բել ծաղրելով ասաց նոցանից մինը, սորան էլ մի լու ջարդենք։

— Այ, այ, այ, գոչեց Յուլիսս Կեսարը, թողէք գոցա, պարոն։ Գոքա շատ ուժեղ աւազակներ ևն և շատ թունդ են ծեծում։

— Մենք էլ երկու ենք, սոքա էլ պատասխան։ Նեց Գէորգը, եթէ դու շէկին բռնես, ես կաշխատեմ այ սորա ջանը դրստել։

Յուլիսս Կեսարը այլ ևս խօսքը չկրկնել առւեց։ Նա գարձեալ գլուխն առաջ տանելով՝ ուժգնութեամբ յարձակուեց իւր թշնամու վերայ։ Գէորգն էլ իւր կողմից պատրաստուեց իւր սցել չափելու հակառակողմից պատրաստուեց իւր սցել չափելու հակառա-

կորդի վերայ, յոյսը դնելով իւր բռնցքով կուռելու ձաշակի վերայ: Տեղի փոքրութիւնը թոյլ չտուեց Գէ-որդին ձեռնամարտի կանոններին իւստ հետևելու, բայց չնայելով դորան, յաջողութիւնը գեռ նորա կողմն էր. բացի ծնկների ցաւալուց, նա գեռ ևս քաջ էր զգում իւրեան, մինչդեռ նորա հակառաւ կորդի ամբողջ գէմքը ուռուցքներով ու վերքերով լիքնէր: Յայտնի չէ որքան կերկարէր կոիւր, եթէ նոր անձերի երեալը չ'ատիպէր կոռողներին կանգ առնել:

Կուին ընդհատուեց. Գէորդի հակառակորդը զրպանից հանեց Յուլիոս Կեսարի ժամացոյցը և վայր ձգելով գետին, անսամօթ լըբութեամբ աղաղակեց:

— Եյ, դու, նեզի, նայիր, ժամացոյցը քո դրսպանից վայր ընկաւ:

Գէորդը բառականին սառնութեամբ լսեց պանդոկապետի զովեստները, որ նորա արարքը համարեա հերոսական քաջագործութիւն էր համարում և հարկաւոր էր համարում աւաղակներին հալածել սակայն Գէորդը ընդդիմացաւ այս բանի:

Երբ ները մի փոքր ուշքի եկաւ, ՚ի նշան շնորհակալութեան ծունկ չոդեց Գէորդի առաջ:

— Սակայնինչ կկարծի իմ բարի աէրս, կրկնու մէր նա անդադար:

Երեսում էր, որ Յուլիոս Կեսարը ծառայումէր Բրէյտօնում ապրով մի ծեր ու հիւանդ զօրապետի մօտ: Զօրապետ Մակ-Գուզալը կամեցել էր ներկայ լինել որսորդական ժողովին, որ այդ օրերում պէաքէ լինէր «Սատանի զբի» մօտ: Թոյլ առողջութեան

տէր լինելով՝ նա ուղարկել էր նեզին ձանապարհ ները տեսնելու և իմանալու թէ, կարո՞լէ նա օրինաւոր նախաճաշ գոմնել հիւրանոցում:

Գէորդը ընդհատեց նեզի խօսակցութիւնը և զլսարկը ձակասից վեր քաշելով՝ ձանապարհ ընկաւ դէպի տուն: Անցնելով մի փոքր տեղ՝ նա իւր ետելից սարսափելի խռմփոց լսեց և ակամայ յետ նայեց տեմնելու թէ վայրի զաղան հօ չի դալիս իւր ետելից: Սա այն նեզին էր, որին այնպէս անձնագոհութեամբ օգնեց ձախորդութեան ժամանակ:

— Մեզաւորեմ, տէր, թոյլ կտաք որ ձեզ հասցնեմ մինչեւ Բրէյտօն: Խօսք չկայ, որ երկուսով գնալը աւելի անվտանգէ, մանաւանդ որ գուցէ գուք կբարեհածէք իմ տիրոջն հետ տեսնուիլ: Այն ժամանակ ես երջանիկ կլինէի, տէ՛ր:

Ճանապարհին նեզը գարձեալ անդադար խօսումէր. երբեմն գովում էր Գէորդին, երբեմն էլ իւր անցածը պատմում:

Քաղաք մտնելիս՝ Գէորդը բաժանուեց իւր սեամբիթ բարեկամից ու դարձաւ տուն:

Հաղեւ թէ զանդահարեց և ահա շտապով դոները բացուեցան ու նորա առաջ երեցաւ նորա դաստիարակը մի հեռագիր էլ ձեռքին:

ԳԼՈՒԽ Ե.

ՆՈՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Միստէր Ռեյխմիլլը տխուր ու ծանր կերպով

ընդունեց Գէորգին: Նա բռնեց սորտ ձեռքը ու տաշ-
րաւ իւր առանձնասենեակը. ինչպէս և իցէ պատ-
րաստելով նորան մեզ արդէն յայտնի սարսափելի
լուրը հաղորդելու համար, նա ցոյց տուեց
հեռագիրը: Միստէր Ուայտֆիլդը բարի ու զգայուն
սիրտ ունէր և ծանր էր նորա համար տղայի սար-
սափելի ցաւը տեսնելը: Հեռագիրը միստրիս Ուոլէս-
տօնի անունով չէր և մինչեւ տնդամ նորա հրամա-
նովն էլ չէր ուղարկուած. միայն այն եղերական անց-
քից մի քանի օր անցնելուց յետոյ՝ երիկի դաստի-
արակի մէջ ծագել էր միաք, որ անդրանիկ որդին
ևս պիտի իմանայ իւր հօր յանկարծական մահը:
Գէորգը կարիք չզգաց նոյն գիշերն և եթ ծանա-
պարհ ընկնել դէպի տուն. վճռեցին որ հետեւեալ
առաւօտը ուղւորուի: Խեղջ նէորդ, որքան ցաւ էր
զգում նորա սիրաը, երբ նոյն գիշերը նա նստած էր
փոքրիկ մութ ննջարանում և ձեռքը լուսամտի
առաջնատախտակի վերայ դրած՝ անշարժ նայումէր
մութ երինքին: Առուինը աղօտ էր լուսաւորում, խիստ
քամին մղումէր սև ամպերը և ցաւագին փշումէր պա-
տուհանի առջեկից: Նա մասձումէր իւր հօր և նորա
վերջին բարկալից խօսքերի վերայ «էլ ամենեւին աչ-
քիս չերեա», որոնք գեռ այժմ էլ հնչու:» ին նորա
ականջին և դէմքը ձեռքերի մէջ ծածկելով, Գէորգը
հեկեկումէր ինչպէս մի մասուկ: Յետոյ աշխատեց
մեկնել թէ ի՞նչպէս արդեօք կարող էր այդ դժբաղ-
տութիւնը պատահել. հեռագրում միայն ասուած էր
թէ «կառքի վերնաթռուից վայր ընկնելիս մեռաւ:»
Նորան տեսութիւն գնացին միստէր և միստրիս

Ուայտֆիլդները, որպէս զի կարողացածին չափ միա-
թարեն: Սկզբում նոքա այնպէս շփոթուածէին հե-
ռագրի զարհուրելի բովանդակութիւնից, որ ոչնչ
նկատողութիւն չարին նորա այդպիսի ուշ զքօսանքի
համար: Բայց երբ միստրիս Ուայտֆիլդը մնմ վառեց
նորա ննջարանում և մօտը նստեց, Գէորգի դէմքի
վերայ կապտած տեղեր ու բծեր նկատեց: Այդ ժա-
մանակ Գէորգը համառօտապէս պատմեց, թէ ինչպէս
կռուեց Յուլիսս Կեսարին պաշտպանելու համար:
Չնայելով թէ այդ բոպէին որքան ցաւ էր զգում
Գէորգը, սակայն և այնպէս նեզրի յիշատակը մի
ժողոտ արտադրեց նորա գունատ դէմքի վերայ: Բարի
կինը ուրախանալով նորա տիսուր մոռածմունքները
ցլուելու վերայ, սկսեց հալցուփորձ անել նոյն եղե-
լութեան մասին և գովիել նորա քաջութիւնը, թէ-
պէտեւ ուրիշ ժամանակ անստեղի կհամարէր նորա
խառնուիլը ուրիշի մէջ: Սակայն Գէորգը շու-
տով գարձեալ սկսեց իւրեան պատահած թշուառու-
թեան վերայ խօսել աշխատումէր հաւատուցնել նո-
րան իւր բոլոր ընտանեկան ցաւերն ու անյաջողու-
թիւնները և այն տանջող ցաւը, որ զգումէր՝ իւր
հօր վերջին խիստ խօսքերի վերայ մտածելիս:

— Ես հաւատացածեմ, որ հայրս վաղուց արդէն
կներէր ինձ, հառաջելով ասաց խեղջ պատանին, և թէ
խորթ մօրս ազգեցութիւնը չլինէր: Ո՛չ, նաէլ է
ատում ինձ, երիկն էլ:

Միստրիս Ուայտֆիլդը երկար ժամանակ նստած
էր Գէորգի ննջարանում: Նորան համոցեց որ մի փոքր
քան ուտի ու զինի խմի: Գէորգը զրկեց նորան և

շնորհակալութիւն արաւ նորս բարութեան ու քաղցրութեան համար: Միստրիս Ռւայտֆիլդը տուն դառնալով իւր մարդուն ասաց:

— Մինչև երեկ երեկոյ ես չեի սիրում Գէորգ Ռոլլէստօնին. նա ինձ հպարա ու գոռազ էր թւում: Այժմ ո՞րքան ցաւումեմ նորա վերայ. խեղճը խիստ ցաւումէր հօր վերայ:

Միւս առաւօտ Գէորգը կարծես թէ զբկուել էր իւր բարի ու քաղցրիկ տեսքից. առաւօտը միստէր Ռւայտֆիլդի հետ նախաճաշելիս նա խիստ գունաթափ էր ու լուռ: Խնն ժամկն կառքը նստեց ու գնաց իջևանը: Նորա բաղդից այն վագօնը, որով պիտի Լօնդօն գնար, ճանապարհորդներով լիքն էր: Լօնդօնը ծանը տպաւորութիւն ունեցաւ նորա վերայ. խիստ ձիւնէր գալիս ու փողոցները դատարկ էին: Նա արդէն մի իջևանից միւսը անցաւ, և խիստ բաւական զգաց իւրեան, երբ վերջապէս յաջողեց առաջին կառքի դատարկ վագօնը նստել:

Ննացքը շարժուեց: Գէորգը պատուհանը բացեց և առանձին ախորժանքով թարմ օդ էր շնչում: Յանկարծ նոյն վագօնի միւս կէսը տանող դռան ալպակին մէկը բաղխեց. նա շուտով յետ նայեց և ապակու միջեց տեսաւ մի կորիկ դէմք, կոլոր քթով և շագանակագոյն կորիկ աչքերով որոնք անթարթ իւրեան էին նոյնում: Դուռը բացուեց և այնտեղ մտաւ համարեա՛ Գէորգի հաստկով մի տղայ:

— Յոյս ունիմ, որ չեմ խանգարի ձեզ, Գէորգին դաւնալով ասաց նորեկը: — Ասացէք, ինդրեմ, որ և իցէ փշանք հօ չո՞նիք. մի քանի ճանձ էլ բաւա-

կան էր, ստկայն այս եղանակին ճանձ ո՞վ է տուել: Գէորգը ամենելին կատակների ախորժակ չուներ և ուզումէր արդէն կծու պատասխան տալ այն յանդուզն ուղեկցին, երբ տղան ձեռքերը բարձրացրեց և ամենածաղրաշարժ ու խրոխտ ձեռվ ասաց.

— Նս ինձ համար չեմ խնդրում, այլ այս խեղճ մանկան համար, որ խիստ առվածէ:

Ույս որ ասաց նա ցոյց տուեց բերանին թուղթ ծածկած մի շեշտ որի մէջը կար մի մեծ ու փքուած գորտ:

— Ուժ, ասաց Գէորգը և զզուելով երեսը յետ դարձրեց:

— Սա Թովմաս—գորանէ, առանց շփոթուելու շարունակեց տղան. որ այդպէս անուանումէ ՚ի պատիւ ձեր ամենախոնարհ ծառայ Թովմաս Բարտօնի:

Նա թուղթը վերցրեց վրայից և շեշտ շուռ տուեց իւր ձեռքի պիտի մէջ. գորտը աւելի փքուեց և նորա աչքերը սկսան փայլել թանկագին ակների պէս: Գէորգը չկարողացաւ իւր անբաւականութիւնն ու նեղութիւնը թագինել երբ ձանձրացնող տղան մօտեցրեց նորա աչքերին այն ձեռքը, որի վերայ բազմածէր զզուելի կենդանին:

— Ցաւումեմ, ասաց Թովմասը հառաջելով. գուք, երեւումէ, բնագէտ չէք: Մեծ վայելչութիւն է ինձ համար պարզ գիշերներին այս կենդանիներին որոնելը: Նա տանը չորս հատ օձ ունիմ, մի քանի սալամանդր (մողէս) ու դորտեր և բազմաթիւ տաքարիւն կենդանիներ: Նա Զէնէտ անունով կապիկ էլ ձեռք կենդանիներ: Նա Զէնէտ անունով կապիկ էլ ձեռք բերիւ: Մի տարուց յետոյ կամ տւելի ուշ Հնդկաստան

պէտքէ գնամ։ այն ժամանակ ստիպուած կը լինեմ սիրածներիցս մեծ մասը թողնել։ Յաւս այնէ, որ քոյլս հրաժարումէ դորտերի ու օձերի խնամստաւութիւնը ստանձնելուց, այնպէս որ ես ստիպուած մի դիւզացի տղայ պիտի վարձեմ, որ նոցա խնամէ, երբ ես ուսումնարան կլինեմ։

Գէորգը ամենեին չէր խօսում Շատախօս Թովմասը մի կողմ դրեց իւր դորտը ու ուշադրութեամբ նայելով ընկերոջ՝ վերջապէս հարցրեց.

— Ի՞նչ գունատ էք, ի՞նչ է պատահել ձեզ։ Հիւանդ հօ չէք։

Գէորգն սկսեց լալ ու ցածր ձայնով ասաց.

— Ես առողջ եմ։ բայց հօրս մահուան լուրը սուցայ:

Թովմաս Բարտօնի կարմլու դէմքը աւելի ևս կարմիրեց։

— Ներեցէք ինձ։ Եթէ ես այդ իմանայի, ամենեին ձեզ ձանձրութիւն չէի պատճառի։ Այ տես, միշտ այսպիսի անցածոլութիւնների եմ հանդիպում ես։

Եւ մեր նոր ծանօթը շտապով հեռացաւ և մոտաւ իւր սենեակը ու դուռն էլ յետ դրեց։

— Է՛հ, ոչինչ, մրմնջաց Գէորգը և լուսամւաը դոցելով յետ նատեց անկիւնի մօտ։

Գնացքը մօտեցաւ լուսաւորուած իշեանին. հողաբրակի վերայ այստեղ այնտեղ փայլումէին պատանիների ուրախ դէմքերը, որոնք դէպի տուն էին վագում Ծննդեան առնի պատճառով. նոցա խօսակցութեան ձայները համումէին Գէորգի ականջին։

Խեղճ տղան ծանր ախ քաշեց, երբ մտածեց որ ինքն ևս տունէ գնում։ Նա իւրեան խիստ յոզնած էր զգում։ երեկուան հարուածները ուշքի բերին նորան։ Մի ուրախ ժամ էլ էր մնացել նորան ամբոցը հասնելուց առաջ։ Գէորգը զարհուրելով մտաբերեց այն գիշերը, որ պիտի անցկացնէր միւնյն յարկի տակ, ուր որ իւր հայրնէր մեռել։ Ոչինչ բան չէր ընդհատում նորա տխուր մտածմունքները. վագոնի չափաւոր շարժովութիւնը կամաց կամաց օրորումէր խեղճ Գէորգին, որը աննկատելի կերպով մտախոր քնի մէջ։

ԳԼՈՒԽ Օ.

Հ Ր Դ Ե Հ

Մօտ կէս ժամից յետ Թովմաս Բարտօնը զարթեցրեց Գէորգին։

— Ինձ համար ցաւ է, ձայնեց նա, որ ձեզ անհանգիստ եմ անում, բայց բանն այնպէս է, որ եթէ ժամանակին այստեղեց դուրս չքաշուենք՝ բաններս բուրդ կլինի։

Գէորգը աշքերը բացեց. վագոնը ծխով լիքնէր։ Թովմասը շտապով պատուհանը բացեց, որ թարմ օդ մտնի։ Այս կողմ, այն կողմ նայելով երիտասարդները տեսան, որ ծուխը այն նատարանի տակից էր դուրս գալիս, որի հանդէպը Գէորգնէր նստած. նոքա լուսամտից դուրս նայեցին և տեսան լիքը ծուխ այն վաղօնի դաներում, որ ասպրանքով լիքնէր. աւելի

Հասւոնական էր, որ հրդեհը այնտեղ պիտի լինէր, որտեղից էլ կրակը մօտեցել էր նոցա վազօնի ներքին մասնում: Ի՞նչ պէտք էր անել:

— Այ ես ձեզ ինչ կասեմ, վճռաբար ասաց Թովմասը, եթէ երկաթուղու վերակացուին իմաց չունք՝ մենք այստեղ կորած ենք: Փոքր ինչ տաքանալը վատ չէ, սակայն հանաք բան չէ, եթէ պատահի որ մենք այստեղ կենդանի այրուենք:

Եւ լուսամախց գուրս նայելով՝ նա բոլոր ուժով գոռաց: Գէորգն էլ հետեւց նորա օրինակին: Այսպէս նոքա փոքր միջոց գորգոռումէին որքան, որ ոյժ ունին: Բայց ովնչ հետեւանք չունեցաւ այս. նոցա ոչք չէր լսում, փորձեցին գոները բանալ, բայց երկուսն ևս բանալով փակած էին: Մեր տղայքը լուռ ու մունջ նայում էին միմեանց շփոթուած ու խռոված: Ծուխը հետպհետէ խանում էր, նոցա այնպէս էր թւում, իբր թէ փայտը այրուելով ճայթում էր:

— Մեզ մի բան է մնում անելու, առաց Թովմասը. վագնիցը առանց գուռը բանալու մի կերպ գուրս դալ և որքան շուտ, այնքան լաւ:

Երկար չմտածելով՝ նա արգեն ոտի մեկը դրեց նստարանի վերայ և պատրաստ էր լուսամախց դռւչելու, սակայն Գէորգը կանգնացրեց.

— Ես ձեզանից մեծ եմ ու ուժեղ, ասաց նա: Գուշը մի քանի վայրկեան էլ այստեղ մնացէք, մինչև ես մի կերպով կհասնեմ մեքենայի մօտ և կհաղորդեմ վերակացուին: Մեքենային շատ մօտ ենք: Ես այն պատուանդաների վերայով կերծամ, որոնք ձգւումեն վագնների ուղղութեամբ. քանի անգամ

տեսել եմ վերակացուներին և պահապան ծառաներին նոյնն անելիս:

Թովմասը մի րոպէ մոտածեց ու ասաց.

— Վաս չէ ձեր մոտածած հնարքը, սակայն գուք միայնսկ չպիտի գնաք ամենելին: Մի րոպէ բռնեցէք իմ օձիքս, մինչև որ ես ոտքերս ամուր կդնեմ և ձայն կտամ:

Գէորգը ձեռքով պինդ բռնեց Թովմասի օձիքը և լուսամախց վայր թողեց նորան պատուանդանի վերայ. ձիւնը կուրացրեց նորան և հազիւ կարողացաւ ոտի կանգնել. նա մի րոպէում ամուր բռնեց լուսամախի փայտեայ շրջանակը, յետոյ զգուշութեամբ անցաւ հետեւեալ վագնի մօտ: Այդ միջոցին Գէորգն էլ իջաւ. նորա երկայն ոտները օդումը շարժումէին՝ մինչև որ կարողացաւ գտնել պատուանդանը. նա էլ ձեռքով բռնեց լուսամախի շրջանակը և երկուսը միասին սկսան անցնել այն վտանգաւոր ճանապարհով:

Սառը խիստ քամին թափանցումէր համարեա նոցա ոսկրների մէջ, գնացքի արագ շարժողութիւնից նոցա շոնչը կտրւում էր: Այն վագնում գտնուողները, որոց մօտից ինչպէս ստուեր սահումէին մեր հերոսները, փաթաթած հանգիստ նստածէին իւրաքանչեւրն իւր անկիւնում, չկամկածելով թէ վտանգէ մօտենում իւրեանց: Այսպիսով տղայքը կամաց կամաց հասան մեքենային, ուր նոցա նկատեցին մեքենավարը և հնոցավառը. Վերջինս զարմանքից աչքերը չուելով և բերանը բանալով՝ օգնեց նոցա մեքենայի փոքրիկ տախտակամածը բարձրանալու:

— Տէր իմ Աստուած, ի՞նչպէս եղաւ, որ դուք
այստեղ ընկաք:

Նոգեկառքի ձայնը միանգամայն խլացրեց ամենին
և Գէորգը մեծ դժուարութեամբ կարողացաւ իւ-
րեանց գալու պատճառը բացատրել: Հրդեհը չափա-
վանց զարմացրեց և վախեցրեց մեքենավարին:

— Մինչև իջևանը մի մղօնից աւելի չէ մնացել
ասաց նա: Այնտեղ կիմանանք թէ ինչ է այդ: Ժա-
մանակից առաջ կանգնեցնել երկաթուղին՝ միանգա-
մայն անհնար է:

Մեր երկու ճանապարհորդները այնտեղ մնա-
ցին: Մեքենավարը սկսեց գնացքը կառավարել իսկ
հնոցավառը ածուխ ածել. չորմն էլ կամակրու-
թեամբ լռածէին: Այնտեղ շատ դժուար էր խօսելն
ու լսելը:

Թովմասը վտանգի ըոսէին անգամ չէր մոռացել
իւր դորտին: Վագօնից դուրս դալիս նա նորան շշեցը
հանել էր ու դրել գրապանը և այժմ, երբ Գէորգի հետ
կանգնած էր տախտակամածի վերայ՝ մեծ հիացումով
լըս աշխարհ հանեց նորան: Նորան նստեցրեց իւր
ուսին և Գէորգին նշանացի/ հրաւիրելով ուշադրու-
թիւն գարձնելու կինդանու անսովոր հասկացողու-
թեանը, հրամայեց «Թովմասին» զքօնել իւր ձեռքի
վերայ: Գորտը փքեց իւր սկարարտ մարմինը և կա-
մաց կամաց սկսաւ առաջ գնալ. յանկարծ հողմի
ուժգին հոսանքը տնակնկալ կերպով վայր ձգեց նո-
րան տղայի ձեռքից և դորտը անյայտացաւ: Աւաղ,
նա յաւիտեան կորաւ:

Թովմասը գեռ ևս սուգ չարած իւր կարստի հա-

մար, երկաթուղին արդէն մօտեցաւ իջևանին: Աւ ու
խիտ ծուխ էր դուրս դալիս ապլանքի վագօնից և
երբ գուները բացին, այնտեղից բոց դուրս եկաւ. նո-
րան հարկան վագօնը, որի մէջ սկզբում երկու տը-
ղայքն էին նստած, նոյնպէս սաստիկ ծխումէր: Բա-
րեբաղտաբար մի քանի ըոսէի մէջ կրակը հանգըրին.
Երկու վասառած վագօնները միւներից հեռացրին և
տասն ըոսէ միջոցից յետոյ՝ երկաթուղին առաջ գնաց:
Հրդեհի պատճառը անյայտ մնաց:

Այս փոքրիկ գէպքը, ընդհանուր վտանգը և
ակամայ յարգանքի զգացմանքը դէպի երկու մստա-
ղահաների ցուցած քաջութիւնն ու անտարբերու-
թիւնը՝ նոցա մօտեցրեց միմեանց և Գէորգը բացուեց
թովմասի մօտ: Ֆարրինգտոն հանելով՝ երևաց, որ նոքա
երկուն էլ միւնեյն ուղղութեամբ պիտի գնային:
Թովմաս Բարտօնի հայրը մօտակայքում թէկտօր (*) էր
և երեք—չորս մղոն Ռոլէստոնների ամրոցից հեռուեկը
կենում: Տղայքը բարեկամաբար բաժանուեցան մի-
մեանցից և խօսք տուին միմեանց շարունակելու իւ-
րեանց ծանօթութիւնը: Այս բարեկամութիւնը, որ
այնպէս օտարոտի կերպով ծագեցաւ, Գէորգի վիճակի
վերայ, ինչպէս յետոյ կտեսնենք, մեծ ազգեցութիւն
ունեցաւ: Թովմաս Բարտօնը կառքով գնաց տուն:
Այս ինչ Գէորգը իջևանում մնաց, որ իւր ծանրոցը

*) Վիճակաւոր կամ բարեկարգիչ քահանայ. բեկտօրը
նոյնպէս նշանակումէ մի քանի բարձրագոյն քաղաքա-
կան ու հոգեսոր ուսումնարանների վերատեսուչ ըստ ու-
սումնական մասին:

ստանայ և բոլորովին անակնկալ կերպով պատահեցաւ ծերունի Ուիլեամին:

— Թէպէս ևս ոչինչ պատուեր չստացայ, միստէր Գէորգ, այսինքն ուզումեի ասել միստէր Ռոլլէստօն, — բայց ենթաղրեցի, որ դուք այս գնացքով պիտի գայիք ու համարձակեցի առաջ գալ քեզ: Արտասուքի կաթիլները կարկախ պէս թափումէին Ուիլեամի աչքերից քանի որ խօսումէր:

— Այդ ի՞նչպէս պատահեց, Ուիլեամ, խռպոտ ձայնով հարցրեց Գէորգը, այդ լուրը այնպէս անակնկալ կերպով հաղորդուեցաւ ինձ, որ զեռ այժմ էլ դժուարութեամբ եմ հաւատում դորան:

Ծերունի կառավարը պատմեց նորան այն ամենը, ինչ որ գիտէր միստէր Ռոլլէստօնի մահուան մասին: Գէորգի դէմքը ձինի պէս սպիտակեց և միայնակ նստելով կառքի մէջ՝ արտասուքները անարգել սկսան թափուել նորա աչքերից:

Զիաները լոիկ քայլերով վազումէին փափուկ ձինի վերայ: Տեղ տեղ ծառերի մերկ ձիւզերի միջեց երեսումէին տներում վառուող ծռագների փայլերը:

Կառքը մօտեցաւ ամրոցին: Ահագին նախստենեակը աղօտ կերպով լուսաւորուածէր և վառարանն էլ վառուումէր: Գերեզմանական լռութիւնից մի սրբազն երկիւղ զգաց Գէորգը: Նորա տխուր մտածմունքները ծառան ընդհատեց, որ բանալով սեղանատան դուռը՝ ընթրիքի հրաւիրեց նորան:

— Մօտ ինն ժամնէ, տէ՛ր, ասաց նա ցածր, հազիւ լսուող ձայնով. չէք կամենայ արդեօք փոքր

ինչ բան վայելել: Միստրիս Ռոլլէստօնը սենեկից դուրս չի գալիս, իսկ մ— երիկը արդէն քնածէ:

— Ես չեմ ընթրի, ասաց Գէորգը: — Սակայն, լաւ, աւելացրեց նա. կարծեմ լաւ կլինի, եթէ փոքր ինչ բան ուտեմ:

Նա նոյն խոկ առաւօտուանից ոչինչ չէր կերել և պէտքէ որ իւր ոյժերը ամրացնէր: Ներս մտաւ սյնատեղ երիկի գաստիարակը և մի քանի համակրական խօսքերից յետոյ՝ հաղորդեց նորան հօր մահուան մանրամասնութիւնները, որ նա արդէն լսել էր Ուիլեամից: Այս դաստիարակը մի բարի ու կարեկցող մարդ էր, բայց Գէորգը մօափկ չէր ճանաչում նորան ու նորա հետ խօսակցութիւնը չկարողացաւ թեթեւացնել իւր վշտերը: Գէորգը շուտով վերկացաւ սեղանից ու առանձնացաւ իւր սենեակը: Բարձրացաւ կաղնեայ բարձր սանդուղքը, անցաւ վերին պատըշդամբը այն սենեկի մօտից, ուր հանգստացած էր նորա հօր մարմինը, այնպէս զգուշութեամբ ու հանգարտ անցնելով, իրեւ թէ ոչ թէ մահ, այլ հիւանդութիւն էր թագաւորում այդ տանը և ծանր ու ամուր քայլերը կարողէին հասնել հիւանդի նուրբ լսելիքին: Երբ նա խել ըը զլուխը հաւաքեց ու հանգարտ նստաւ իւր անկողնի մէջ, իւրեան անստանելի ծանր դրութեան մէջ զգաց: Այստեղ էր նա հօր նամակը ստացել ու մերժել նորա ներսութիւնը: Նա ամենայն բան կղոհէր աշխարհիս մէջ, եթէ միայն նորա հոգու մէջ բաժանուէր հօր յիշատակը՝ այն զարհուրելի անսարանի յիշատակից, որ մթնացրեց իւր՝ ամրոցում անցկացրած վերջին օրը:

ԳԼՈՒԽ Ե.

Տ Խ Ո Ւ Բ Ա Ն Ց Ք:

Գէորգը երեք օր անցկացրեց ամրոցի մէջ և ոչ
մի անգամ խորթ մօրը չտեսաւ: Սա իւր սենե-
կից չէր դուրս գալիս, այլ այնտեղ միայն երիկը
մտնել կարողէր: Մի հանդիսաւոր ու ախուր դրու-
թեան մէջ էր տունը: Գէորգը կամ իւր սենեկումն էր
նստում և կամ միայնակ թափառումէր ամրոցի շուրջը.
Երկու թէերեք անգամ պատահեց նա երիկին, բայց սա
բարկացոտ ու սպառնալի ձեռվ էր հանդիպումնորան
և ակամայ էր պառասխանումնորա հարցերին: Թաղ-
ման նախընթաց երեկոյին միստրիս Ռօլէստօնը դուրս
եկաւ ճաշելու: Խորթ մայրն ու խորթ որդին Ռօլլէս-
տօնի մահից յետոյ առաջին անգամ այդտեղ պա-
տահեցան միմեանց:

Երբ նա սգի շորերով և գունամ ու տիսուր դէմ-
քով մտաւ սեղանսատունը, Գէորգի սիրուը շարժուեց.
սա մօտեցաւ նորան համբուրելու մաքով: Սակայն
միստրիս Ռօլլէստօնը միմիայն ձեռքը մեկնեց նորան
և այնպէս չոր ու ցամաք խօսեց նորա հետ, որ Գէ-
որդը հարկաւոր չհամարեց նորա հետ քաղցրու-
թեամբ ու բարեկամաբար վարուել: Նա դեռ ևս հա-
մարեա՛ մանուկէր և կարողէր միայն իւր վարքը ու-
րիշների վարքին նմանացնել:

Միստրիս Ռօլլէստօնը սեղանի առաջին տեղը
նստեց. այնտեղ ընդամենը երեք մարդու համար էր

տեղ պատրաստած, երկուսը՝ սեղանի երկու ծայրերին
և մինն էլ կողքին. Երիկի դաստիարակը բացակայ-
էր: Գէորգը հենց որ կամեցաւ հօր տեղը նստել:
խորթ մայրը խիստ ձայնով նկատեց նորան:
— Այդտեղ մի նստէք, Գէորգ, այդտեղը
երբէք ձեղ չի պատկանում:

Գէորգը ոչինչ չասեց, բայց երբ երիկը նստումէր
հօր տեղը՝ նա ձեռքը նորա ուսին դրեց և ասաց.

— Ես ամենից մեծ իրաւունք ունիմ հօրս տեղի
վերայ. իմներկայութեան ժամանակ ոչոք չի կարող
այդտեղ նստել:

— Դուք էլի ձերն էք անում, Գէորգ, տաքացած
գուշեց միստրիս Ռօլլէստօնը. — Դեռ այժմ էլ վիճում
էք: Բայց ես ձեղ պիտի նկատեմ, որ երկու սից՝ է-
րիկը աւելի մեծ իրաւունք ունի հօր տեղը բռնելու:
նստի՛ր, երիկ:

Գէորգը մեծ դժուարութեամբ կարողացաւ իւ-
րեան զսպել: արտասուեքը խեղտումէին նորան: Նա
կամաց գուրս գնաց սենեկից և մտաւ իւր սենեակը:
Բայց խորթ մօր խօսքերը, թէ երկուսից՝ երիկը
աւելի մեծ իրաւունք ունի հօր տեղը բռնելու», եր-
կար ժամանակ հնչումէին նորա ականջին և նա գեռ
առաջին անգամ իւր հօր մահուան միջոցին զգաց,
որ իւր զրութիւնը պիտի փոխուի ամրոցի ժառան-
գութեան վերաբերութեամբ: Նա երկար մտածեց,
թէ արգեօք ի՞նչ կարողէին նշանակել միստրիս Ռօլ-
լէստօնի օտարոտի խօսքերը և վերջապէս այն եղա-
կացութեան հասաւ, որ այն խօսքերը ասած պիտի լի-
նին միմիայն իւր հպարտութիւնը մեղմելու նպատակով:

Միւս առաւօտ եղանակը խառնուեց, գետէնը զեռ տեղ տեղ ձիւնով էր ծածկած: Երկայն ծառուղու ուղղութեամբ ծանր կերպով առաջ էր ընթանում յուղարկաւորութեան հանդէսը: Միստէր Ռոլլէստօնի գիակին ուղեկցողների թիւը մեծ չէր: Հանգուցեալը մօտիկ արենակիցներից ոչ ոք չունէր կենդանի, հեռու ազգականները Անգղեայի հիւսիսումն էին բնակւում: Բայցի երկու որդիներից, Ռոլլէստօննեան տան միակ ներկայացուցիչներնին՝ նորա երկու հօրեղբորորդիքը, որոնք Լօնդոնումն էին բնակւում, նոցանից մինը Մայլս Ռոլլէստօնը յայանի փաստաբանէր և շատ փորձուածէր իւր այդ արհեստի մէջ: Գերեզմանի վերայ հաւաքուեցան բաղմաթիւ վարձաբնակներ, ոմանք հետաքրքրութիւնից և ոմանք էլ հանգուցեալին պատուելու համար: Թաղման ժամանակ երիկը իւր բարձրաձայն հեկեկանքով ու լացով ներկայ գտնուողների կարեկցութիւնը շարժումէր. իսկ Գէորգը լնդհակառակն չէր լաց լինում: Նորա գունատ գէմքը բոլորովին անգորը էր. նորան այնպէս էր թւում, թէ մի զարհուրելի քնի մէջնէր ինքը: Նուտով ամեն բան վերջացաւ:

Ուղեկցող խումբը հաւաքուեց ամրոցում: Միստիս Ռոլլէստօնը, նորա քեւին, որ մի հաստիկ ու չափահաս մարդ էր, և երիկը խօսումէին սեղանատանը: Գահլիճում վառարանի մօտ նստածէին Գէորգն ու հանդուցեալի հօրեղբօրորդիքը: Սոքա շատ քիչին խօսում միմեանց հետ և այն մի երկու խօսք միայն, կամ թէ զանազան հարցեր էին անում Գէորգին: Միստէր Մագիր շոտլանդացին բարձրահասակ ու

շէկ, երկայն մօրուքով մարդէր: Մայլս Ռոլլէստօնը, փաստաբանը, թէպէտե գեղեցիկ չէր, սակայն խելօք ու գրաւիչ գէմք ունէր: Նա իւր մասնագիտութեան շնորհիւ շատ մեծ վասարակ ունէր և բաւականացափ ծախս. Մայլսը երիատարդ ժամանակ ամուսնացաւ և շատ որդիք ունեցաւ:

Փաստաբան միստէր Հէյնսը, որ վրաղած էր Ռոլլէստօնի գործերով, մօտեցաւ վառարանին ու հանգարտութեամբ ասաց.

— Մենք բոլորովին պատրաստ ենք, պարոններ, բոլորովին պատրաստ ենք կտակը բանալուն ձեռնամուխ լինելու: Կկամենաք հետեւել ինձ. գնանք, մտաղ դարձաւ նա Գէորգին:

Երեքը միստին լուռ ու մունջ գնացին նորա հետ սեղանատուն: Միստէր Հէյնսը նստելով սեղանի առաջ ներկայ գտնուողներին ցոյց տուեց մի մեծ զրոյմած ծրար, որ, նորա ասելով, գտնուել էր հանգուցելու զրասեղանի մէջ և մակագրին նայելով՝ նորա կտակնէր պարունակում: Նա ծրարը բացեց և սկսաւ բարձր ձայնով կարդալ:

Կտակը շատ պարզ էր. հանգուցեալը իւր կտրողութիւնը Ճիշդ այնպէս էր մասնագրել որպէս կվայելէր: Կալուածքը անցնումէր անդրանիկ որդուն այն պարտաւորութեամբ, որ այրուն տարեկան մի յայտնի գումար արդինք հատուցանէր, որը այնու ամենայնիւ ապահովածէր ամուսնական դաշնագրի զօրութեամբ: Երիկին, իբրև կրտսեր որդուն, կտակած էր 5,000 ֆունտ ստերլինգ. բայցի սորանից, կտակի մէջ միշտածէին մի քանի աննշան գումար-

ներ, որոնք կտակած։ Էին հանգուցեալից կողմանի անձերին և մի ՚ի միջի այլոց՝ Մայլս Ռոլլէստօնին։ Վերջինս, միստրիս Ռոլլէստօնի հետ նշանակուածէր կտակակտար և որդոց խնամակալ այն դէպքում, եթէ նոքա կտակողի մահից յետոյ անշափահաս կմնային։ Յետոյ դրուածէր թիւն ու ամսը և նոյն խկ միստէր Ռոլլէստօնի ու վկաների ստորագրութիւնը։ Կարգալը ընդհատուեց. ըստ երեսութիւն կտակը աւարտուած էր։ Բայց միստէր Հեյնար աչքերը ամենեին չէր հետացնում թղթից և վերջապէս ասաց.

— Այսեղ մի յաւելուած կայ մօտիկ ժամանակներում դրած։

Նա, ըստ երեսութիւն, աչքի տակն անցկացրեց այն և նորա զէմբի վերայ խորին զարմանք երեաց։

Յետոյ նայեց միստրիս Ռոլլէստօնին, որ արտասուքը աչքերին նստած էր վառարանի մօտ։ Սա շփոթուեցաւ։ Այնուհետեւ վաստաբանը դարձաւ Մայլս Ռոլլէստօնին շփոթուած ու տարակուսած։

— Սորանից փոքր ժամանակ առաջ ես այս կտակը դրեցի միստէր Ռոլլէստօնի համար, սիրելիս, սակայն զարմացմամբ գտնում եմ այստեղ անցեալ ամսի 13ին դրած մի յաւելուած։ Այս յաւելուածը հանգուցեալի ձեռքովից դրուած և, ինչպէս երեսումէ, կանոնական ոյժ պիտի ունենայ. սա զարհութելի կերպով փոխումէ հոգեւոր կտակի կարգադրութիւնը։ Ես կարծումեմ, որ այն էլ պիտի կարդալ ձեզ մօտ։

— Այդպիսի փոփոխութեան պատճառը յիշուածէ այդտեղ, հարցրեց Մայլսը։

Այս որ ասաց, նա փաստաբանի ուսի մօտից նայեց թղթին, երբ արդէն նա բարձր ձայնով կարդումէր յաւելուածը։

Դա մի քանի տող էր միայն, սակայն բովանդակութիւնը բոլորովին հակառակ գիրք էր տալիս Ռոլլէստօնի որդոց։ Նորանում ասուած էր, որ այն ամենը, ինչ որ անդրանիկ որդունէր կտակած։ Երիկին պիտի անցնէր, մինչդեռ Գէորգը 5,000 ֆունտ ստերլինգը պիտի ստանար, այն՝ ինչ որ առաջ կրտսեր որդուն էր կտակած։ Այդ փոփոխութեան պատճառը չէր յիշուած և կտակի մնացած կէտերը նոյն զօրութիւնն ունեին։

Գէորգը ուշագրութեամբ լսումէր կտակը. Նա աեսաւ, որ միանգամայն իւր սպասածին պէս էր այն։ Բայց երբ բանը հասաւ յաւելուածին, նորա շահասիրութիւնը զօրացաւ։ Ակզբում նա չէ թէ այնքան իւր վիճակի փոփոխութեամբը շփոթուեց, այլ այն զարհութելի մոքի վերայ, թէ ո՛չքան արդեօք խորը կերպով վերատրուած ու բարկացածէ եղած հայրը, որ իւրեան այդպիսի պատժի է ենթարկել։ Յետոյ նա յիշեց միստրիս Ռոլլէստօնի երեկուան խօսքերը։ Տես որտեղէր նոցա բացատրութիւնը։ Ուրեմն խորթ մայրը արդէն գիտեցել էր յաւելուածի լինելը և անկասկած ինքն էր զիգել մարդուն այդպէս անել։ Գէորգը լաւ նայեց ներկայ գտնուողներին և նոցանից ամեն մէկի աչքերումն էլ նոյն կարծիքը նշմարեց։ Այս բանը խիստ շատ միիթարեց նորան. «Ես հաւատացածեմ, միմնջաց նա ինքն իւրեան, որ սա է համոզել հօրս այդպէս անելու և

գիտեմ, որ նա միշտ ինձ էրիկից աւելի էր սիրում:»
 Այս բոլոր մաքերը կայծակի արագութեամբ
 անցան Գէորգի գլխովը. յետոյ նա զգաց, որ բոլոր
 ներկայ գանուղները իւրեան էին նայում և շատ
 ցանկացաւ, որ միայնակ լինի: Նա տեղից վերկացաւ
 և ալէկոծութիւնից քիչ մնաց վայր ընկնէր: Մար-
 դիքը հերթով առանձին կարեկցական արտայայտու-
 թեամբ մօտեցան նորան: Վերջապէս միստրիս Ռոլ-
 լէստօնը էրիկի ձեռքից բռնեց և տարաւ նորան եղ-
 բօր մօտ: Նա Գէորգին համոզեց, որ շատ չափրի և
 խորեց որ Ռոլլէստօն ամրոցը առաջուայ պէս գար-
 ձեալ իւր տունը համարի: Այն զգացմունքը, որ
 Գէորգը ազգակցական կողմից էլ պարուական պէտքէ
 լինէր եղբօրն ու խորթ մօրը, աւելի զօրացրեց նորա
 ալէկոծութիւնը և առանց մի ձայն հանելու՝ շատապով
 դուրս գնաց սենեկից:

— Ես չեմ համարձակում նորա ետեից գնալ
 կամ էրիկին ուղարկել ասաց միստրիս Ռոլլէստօնը:
 — Դուք չէք կարող երեւակայել թէ նա ինչպիսի
 տաք բնութիւն ունի. այս բանն էր՝ է՛, որ շատ դառ-
 նացնումէր նորա խեղճ հօրը:

Խօսելու ժամանակ արտասուքը հեղեղի պէս
 թափւումէր նորա աչքերից, բայց նայելով սորան՝
 ունկնդիրների համակրութիւնը Գէորգի կողմնէր և ո՛չ
 ոք նորան պատախան չտուեց:

Ծուռով ամենքը սկսան զնալ: Մայլս Ռոլլէստօնը
 մարդ ուղարկեց Գէորգին խնդրելու, որ իւր զնալուց
 առաջ տեսութեան դայ իւրեան, բայց նորան ոչ մի
 տեղ չկարողացան դտնել:

Գէորգը որ տանից գուրս գնաց, անցաւ այն
 ձանապարհով, ուր արդէն փոքր ինչ առաջ անցնու-
 մէր յուղարկաւորութեան կառքը և ուր մենք առաջին
 անգամ՝ պատահեցինք նորան, երբ անհոգ ու ու-
 րախ, մինչեւ ծնկները ցեխոտ՝ վերադառնումէր որ-
 պից: Այսուհետեւ ի՞նչպէս էր փոխուել նա, խեղճ
 տղայ:

Գլուխը կախելով ու ձեռքերը գրպաններում դար-
 սելով՝ նոտ տիրութեամբ նայումէր թափուող ձիւնին:
 Գէորգը ձանապարհը փոխեց գէպի գիւղը և բաւա-
 կան մեծ տարածութիւն անցնելով՝ մօտեցաւ Ռոլ-
 լէստօնեան հիւրանոցին: Նա, որ դեռ ևս տասնեւհինդ
 տարեկանէր, գարձաւ մսիթարութիւն գտնելու իւր
 պառաւ զայեակ նօրա Սուլլիվանի մօտ (ինչպէս որ
 անուանումէին միստրիս Մարտինին փոքր ժամա-
 նակ), որ առաջուայ պէս խիստ շատ էր սիրում
 Գէորգին:

Ռոլլէստօնեան հիւրանոցը փողոցի կողմից բա-
 ւական տիսուր տեսք ունէր, իսկ ներսից լոյս էր ու
 լայնարձակի: Ուղղակի գուան դիմաց մի սեղան էր
 շինած, որի վերայ գարսածէին զանազան մեծութեան
 ու ձեր շեշեր, փայլուն բաժաներ ու անազէ աման-
 ներ: Անենի խորքում երեւացող դուռը տանումէր
 մառանը: Աջ կողմը փոքրիկ հիւրասենեկի վառարանի
 մէջ կրակ էր վառած, որի լոյսը պայծառացրել էր
 պատուհանի մոյք կարմիր վարագոյները:

Գէորգը անհաստատ կերպով կանգնեց հիւրա-
 նոցի շէմքին. մի կողմից նա ուղումէր իւր զայեկի
 հետ բաց խօսելով թեթեացնել իւր թախծութիւնը,

միւս կողմից վախենումէր նորա շատախօսութիւնից:
Սինչև որ կմաածէր, ծանր քայլերի ձայներ լսուեցան
և միատրիս Մարտինը երեկցաւ նորա մօտ:

ՊԼՈՒԽ

ԱՅԼԵՍՏՕՆԵԱՆ ՀԻՒՐԱՆՈՑԸ:

Միստրիս Մարտինի դեմքը լայն էր և մեծ. լսուակցութիւնը միանգամայն իրշանդացունը: Նա սեռնէր հագին իւր պարոնի մահուան պատճառով. հագածը սեռ մետաքսեայ շըջազգեստ էր ու սպիտակ գոզոց:

Չնայելով, որ երկար տարիներ Անդղեայումն էր անցկացրել նա վերին աստիճանի պահպանէլէր իրշանդական արտաքերութեան բոլոր առանձնութիւնները:

— Ո՛հ, միստէր Գէորգ, սիրելիս, ի՞նչ է պատահել որ այս քամու ու բքի ժամանակ վերես կացել եկել:

— Նա շատ թշուառ եմ, նօրա, պատասխանեց Գէորգը և նորա ձայնը սաստիկ ալէկոծութիւնիցը կտրուեց:

— Ներս արի, աղաւնեակս, այսաեղ արի, վառարանի մօտ տաքացի՛ր ու պատմիր ինձ ինչ որ քեզ պատահել է.

Միստրիս Մարտինը Գէորգին ներս տարաւ իւր հիւրասենեակը, վառարանին փայտ աւելացրեց և խեղճ տղային նստացնելով՝ իւր լաւ բազկաթուակ

վերայ, ստիւպեց նորան իւր ցաւերը յայտնել: Երբ նա կարծ կերպով պատմեց բոլորը՝ նօրան զարհուրելով աղաղակեց.

— Վա՛հ, ուրեմն հանգուցեալ տէրս ձեզ ժառանգութիւնից զըկելէ՛, միստէր Գէորգ: Թշուառ, թշուառ, այս բոլորը նորա արածն է: Վա՛յ իմ օրիս, որ խեղճ տղայիս անդամ իւր հայրական տնից արտաքսումն... ա՛խ, ի՞նչքան ցաւէ...

Եւ երեսը գոզնոցի մէջ թագինելով՝ սկսաւ հեկեկալով լայ լինել և ամբողջ մարմնով տատանուել:

— Նա կարողեմ ամրոցում ապրել եթէ կամենամ, նօրա՝, բայց չեմ կամենում, ընդհատեց Գէորգը: Ինձ այնպէս է թւում, որ այլ ես երբէք չեմ կարող հայրական տան շէկը կոխել: Նոքա էլ չեն կարող ինձ ստիպել, որ իւրեանց հետ ապրեմ:

Նօրան շտապով գոզնոցը վայր թողեց և նոյնպէս շտապով ասաց.

— Ի հարկէ չպիտի ցանկանայ, էլ ո՛ւր կմնար նորա հպարտութիւնը, եթէ համաձայնէր ապրել այն տանը, որ իւրեանց խլելն:

Մի քանի րոպէ բարձր ձայնով ախուվախ անելուց յետոյ, միստրիս Մարտինը երեւակայեց վերջապէս, որ իւր կողմից այգպիսի վարմունքը ամենսկին չի քաջալերի ու միիթարի Գէորգին: Նա վերկացաւ, մազելն ու գլխարկն հայելու առաջն ուղղեց և մի բաժակ գինի լցնելով՝ տուեց Գէորգին: Նօրան ստիպեց խմել այն բաժակը և ձեռքը դնելով նորա ուս սին ասաց.

— Սակայն, միստէր Գէորգ, սիրելիս, անյաջողու-

թեանը դուք պիտի այլական քաջութեամբ զիմա-
դրեք և Ասուուծով ամեն բան լաւ կերթայ:

Գէորգը ձեռքերով դէմքը ծածկեց ու սկսեց
հեկեկալ:

— Նօրա՛, ի՞նչ անեմ: Ես այսօր չեմ կարող
ամրոցը վերադառնալ: Զի՞ կարելի, որ մարդ ուղար-
կենք իմ բաներս բերեն և միստրիս Ռոլլէստօնին իմա-
ցնենք իմ ուր լինելա: Սակայն ում ինչ հոգնէ, թէ
ես ուր եմ, հառաչելով աւելացրեց նա:

— Ես ի՞նչքան բազգաւոր կլինեմ ու կհպար-
տանամ, եթէ դու ինձ մօտ հիւր կլինես, տէ՛ր, պա-
տասխանեց նօրան: — Իմ Զօնը, որ ամենաբարի ու
լաւ մարդերից մէկնէ, մի վայրկենաւմ ամրոցը կը
հասնի:

Ասաց ու վագեց միստրիս Մարտինը իւր մար-
դու ետելից:

Գէորգը յոգնած ու սոված նստածէր վառարանի-
մօտ: Գլուխը ձեռքին յենլով՝ տիրութեամբ նայումէր
կրակին, որի վերայից երեսումէին զանազան ցնորական
պատիելներ:

Շուտով ներս մտաւ Զօն Մարտինը, որ մի բարձ-
րահասակ ու գեր տղամարդ էր, — Ռոլլէստօնեան
հիւրանոցի արժանաւոր տէրն ու նօրաի արժանաւոր
ամուսինը: Նա մազէ վերաբու ունէր հագին և եր-
կայնավիզ կոշիկներ: Նորա ձայնի հնչինը անյայաւ-
սումէր շարֆի մէջ, որով պատածէր նորա կարճ ու
հաստ վիզը:

— Հրամայեցէք տանտիկնոջ կրակը նորոգել
վառարանի մէջ, միստէր Գէորգ, ես իսկըն կվերա-

դառնամի, ասաց նա: — Նամակով կամ բերանացի
ոչինչ չէք ապսպարում:

— Միմիայն պայուսակս հարցրէք, ասաց Գէ-
որգը, — Ճառաներից մինը կտայ ձեզ: Թող միստրիս
Ռոլլէստօնին ասեն, որ ես այստեղ եմ մնում, գոնէ
այս գիշերս:

— Նատ լաւ, պարո՞ն, շատ լաւ, — և Զօնը
շտապով դուրս գնաց, այն ինչ միստրիս Մարտինն էլ
գնաց մի լաւ սենեակ պատրաստելու թանկագին
հիւրի համար:

Գէորգի երկսրատեւ բացակայութիւնը մեծ վըր-
դովմունք պատճառեց ամրոցի մէջ: Մայլս Ռոլլէստօնը
ամենելին չէր ուղում առանց նորան մի անգամ էլ
տեսնելու ճանապարհ ընկնել. բայց ստիպուածէր նոյն
օրն և եթէ կանգոն վերադառնալ: Նա իւր ազգակա-
նին մի քաղցրիկ նամակ թողեց այնտեղ, որով հրա-
վիրումէր նորան իւր մօտ Սէյդէնհամ, ուր ինչպէս
յայտնումէր, պիտի խորհին Գէորգի մտադրութիւնե-
րի մասին: Այնուհետեւ յիշեցնումէր, թէ հայրական
ժառանգութեան կորուսոր կարողէ յօգուտ Գէորգի
ծառայել եթէ նա կարող կլինի մարդուն վայելուչ
քաջութեամբ ու անտարբերութեամբ վերաբերել
նորան. որ նա կարողէ ընարել իւր համար մի գիւ-
ղական հարսափն հաւասար տրժանաւոր գործ: «Քո
անձնական միջոցները բաւական մեծ են, գրումէր
Մայլս Ռոլլէստօնը, որոնք կարողեն վայելուչ ճանա-
պարհ բանալ քեզ կեանքի մէջ մանելու, թէպէտ
միւս կողմից նոքա խիստ սահմանափակուած են՝ քե-
զանում առողջ ու օգտակար գործունէութեան հա-
զարդ:

մողմունքը Ճ'նշելու համար»։ Նամակը վերջանումէր կարեկցութեան ու յարգանքի արտայայտութիւններով։ Երբ Գէորգը հանգստացաւ ու մի փոքր բան կերաւ այլ ևս արդէն այնպէս մութ չէր կարծում իւր ապագան։ Մայլս Թոլլէստօնի նամակը, որ Մարտինը բերեց ամրոցից, աւելի անդորրացրեց նորան։

Գէորգը համոզեց տանախլոջ, որ սա իւր շաքարօլին ու ծխաքարշը իւր հիւրանոցը բերի ու շուառվ երեքն էլ նստեցին վառարանի մօտ։ Գէորգը սկսեց թերթել լուստնկարներով լի մեծ յիշատագիրը (album) և մի տեսնէիր տանախրօջ հպարտութիւնը, երբ համարեա՛ իւրաքանչիւր երեսին երեսումէր նորա պատկերները զանազան դրութեամբ, ամենափոքր հասակում մանկական երկայն զգեստով յետոյ կոլորագէմ պատանի ժամանակ կարծ կրինավարտիկով ու բաճկնակով և վերջապէս տասնեհնգամեայ հաստկում հանած։

Զօնը խպշեց շաքարօլին ու սկսեց ծխել իսկ միստրիս Մարտինը խօսումէր Գէորգի հետ, այն յուսով՝ որ կարողանայ նորա սիրտը ուրախացնել։ Հին ժամացուցի կկուն ինը զարկեց։ Զօնը դատարկեց բաժանում ու նայեց իւր կնօջը։

— Զէ՛, Զօն, այլ ևս մի՛ պահանջիր. մի բաժակով բաւականացիր. դարձեալ զարհուրելի երազներդ կվրդովն քեզ ու ես էլ այդպիսի երազներից բաւական չարչարուել եմ։

Զօնը բարձր ձայնով ծիծաղեց։

— Կսի՛ր, տիկի՛ն, ես հեռու ճանապարհ եմ գնացել ու եկել այս ցրտումն ու ձեան մէջ, այս

պատճառով էլ նի պատիւ միստէր Գէորգի իրաւունք ունիմ երկուրդ բաժակն էլ խմել։ Կամենաս գրաւ կղնեմ (զրադ կզամ), թէ միստէր Գէորգն էլ այդ կարծիքի չլինի։

— Ո հարկէ, նօրա՛, մի բաժակ էլ շնորհեցէք սորան, — ամօթ չէ, որ խնայում էք սորանից մի բաժակ շաքարօլի։

Նօրան կամեցաւ ինչ որ պատասխանել բայց այդ խակ բոսեին մէկը ամուր բաղիսեց դուռը, որ եղանակի վատութեան պատճառով փակածէր։

ԳԼՈՒԽ Թ.

ԴԱՐՁԵԱԼ ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐԸ։

Դուան իւրաքանչիւր հարուածին հետեւումէր և մի տեսակ ողորմելի ճիչ Գէորգը Զօնի ու սորա ամուսնի հետ վըսյ ընկաւ դռանը և երեւակայեցէք նորա զարմանքը, երբ ճանաչեց իւր հին ծանօթ Յուլիոս Կեսարի ձայնը։ Տանտէլը սովորակը շարժեց տեղից, դուռը բացեց և նեգրը ներս ընկաւ սենեակը։ Նա աւելի թշուառ ու վաստակած տեսք ունէր, քան այն երեկոն, երբ Գէորգը պաշտպանեց նորան Սատանի վոսի մէջ։

Այս օտարոտի պատկերը տեսնելով՝ միստրիս Մարտինը շփոթուեցաւ ու ձեռքերը վեր բարձրացրեց. ինքը Զօնն էլ փոքր ինչ զարմացաւ։ Միմիայն Գէորգը անվրդով մնաց անշուշտ այն պատճառով, որ արդէն ծանօթէր նեգրի հետ։ Յուլիոս Կեսարը կանդ-

նածէր, բայց նորա ծնկները ծալում էին, ձեռքերը կախած ունէր, ատամները դողդողումէին և աչքերը մի առարկայից գէպի միւսն էին վազվառմ:

— Ո՛չ, բարի՛ մարդիկ, աղաղակեց նա վերջապէս. ես եկել եմ օդնութիւն խնդրելու ձեղանից իմ ծերունի տիրօջս համար, — մեր կառքը շուռ եկաւ մի խոր փոսի մօտ: Այս մատաղահաս պարոնն էր, եթէ չեմ սխալում, դարձաւ նա Գէորգին, որ մի քանի օր սորանից առաջ աղատեց ինձ Ստատանի— փոսի մօտ: Տէ՛ր, բարութիւն արէք, դոցա խնդրեցէք, որ իմ ծերունի տիրօջս օդնեն: Ուշ, ուշ, ի՞նչ զարհուրելի ցուրտ է (խեղջ նեգրի ոսները դողում էին) խնդրեմ փոքր ինչ բան տուէք խմելու:

Նորան իսկոյն բերեց Յուլիոս Կեսարի համար մի բաժակ օղի: Գէորգը ամեն բան պատմեց, ինչ որ զիտէր ների մասին և Կեսարն էլ իւր կողմից բացառեց, թէ իւր տէրը — Գեներալ Մակ — Գուգալը Ֆարբինգտոնի իջևանի Ճանապարհին — իւր փեսի րեկտօրիայի մէջ կառքեց վայր է ընկել Կոքը Յուլիոս Կեսարը կառավարի հետ կառքը դուրսէ քաշնել և աշխատել են ուղղել բայց երեացելէ, որ կառքի վեակը կոտրուածէ և անհամարէ եղել Ճանապարհ շարունակելը և որ ներկայ լուսէիս գեներալը նստածէ կառքի մէջ Ճանապարհի մէջ տեղը:

— Ես օդնութիւն խնդրելու եկայ, աւելացրեց նեղը, պարոնս մատածման ու յուսահատութեան մէջէ. նա թոյլ կազմուածք ունի և չի կարող ցրտին դիմանալ:

— Զեր ծերունի տէրը ՚ի հարկէ ուրախ չի լինի

ցրտումը նստելու, ասաց Նօրան: — Զօ՞ն, դարձեալ պիտի ասյլակդ լծես ու պարոնին այստեղ հասցնես:

— Դու անդագար դործ չես պակացնում ինձ, Նօրա, վրայ բերաւ Զօնը և մի տչքը շաքարօղու ու ծխաքարշե վերայ տնկելով՝ աեղեց վերկացաւ:

Կնոջ մօտից անցնելով Զօնը կամաց ձեռքը քսեց նորա այտին, սա էլ փոխարէնը մի սիրային, բայց ծանր ապտակ զարնելով՝ գնաց սենեհակ պատրաստելու զօրապետի համար:

Գէորգը առանձնացաւ և պառկեց: Նա սկսաւ մտաբերել այն բոլոր դժբաղտութիւնները, ողոնք վերջին ժամանակներում անցած էին իւր զլիսով այնէ, հօր հետ ունեցած վէճը, նորա յանկարծակի մոհը և իւր զղջումը: Յետոյ կենդանի կերպով պատկերացրեց իւրեան ամբողջ տեսարանը թէ թաղման և թէ կտակի ընթերցման, որը զրկեց նորան ժառանգութիւնից: Բայց ընայելով այդ օրուայ բազմաթիւ փորձանքներին և իւր յոյսերի ու ապագայի յանկարծակի փոփոխութեանը՝ նա զարմացմանը նկատեց և զգաց, որ ինքը ամենեին այնքան թշուառ չէ, որքան մի քանի ժամ առաջ էր զգում իւրեան և շուտով քաղցր քնուվ քնեց:

Սայլակը նորից լծուեց ու մի քանի բոպէց յետոյ Զօն Մարտինն ու Յուլիոս Կեսարը նորա մէջ նստած գնումէին: Յուտով նոքա գիշերուան մթութեան մէջ որոշեցին կոտրուած կառքը, որից լւումէր անհամարեր զօրապետի բարկացոտ ձայները:

— Իսկո՞յն, տէ՛ր, իսկո՞յն, Յուլիոս Կեսարը արգէն մօտէ, բարձր ձայնով աղաղակեց նեղը:

Փոքր ինչ խօսելուց յետոյ, զօրապեսը վճռեց
սայլակը նատել ու Զօնի հետ միասին գնալ փեսի
պաշտօնավայրը, իսկ կոտրած կառքն ու ամբողջ
կայքը նեղի հոգացողութեանը յանձնել: Պաշտօնա-
վայրը գիւղից հեռու չէր, իսկ բէկտօրը ոչ այլ ոք
էր, բայց եթէ մեր ծանօթ Թովմաս Բարտօնի հայրը,
որ զօրապետ Մակ Դուգալի ազգականնէր: Զօրապետը
բարեյաջող կերպով տեղ հասաւ: Զօն Մարտինը տուն
վերադառնալով՝ տեսաւ Յուլիսու կեսարին ու նորա
հետ քարշ եկող բեռնաւորած կառքը: Նօրան մի
փոքր նեղացաւ, որ զօրապետի ընդունելութեան
համար իւր տեսած պատրաստութիւնը՝ ՚ի զուր
անցաւ, բայց շուտով նեղութիւնն անցաւ ու վերջա-
պէս երկու ամուսինները քաշուցան հանգստա-
նալու:

Միւս առաւօտ այնպիսի պայծառ արև էր, որ
գժուար էր հաւատալ թէ դա Ծննդեան առաջին
օրնէր. բոլոր գետինն ու ծառերը ձիւնովէին ծած-
կուած: Զմեռը փայլումէր իւր բոլոր գեղեցկութեամբ:
Ոօլլէստօնեան հիւրանոցի առաջ գտնուած ջրմակի
շուրջը փայլումէին սառցի պտուինէր: Նրբ Գէորգը
թարմ օդ շնչելու համար գլուխը պատուհանից դուրս
տարաւ՝ հեռուից սմբակների խուլ դրոփիւն լսեց: Այդ
ձայնը աւելի սաստկանումէր. կաղնու Ճիւղերը ճա-
նապարհը թագնում էին նորանից, բայց մի ըոսէից
յետ, մանելով հիւրասենեակը, բաց դռնից տեսաւ
մի ձիաւոր մարդ, որ ուղղակի մօտեցաւ բակի դռա-
նը: Եկողը կանդնելով՝ մի թեթև ու քնքոյշ կեր-
պով զարկեց իւր հաստամարմին ձիուն: Յանկարծ

նա շուռ եկաւ և Գէորգը մեծ զարմանքով նկատեց,
որ եկողը Թովմաս Բարտօննն էր:

Սա շտապով ձիուց վայր թռաւ ու գնաց Գէ-
որգի մօտ:

— Օ՛չ, էլ այսպիսի երջանկութիւն կլինի՞.
ասաց Թովմասը. ես այժմ գնումէի Ոօլլէստօն ամ-
րոցը ձեր մասին մի տեղեկութիւն ստանալու և այս-
տեղ հիւրանոցի առաջ մի ըոսէ կանդնեցի ծանա-
պարհն իմանալու համար, բայց յանկարծ՝ այս ի՞նչ
եմ տեսնում:

— Ի՞նչքան քաղցր է ինձ համար, որ դուք
կամեցել եք ինձ մատքերել Թովմաս, այն էլ այսպէս
առաւօտը վաղ: Ես դեռ չեմ էլ նախաձաշել զիս
ինն ժամնէ:

— Իսկ ես ութիւն նախաձաշեցի, ասաց Թովմասը:

— Նրեկ երեկոյեան մեղ մօտ հեւր եկաւ ծե-
րունի հօրեղքայրս, իսկ նորա համար օրը աքլորա-
կանին (հաւախօս) է լուսանում: Հնդկաստանում նա
սովորել է դեռ լոյսը չքացուած վերկենալ և նոյն
կարգով է գնում այսաել էլ: Բայց ես պատրաստ եմ,
եթէ կհաճիք, սկզբից սկսել պատմութիւնս. սակայն
դեռ դուք ինձ պատմեցէք, թէ ինչ էլ շինում
այստեղ:

Գէորգը պատուիրեց ձին առոռը տանել և Թով-
մասին նախաձաշի հրաւիրեց: Ոօլլէստօնը կարծ կեր-
պով պատմեց ընկերօն՝ իւր վիճակի փոփոխութիւնը:
Անցած օրուայ անցքերը յիշելով, իսեղճ աղան մի
թիքայ չկարողացաւ ուտել, այն ինչ Թովմասը եր-
թիքայ չկարողացաւ ուտել, այն ինչ Թովմասը եր-

տարւ թէ նա այդ երկրորդ անգամներ նախաճաշուռմ
Քանի որ Գէորգը հաւասացնումէր նորան իւր անյա-
ջովութիւնները, Թովմասը ակամայ կամօք ստիպուած
էր ամեն հնարք գործ զնել նորան քաջալիրելու
ու զուարձացնելու համար: Նա համարեա բոնի
կերպով հրաւիրումէր նորան իւրեանց տուն:

— Բաւականէ միայն, որ ես հօրս պատմեմձեր
անցքը և նա չի հանգստանայ, մինչև որ հիւր չէք
գուլ մեղ մօտ: Իմ հայրս մի շատ բարի, ուրախ ու
քաղցր մսրդէ: Մանաւանդ, դուք լու գիտէք, որ
անխելքութիւնէ այստեղ կատարեալ միայնութեան
մէջ անցնել առաջիկայ Ծննդեան տօնիր:

Բայց Գէորգը լսել անգամ չկամեցաւ:

— Ես չեմ կարող մոռանալ որ գեռ երեկ եմ
հօրս թաղել ասաց նա: — Դուք շատ բարի էք,
բայց եթէ մինչև անգամ ձեր հայրն ինքը ինդիրէ,
որ գայի ձեղ մօտ հիւր, ոյնու ամենայնիւ ես գեռ
և չեմ կարող գուլ:

Թովմասը ամենեին նպատակի հասաւ: Նա մըս-
քումը դրեց, որ կարելոյն չսփ շուտ շուտ այցելե-
նորան և փորձի, թէ արդեօք իւր հօր համոզելն էլ
ոչինչ աղքեցութիւն չի ունենայ իւր բարեկամի
վերայ:

Ծննդեան օրերը հասան: Գէորգը ոչինչ լուր
շունէր ամրոցից: Մի անգամ Միտուէր Բարտօնը Գէ-
որդին այցելեց հիւրանոցում և հրաւիրեց իւրեանց
տուն: Նա համոզեց Գէորգին խորթ մօրը մի հա-
մեսս նախակ գրել ու մի քանի տող էլ իւր ինապա-
կալ Մայլս Ոօլլէստօնին, յայտնելով, որ ինքը հրաւե-

է ստացել Գոմբէտօննեան բէկտօրից ու մատդիլ է
օդուտ քաղել նոցա այդ բարեկամութիւնից:

Սիստրիս Ոօլլէստօնից նա պատասխան չստա-
ցաւ, իսկ ինամակալը բարեկամական սիրով ու հո-
գացողութեամբ ուղարկեց նորան առձեռն ծախսելու
համար մի փոքրիկ գումար և հրաւէր՝ այցելելու
իւրեան:

Նօրան ուրախ էր, որ իւր ռազմիւ պա-
տանին» գնումէ բէկտօրի մօտ հիւր, թէպէս մեծ
բաղասաւորութիւն էր նորա համար, եթէ Գէորգը
իւր մօտ մնար:

— Նա այստեղ միայնութեան մէջէ, ասումէր
նա իւր ամուսնուն: — Խնձ շատ միսթարական մատած-
մունք կլինի, որ նա իւր հասակակից հասարակու-
թեան մէջ ժամանակ կանցկացնի:

Նոր տարու նախընթաց օրը ճաշեց առաջ Գէ-
որդը հասաւ Բարտօնի տուն: Նոցա առունը կառու-
ցածէր մի բըսակի զառիվայրի վերայ, մի հնաշն
եկեղեցու մօտ, մի փոքրիկ գալարուն ճանապարհ
այգու միջով տանումէր գերեզմանասունը:

Փոքրիկ կառքի մէջ Թովմասի հետ նստած ժա-
մանակ Գէորգը իւրեան հանդիսաւ ու լսու գրութեան
մէջ էր զգումն կուսամուների փեղկերը գեռ բացէին
և պայծառ լցուր ներս էր թափանցում ապակիների
միջեց, տան առաջ երկայն ու գունատ շերտեր ձեւա-
կերպելով: Եների բարձրաձայն հաշոցը յայտնեց
տղայոց գալուստը: Դուռը արգէն բացուեց գեռ նոցա
կառքից իջնելուց տուած: Գէորգը շտապով վայր թը-
ռաւքից իջնելուց տուած: Գէորգը ստապով վայր թը-

համբոյր դէմքը, որ բարեկամարար սեղմեց նորա սառած ձեռքը :

Ամեն հասակի ու ցեղի չնիր, թէ մեծ ու թէ փոքր, պարկածէին կամ վազվզումէին նախառենեկում և հոսոտում հիւրին: Յանկարծ Գէորգը նոյն իսկ ական ջե մօտ մի տեսակ օտարոտի երգի ձայն լսեց և մի փոքրիկ, թաւամազ թաթ՝ սահեց նորա ձեռքի վերայից: Նա իսկոյն շուռ եկաւ, մօտը կանգնողը թուժմասն էր եղել:

— Պարոն, ասաց Թովմասը, թոյլ տուէք ինձ մի անձն ներկայացնել ձեզ որը մեծ գեր է խաղում այս տանը, դա լէդի Զէնէտն է — կապիկը:

ԳԼՈՒԽ Ժ.

ԴԱՄԲԼԵՑՈՆԵԱՆ ԹէՄԸ,

Թոլըր ներկայ գոնուողները, որոնք բացի կապիկներից ու չներից չորս հոգի էին, չերմ սիրով ու բարեկամարար ընդունեցին Գէորգին: Միստէր Բարտօնը, որ մի բարձրահասակ ու թխադէմ մարդէր ուրախ աչքերով ու կարճ սպիտակ մազերով, քաղցրիկ ժպիտներ էր ընծայում նորան, գլուխը հօրը յեցած կանգնածէր Թովմասի տասներկու տարեկան քոյր՝ Թօդա Բարտօնը, որը հօր հետ դուրսէր եկել հիւրին ընդունելու մաքով:

Դահլիճի դաներին կանգնածէր մի անձն, որի ահապին դէմքը առաջին հայեացքով սարսափեցնու-

մէր մարդուն: Դա գեներալ Մակ—Գուգալն էր, մի շատ բարձր ու լայնաթիկունք ծերունի:

— Ի՞նչ է, Բարտօն, չլինի՞ թէ այդ տղայոց ամբողջ դիշեր նախասենեկումն ես պահելու: Ես դեռ այստեղ էլ ցրտից սառեցայ:

Միստէր Բարտօնը ծիծաղեց և բոլորին ներս տարաւ հիւրասենեակը: Փոքր ժամանակից յետոյ տղայքը առանձնացան իւրեանց սենեակները, որ շորերը փոխեն: Գէորգին Թովմասի սենեկի մօտ մի առանձին սենեակ տրուեցաւ:

— Գիտե՞՞ս ինչ կայ, ասումէր Թովմասը, Թօդան մի նոր գաստիարակչուհի ունի, որ գեռ երկու երեք օրէ ինչ եկելէ: Նա Ֆրոնսիացի է ու շատ գժուաթութեամբ է Անգլիերէն բան հասկացնում: Մենք բոլորս Ֆրանսիերէն շատ վատ ենք հասկանում: Բացի հօրեղբօրիցս և սա է միշտ նորա հետ խօսում:

— Կսի՛ր, Թովմա՛ս, այդ մէկ քոյրն ունիս միայն, ընդհատեց Գէորգը:

— Այո՛. Հայրս մի անգիտան տղայ ունի և մի միայն կատու—աղջիկ: Սակայն առաջին հայեացքից գժուար կհաւատայ մարդ, թէ Թօդան չանգեր կարողէ ունենալ: Հա՛, ես պատրաստւումէի մի բան պատմելու: Այ, միաս եկաւ, ափիկն Թուժէվիլը խնդրեց ինձ, որ իւրեան Անգլիարէն լեզուով գեղեցիկ խօսքեր ու նախագասութիւններ սովորցնեմ: Ես կատարեցի նորա ցանկութիւնն ու յոյս ունիմ, որ ինձ կյաջողի լսել նորանից՝ իմ սովորցրած խօսքերս:

Թովմասը ծիծաղեց կարծես թուլացաւ և այսպիսով աշխատումէր զուարձութիւնն պատճառել ըն-

Կերոջը: Նա Գէորգին չասաց թէ ինչ բառեր էր առ
վորցրել տիկին Ռուժէվիլին, բայց մեր հերոսի հե-
տաքրքրութիւնը շուտով բաւականութիւն ստոցաւ:
Երբ աղայքը հիւրասենեակը մոտան, Ռոդան ու նորա
դաստիարակչուհին, որ մի չափահաս կին էր, արդէն
նստածէին բազմցի վերայ:

Միստէր Բարտոնն ու զօրապեսն էլ իսկոյն մտան
այնտեղ և վերջինս նստեց Ֆրանսիուհու կողքին:
Նոցա Ֆրանսիերէն խօսակցութիւնից Գէորգը իմացաւ,
որ զօրապետը խորհուրդէր տալիս նորան Անգլիերէն
լեզուն լսա սովորել և սկսաւ գովել նորա արտաբե-
րութիւնը: Մի քանի բուշէից յետոյ իմացրին, որ
Ճաշը պատրաստէ, ամենքը վերկացան իւրեանց ահ-
վերից: Երբ զօրապետը ձեռքը մեկնեց Ֆրանսիուհուն,
սա ամենապարզ կերպով ասաց նորան. «Ճէր, դուք կա-
տարեալ յանդուզն էք: Նորա խօսքելը շփոթեցին
բոլոր ներկայ գտնուողներին: Սկզբում Թովմասը բարձր
ձայնով ծիծաղեց: Զօրապետը խորը ողջունեց ու
ասաց, «աիկին, պիտի խօստովանուեմ, որ դուք ձեր
խօսակցութեանը շատ օտարոտի արտայայտութիւն
էք տալիս: Խեղճ կինը պարզ նկատեց, որ ինքը
սխալուած էր, Ճիշտ չհասկանալով բանի էութիւնը՝
նա լուռ ու մունջ բոնից զօրապետի ձեռքը: Միստէր
Բարտոնը շատ բարկացած էր թւում, նա յայտնի
կերպով կասկածումէր յանցաւորին, բայց աւելի լաւ
համարեց առ ժամանակ լսել:

Ճաշի ժամանակ խօսք լնկաւ Թովմաս Բարտոնի
ապագայ վիճակի վերայ: Առաջիկայ տարուայ վերջը,
որի նախընթաց օրը ածնում էին այդ օրը, Թովմասը

պիտի Հնդկաստան գնար: Ելր խօսումէին Հնդկաս-
տանի վերայ, ծերունի զօրապետը սկսեց զանազան
պատմութիւններ անել, որոնք շատ օգտակար էին
աղջոյց համար: Եւ ի՞նչ ասես, որ նորա գլուխ չէր
անցել: Համարեա' թէ Հնդկաստանի բոլոր վայրինի
կենդանիները որսացել էր նա: Ճաշից յետոյ, երբ
Թովմասը հօր պահանջից սոխորուած խօստովանեց
տիկին Ռուժէվիլ առաջ իւր հնարած կատակը և
ներողութիւն իննդրեց նորանից, ամենքը նստեցին
կրակի շուրջը և զօրապետը, ունկնդիրների իննդրքով,
նորից գարձաւ Հնդկաստանում իւրեան պատահած
արկածների պատմութեանը:

Ծերունի զօրապետի պատմութիւնները վերին
աստիճանի գրաւեցին Գէորգին: Ամբողջ զիշեր երա-
զումնա միմիայն վաղքեր, արձեր, օձեր ու բորենի-
ներ էր տեսնում: Նոր տարի առաւոանեան նա զարթ-
նեց այնպիսի անյադ ցանկութեամբ գէպի արկածներն
ու զօրապետի նկարագրած տեղերի տեսնելը, որ
միտքը զրեց անյապաղ իւր ապագան որոշել ։ Նա
որոշեց նոյն իսկ օրը գրել իւր խնամակալին ու յայտ-
նել որ ինքը ցանկանումէ մի տարուց յետոյ Հնդկա-
կան բանակը մտնել: Գէորգը իսկոյն և եթ իւր վճի-
ռան ուրախ որովմասին և երկուսը միասին ուրախ
ուրախ որոշեցին իւրեանց ապագայի գաղափարներն
ու յոյները: Այդ մասին նոյն օրը նոքա խորհուրդ
հարցրին և միստէր Բարտոնից ու զօրապետից, որոնք
հածութիւն տուին նոցա մտածմունքին: Զօրապետը
պնդումէր, որ Հնդկաստանը իւր գերազանցութեամբ
գործունէութեան ընդարձակ դաշտ է իւրաքանչիւր

երիտասարդի համար, ով միայն հակումն ունի գեղի զինուրական կետանքն ու արկածները: Միենայն գիշերը Գէորգը նամակ գրեց Մայլս Ռոլլէստոնին, որով ինդրում էր նորա համաձայնութիւնը իւր ընտրած նպատակի համար:

Այսպիսով նոր տարին աւելի բաղտաւութեամբ սկսուեց մեր հերոսի համար, քան կարելի էր սպասել: Նո արդէն կատարեալ կերպով հաշտուցաւ իւր նոր վիճակի հետ ու յուսով սպասումը իւր ապագային:

ԳԼՈՒԽ ԺԵ.

ԾՆԴԴԵԱՆ ՏՕՆԻՆ ԾՈՎԻ ՎԵՐԱՅ:

18.. Թուի Գեկտեմբերի 20ը նշանաւոր էր Գէորգի կեանքի մէջ մի երեւի անցքով: Սուտհամակտօն քաղաքի փողոցները դատարկ էին, ցեխոտ ու տիտոր. նաւահանգիստը փոքր ինչ մաքուր էր և աւելի կենդանութիւն էր ցոյց տալիս: Գէորգն ու Թովմասը այդ օրը ճանապարհ սկիտի ընկնեին դէսի շնդկաստան. նոքա արդէն «Գանդէս» շոգենաւի տախտակամածի վերայ էին կանգնած: Տղայոց ուղեկցում էին Մայլս Ռոլլէստոնն ու միստէր Բարտօնը: Գէորգը առանց մի առանձին ցաւակցութեան թողնումէր իւր հայրենիքը: Նորա համար ամենից ծանրը Նօրա Մարտինից բաժանուելն էր:

Շոգենաւի զանգի ձայնը լսուեց, որ ապգական-ներին ու ուղեկցողներին հրաւիրումէր ափը վերա-

դաւնալ: Մայլս Ռոլլէստոնն ու միստէր Բարտօնը վերջին անգամ էլ սղմեցին մատաղահաս տղայոց ձեռները: Նուտով շոգենաւը նաւահանգստից հեռացաւ:

Դուրսը ցուրտ էր և երկու տղայքը շուտով ներս մտան նաւասենեակը, ուր այլ ևս կային. Մադրաս սւզկորուող երկու երիտասարդներ: Նոցանից մինը, Պիտէր Գէյիէրը, պառկածէր կախ ընկած մահձի մէջ և սկզբիցն և եթ ծովային հիւանդութեան նշաններն զգալով՝ իւր համար կոնք էր պատրաստել: Միւսը, Զէկ Հարդին, անդադար քրթմնջումէր. երբեմն ընկերների վերայ, իբրև թէ նոքա և իւրեանց ծանրոցները խիստ մեծ տեղին բռնում, երբեմն այն ընկերութեան վերայ, որին շոգենաւնէր պատկանում, թէ ճանապարհորդները շատ ձանձրացնում են իւրեանց: Գիշեր ժամանակ մրրիկ վերկացաւ. նաւապետը որոշեց տեղից չարժուիլ մինչև լուսանալը: Չնայելով այս բանին, «Գանգէսը» զօրեղ կերպով տատանուեցաւ, որից արտնեղցան մէր տղայքը. բայց այս նեղութիւնը շատ փոքր էր համեմատելով այն նեղութիւնների հետ, որ նոքա պիտի կրէն ապագայում: Լուսադէմին հրամայուեցաւ շոգենաւի բոլոր փեղկերը փակել ու առագաստը իջեցնել: Սակայն չնայելով այս բոլոր նախազգուշութիւններին, ալեքը հասաւ սանդուխներին ու թափանցեց նաւասենեակների մէջ էլ:

Այսպէս սկսուեց ծովի վերայ առաջին օրը: Բաւական երկար ժամանակ նստելով նաւահանգստի մէջ՝ Թովմասն ու Գէորգը որոշեցին վերջապէս ընդհանուր նաւասենեակը մտնել, չնայելով որ

Նաւը շարունակ և խիստ տատաննում էր: Անդադար սղղալով ու հաւասարակշռութիւնը կորցնելով՝ երկու տղայքը սկսան սանդուխքը բարձրանալ: Դէռդը արդէն վերևի աստիճանին էր հասել, երբ շողենաւը մի առանձին ուժգնութեամբ շարժուեց և մեր հերոսը դիսի վայր առաջ ընկաւ նաւի մէջ: Նա զգայ, որ զուլսը մի փափուկ ու կոլոր բանին զարկեց և մի ենոյն ժամանակ լսեց հայհոյանքի ու նախատանաց ձայներ: Անշուշտ նորա զուլսը դիպել էր մի շատ հաստ պարոնի ուժեղ ու լայն կրծքին, որ նոյնպէս նաւի տատանումից վայր էր ընկած: Պարոնը շատ բարկացածէր, սակայն թումասը ուրախ ուրախ ձայնեց Գէորգին: «Այս անդամ լաւ պրծար, սիրելիս, փափուկ բարձի վերայ ընկար»:

Ինչ փառահեղ տեսարան երեւցաւ մեր հերոսներին: Շոգենաւը արձակ համարձակ առաջէր գնում: ալիքները աւելի ու աւելի էին բարձրանում, ամեն կողմից շրջապատելով շոգենաւը և կամ մի վայրկեան յետ մզուելով՝ որպէս գի միացեալ զօրութեամբ նորից կատաղի կերպով յարձակուեն շոգենաւի վերայ: Երկիւղից բռնուած ճանապարհորդների մի փոքրիկ խմբի շուրջը, որոնք խռնւում էին միմեանց վերայ, շառաջումք ովկիանոսը, — կատաղի ջրերի անչափ կյուրը, որի պայծառութիւնը խրաքանչեւր վայրկեան աւելանումէր: Դէռդը խոր հոգւոց հանեց և նորա աչքերը սկսան փայլել: Նա մի օտարուի ցնցումն զգաց, ովկիանոսի տեսքը նորա հոգու մէջ անմիտ ու աղմլալից ուժգին հիսցումն առաջացրեց:

Սակայն Գէորգի այս զուարձալի զգացմունքը

երկար չքաշեց: Զրի աշագին լեռնակցյալ անսպասելի կերպով բարձրացրեց «Գանդէսը զարհուրելի բարձրութեամբ. թշուառ շոգենաւը դզրդաց, նորա ակները զարհուրելի արագութեամբ պտառմէին օդի մէջ. բայց մի վայրկենից յետոյ մի թեթև տաշեղի պէս վայր ընկաւ ջրի երեսին ու կարծես ընկղմուեց խորը հովտի մէջ: Հետևեալ կոհակները առաջ էին գալիս և շուտով ուրեմն շոգենաւը դարձեալ կրարձրանար, բայց վերջին ակնթարթին ալիքքը կարծես թէ կամաց յետ քաշուեց և սարսափելի աղմկով ու արագութեամբ հոսեց շոգենաւի վերայ, օդը ցնցուղներով լցնելով: Գէորգն ու Թովմաս Բարտօնը, երկուսն էլ ջարդուածէին ու ջրով թրջուած. նոցա բերանները, աշքերնու ականջները հո՛ բոլորն էլ ջրովէին լցուած: Երկու նաւասահիներ նոցա ոտի կանգնացրին ու պատուիրելով այդպիսի եղանակին նաւասենեակի մէջ նըստել՝ օգնեցին նոցա սանդուխքին համելու:

Հետևեալ օրերը անտանելի էին ճանապարհորդների համար: Ով որ մի չորս օր չէ անցրել ծովի վերայ գորեղ մրրկի ու ալիքի ժամանակի, չի կարող երեակայել թէ ինչ վիճակի մէջէ լինում մարդ՝ նաւասենելի մէջ նատած ժամանակ: Խեղդող օդը, ծովի ու տախտակամածի վերայ կատարուող իրողութեանց անձանօթ լինելը, տաժանելի անորոշ դրութիւնը, — այս բոլորը առաջացնումեն անտանելի յոգնածութիւն, փսխելու զիլսի պտոյտ գալ

Վերջապէս նոյն իսկ Ծննդեան օրը մրրկը փաքք առ փոքր հանդարտուեց: Այդ գիշերը համարեամբողջ ուրախ խումբը շարուեցան սեղանի շուրջը

ընթրելու համար: Գէորգն ու Թովմասը օրուայ մեծ
մասը տախտակամածի վերայ էին անցուցել և դայլի
ախորժակով դիմեցին երեկոյին սեղանատուն:

Տօնի պատճառով շոգենաւի մէջ վառուած էր
ավորականից զուրս ամբողջ ժամերով: Ընդհանուր
նաւասենեակը մի առանձին կենդանութիւն էր ստա-
ցել. ճանապարհորդները անցեալ օրերի տանջանքնե-
րից յետոյ մի փոքր աղատ չնշեցին, ուրախ երգեր
էին երգում և բարձրաձայն ծիծաղում: Տղայքը քնե-
լուց առաջ մի անգամ էլ բարձրացան տախտակա-
մածը, ծովի քաղցրութիւնը վայելելու համար: Նատ
մութը զիջեր էր. ոչ լուսինն էր երկում և ոչ աստ-
ղերը և թէպէտ մըրիկը հանդարտուած էր, բայց
սակայն հողմը դեռ ևս փչումէր և սև սև ալիքները
աղմկով գործումէին շոգենաւի շուրջը: Մի քանի
քոպէից յետոյ «Դանդէսի» մէջ խորին լուսութիւն տի-
րեց: Նաւապետը վերջին անգամ էլ պտտեց ամբողջ
շոգենաւը և առանձնացաւ իւր սենեակը:

Գէորգ Ռոլլէստոնը մի ժամկից աւելի չքնեց, մի
սարսափելի աղաղակ զարթեցրեց նորան:

— Կանգնեցէք, 'ի սէր Աստծու, կանգնեցէք:
— Ընթաց քր փոխեցէք, ընթաց քր փոխեցէք,
գոշումէր նաւապետը: Մի լուպէում ամբողջ շոգենաւի
մէջ շփոթ ու խառնակութիւն տարածուեց. կարծես
բոլոր ճանապարհորդները յանկարծ զարթել էին: Գէ-
որդն ու նորա ընկերները ձեռքն ընկած շորերը վրանե-
րին ծածկելով՝ շտապով ներս մտան հասարակաց
գահլիձը: Ամեն կողմից բացումէին նաւասենեակների
գոները և երկու սեռի ճանապարհորդները շտապով

դիմումէին սանդղքի կողմը: Գէորգը բարձրանալով
տախտակամածի վերայ, մթոն մէջ զժուարութեամբ
նկատեց մի սև ահագին կյտ, որ զարհուրելի արա-
գութեամբ դիմումէր շոգենաւի կողմը: Նոգեմեքե-
նայի ընթացքը փոխեցին, ակները հակառակ ուղ-
ղութեամբ սկսան շարժուել, բայց կարծես ուշ էր:
Մէծ առագաստաւոր նաւը ալիքները կտրելով՝ գնու-
մէր քամու ուղղութեամբ: Նորա վերայ կրակ չէր
երևում: Գէորգը անշարժ կանգնած նայումէր այս
ահագին հրաշքին, որ կարծես կատարուումէր երկնքի
մութը տարածութեան մէջ: Ճանապարհորդները
վտանգաւոր դրութեան մէջ էին անկասկած: ոչ ոք ձայն
չէր հանում: ամենքի շնառութիւնները կարծես
կապուել էին: Ակները եռանդով աշխատումէին, բայց
առագաստաւոր նաւի ընթացքի ուղղութիւնը չէր
փոխում, — մի բոգէ էլ և կարծես նա պիտի խը-
փուէր շոգենաւի տախտակամածին:

ԳԼՈՒԽ ՃԲ.

ՄԻԶԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎՔԻ ԱԼԻՔՆԵՐԻ ՄԷՋ:

Մի զօրեղ ճայթոց լուսեց, որին չետեկացին
զարհուրելի աղաղակներ: Նոգենաւը կենդանի էակի
պէս զլրդաց, թեքուեց կողքի վերայ և այնուհետեւ
յաջող ընթացքով ուղղուեցաւ, զըկուելով առաջնա-
կայմից ու շոգենաւի ծայրը փշուելով, որի վերայ
նկարած էր Գանգէս գետը ձեւակերպելով մի նազելի
սպիտակ կին: Խւրաքանչիւրի թեթեացած սրտի

խորքից մի մի ա՛խ զուրս ելաւ. այս երեք, չորս լուպէի մաշող անորոշութեան մէջ նոքա այնքան դարձուրելի տանջանք կլեցին, որից մի քանի տարի շարունակ շարժարուեցան Փիղեքապէս և բարոյապէս։ Մի տեսակ հրաշք էր, որ նոքա ազատուեցան այն վտանգից։

Նրեք օրից յետոյ «Թանգէսը», յուրախութիւն բոլոր ճանապարհորդների, մտաւ միջերկրական ծով։ Գէորգն ու Թովմասը հիացմամբ նկատեցին Զիբրալտարեան հրուանդանը։

Գէորգ, սա ծերունի Զիբրալտարնէ, դոչեց Թովմասը, մենք շուտով խարիսխ կձգենք։

Նրկնակապոյտ ծովը հանդարտ էր ու փառաւոր. օդը տաք էր և առանց ամենաաննշան հողմի։ Պըժուար կարելի էր հաւատալ, թէ Յունուար ամիսն էր և թէ դեռ մի շաբաթ էր անցել երբ նոքա մի ձիւնալի ու ցուրտ կիշեր թողել էին Անգղիայի ափը։

Եղենաւը կամաց կամաց մտնումէր ծոցը, ուր խռնւումէին բազմաթիւ նաւեր։ Հողմային եղանակի պատճառով «Թանգէսը» երկու օր յետ մնաց և նաւապետը ճանապարհորդներին նախազդուշացրեց, որպէս զի նոքա չուշանան ափումը, որովհետեւ ածուխին խնայելով՝ նա մոտադիր էր ճանապարհը շարունակել։

Մի քանի վայրկենից յետոյ Թանգէսի մէջ մի անսովոր խառնակութիւն ընկաւ։ Ոմանք նատումէին շոգենաւի մէջ, միւսները ափն էին գուրս գալիս։ Զիբրալտարի ճոխ՝ համարեա՛ արեւադային բուսականութիւնը, հրաշալի տաք կլիման, վերջապէս ոսը

գետին գնելու բախտաւորութիւնը — այս բոլորը մեր տղայոց մեծ զուարձութիւն և ուրախութիւն էր պատճառում։ Նոքա կառք վարձեցին և հասնելով հրուանդանը ցամաքի հետ միաւորող պարանցին՝ անցան Խսպանական հողը, լոկ միայն այն գուարձութեան համար, որ պարծենան թէ Խսպանիա էլ են գնացել։

Նրեկոյին նորից «Թանգէսի» խարիսխը բարձրացաւ։

Սիջերկրական ծովը հանդարտ էր և օրերը համարեա՛ երջանիկ էին անցնում։ Յերեկով տախտակամածի վերայ կտաւեին փուռմ (այդ բանը տէնա է կոչւում և գործ է դրւում արեի ճառագայթներից ազատ պահելու համար), որի ստուերի տակ ճանապարհորդները կարդումէին, աշխատում կամ խօսում։ Երեկոյին տղայքը պարում էին։

Բայց միանգամ Ճաշկը յետոյ ճանապարհորդների բոլոր խումբը յուզուեց մի իրողութեամբ, որի հերոսը Գէորգը հանգիսացաւ։ Սա նաւի կողքին յեցած տխուր կերպով նայումէր Ալժիրիայի ափին, որ հեռուից փայլումէր։ Այնտեղ, հենց նորա կողքին, կանգնած էր մի գայեակ ձեռքին բռնած մի մանուկ։

— Խսպառ ուժից ընկայ. օ՛հ, ինչ անտանելի ծանր աղջիկ է սա։ Ես գեռ ևս ծովային հիւանդութիւնից չեմ առողջացել. գեռ ինքս չեմ կարողանում ոսի կանգնել խակ ձեռքին էլ աշա՛ մանուկ եմ բռնած։ Մի փոքր զոնէ հանգստանամ։

Այս ասելով նա աղջկան նստացրեց շոգենաւի լայն կողքի վերայ ու ձեռքով էլ կամաց բռնեց։

— Ասեցէք, դպյեկիկ, մանկանը պինդ բռնեցէք,
Նախաղդուշացրեց նորան Գէորգը:

Մանուկը սկսաւ ուրախ ուրախ ծիծաղել և
ձգուել դէպի Գէորգը ուռած այտերով: Գէորգը մի
փոքր խաղաց աղջկայ հետ և յետ դառնալով՝ ու-
զումէր հեռանալ: Այդ բոպէին լսուցաւ դայեկի
սուր աղաղակը: Երեխան ընկել էր ծովը: Գէորգը
առանց մի բոպէ անգամ մոածելու՝ նաւի կողքից
թռաւ ծովը մանկան բռնելու նպատակով:

Նա շտապ լողալով՝ հասաւ և բռնեց աղջկան նյոյն
իսկ վայրկենին, երբ սորան երկրորդ անգամ ջուրը գուրս
հանեց: Գէորգը աղջկանը նստացրեց իւր ուսին: Աղ-
ջեկը չէր շարժւում և ոչինչ ձայն չէր հանում: Այդ
գործողութեան միջոցին «Գանգէսը» կանգնած էր ան-
շարժ և նորանից շտապով ուղարկուած էր օդնա-
կան նաւակը: Երկու երեք բոպէից յետոյ Գէորգն ու
աղջեկը փրկուած էին: Նաւակով եկել էին մի բժիշկ
ու գնդապետ Գօնքարը՝ աղջկան հայրը: Գէորգը ու-
րախութիւնից չփիտէր ինչ անէր, երբ բժիշկը յայտ-
նեց, որ աղջեկը կենդանի է:

— Նաւապեցէք, տղայք, դոչեց բժիշկը, ամեն
բան ժամանակից է կախուած: Նաւաստիները որքան
ոյժ ունեին աշխատումին. մի բոպէ շահցաւ, ինչ
բժիշկը մանուկը ձեռին մտաւ շոգենաւը և շտապով
իջաւ նաւասենեակը:

Յանկարծ ամբողջ շոգենաւի մէջ տարածուեցաւ
այն ուրախալի լուրը, թէ մանուկը կենդանի էր:
Գէորգը զգաց, որ իւր աչքերից արտասուքները առատ
կերպով դուրսէին թափւում: Այդ բոպէին գնդապետ

Գօնքարը մօտեցաւ նորան: Գէորգը այն աստիճան
յուղուեց այս պատուական պարոնի արտայայտած
ջերմ շնորհակալութիւնից, որ աւելի ուրախ էր իւր
մենեակը փախչելու, անհրաժեշտ համարելով փոխել
իւր բոլորովին թաց շորերը:

Այս եղելովթեան հետեւալ օրուայ պարզ ու-
լուսաւոր երեկոյին «Գանգէսը» մտաւ Մալդայի նաւա-
հանգիստը: Որովհետեւ շոգենաւը ճանապարհ սիտի
ընկնէր լուսաբացին, ուստի միստէր ու միստիս Գօն-
քարները, Գէորգի ու Թովմասի հետ, վճռեցին իս-
կոյն և եթ փոքր ինչ զբանել քաղաքի մէջ: Նոքա
անցան նեղ փողոցներով, որոնց երկու կողմերը բարձ-
րացած էին բարձրաշեն տներ, զմայլեցան մայր — եկե-
ղեցու վերայ և ցաւեցան, որ չպիտի կարողանացին
այդպիսի ուշ միջոցին քաղաքի արժանաւոր տեղերը
տեսնել:

Երեք օրից յետոյ «Գանգէս»ով ճանապարհոր-
դողները գուրս եկան Աղէքսանդրիայի ափը: Այս
քաղաքում նոքա տեսան շատ հետաքրքիր բաներ. —
փողոցներով անյնումէին բեռնաւորած ուղտեր. մար-
դիքը և մանաւանդ կանայք բաւական օտարոտի
կերպով էին հագնուած, կանայք գլխներին ծածկած
ունեին զանազան գոյների ծածկոցներ, երկու փոքրիկ
ծակերով աչքերի համար: Փողոցները առաւել ծա-
ռուղիների տեսք ունեին. նոցա երկու կողմերը տնկած
էին արմաւենիներ: Առ հասարակ նոցա տեսած բո-
լոր բաները զօրեղ տպաւորութիւն ունեցան Գէորգի
վերայ:

Աղէքսանդրիայիցը Գէորգն ու Թովմասը ուղեւո-

բուեցան դէպի Սուէց, ուր նստան աՀաբէշստանա շուգինաւը, որով և շարունակեցին իւրեանց ճանապարհը դէպի Հնդկաստան։

Զնայելով որ Յունվար ամիսնէր, Կարմիր ծովի վերայ օղը սարսափելի տաք էր։ Գէորգն ու Թովմասը ձկների պէս միմիայն ջրումն էին ազատ շնչում, ուր և անցէին կացնում օրուայ մեծ մասը։ Բայց սորա փոխարէն արեաղարձային հրաշալի գիշերները լիապէս վարձատրումէին մեր աղայոց այն տանջանքների տեղ որ նոքա կրում էին ցերեկը։

Նոդենաւը կանգ առաւ Ադէնում ածխի պաշար վերցնելու համար։ Նորա շուրջը լողումէին բազմաթիւ բնիկներ։ Նոցա սե, տղեղ գէմքերը ծածկուած էին խիտ մազերով, որոնք ներկուած էին սպիտակ կամ կարմիր գոյներով։

— Բարութիւն արէք, պարոններ, գոչումէին նոքա, ձգեցէք մի փոքրիկ դրամ և մենք իսկոյն յատակի խորքից կհանենք։

Գէորգը նաւի կողքից մի կառոր սե փող գցեց։ Գեռ դրամը յատակին չհասած՝ սեամորթերից մինը խորասուզուեց նորա ետեից ջրի մէջ և նոյն դրամը ձեռքին՝ երեաց ջրի երեսին։

Նոդենաւը Բարելմանդիրի նեղուցն անցնելով՝ մտաւ Հնդկական ովկիանոսը և շուտով խարիսխն ձգեց Մաղրասի նաւահանգստի մէջ։ Նաւակները եռում էին շոգենաւի շուրջը, ամեն կողմից լսումէին օտարահնչներն իառնաշփոթ խօսակցութիւններ։ աջ և ձախ տեղում էին սե գէմքեր ու բազմոգոյն դլխարկներ, այդ տեղ լստ երեսութիւն շատ մեծ կարօտու-

թիւն կար հանգերձի։ Անամպ, կապոյտ երկնքի տակնէ գտնուում Մաղրաս գեղեցիկ քաղաքը։ Նորա սպիտակ ու հարթ շինութիւնները փայլումեն արեի ճառագյթներից, իսկ ստորոտումը ձգւումէ աւազուտ ափը, որ ոռոգւումէ ժայռահար, ալիքներով։

ԳԼՈՒԽ Ժ.Վ.

Բ Ռ Ն Ո Ւ Ա Ծ Գ Ո Ղ Բ։

Գէորգն ու Թովմասը Մաղրասում չմնացին, այլ ուղղակի գնացին Ա. Գէորգի ամրոցը, ուր ներկայացն իւրեանց զլխաւորին։ Նոքա ստիպուեցան մի քանի օր մնալ Մաղրասի մօտ գտնուած Պալավարում ասուած փոքրիկ գիշաքաղաքում, քանի որ գեռ զօրքի մէջ չէին հաշուած։ Այդ միջոցին Թովմաս Բարտօնը յիշեց, որ մի քանի նամակներ ունի յանձնելու Մաղրասի բնակիչներից մի քանիսին։ Այս նամակները այն հետեւանքն ունեցան, որ գոյա մի քանի տեղ հրաւիրեցին։ Այսպէս նոքա մի առաւօտ ճանապարհ ընկան գէպի քաղաքի այն թաղը, ուր բնակուումէր հարուստ վաճառական Մարաբունը։ Նոքա կանգ առան մի գաստակերտի մօտ, որ շրջապատած էր մեծ այգիով և անցնելով բանան անուանած ծառերով պատած լայն ծառուղու միջեց՝ կանգնեցան դռան առաջ։ Նոցա պատահեց նոյն իսկ տանտէրը, մի բաւական հաստիկ, ցածրահասակ ու թխագէմ պարոն, մեծ մեծ, սեաւ ու կորնթարտ աչքերով։ Միատէր Մարաբունը ունէր կին, երկիք աղջիկ ու երկու

աղայ: Սոքա ամենքը բարի էին ու սիրելի և հպարտանումէին կարծես հօր հարստութեամբ. բոլորն էլ ցանկանումէին երոպացի երևելով, որ նոցա հայրը երզումցի էր (Հայուսառանցի). ամենքն էլ շատ սիրով էին խօսում կօնդօնի ու Պարիզի վերայ և խիստ խնայողաբար էին վարւում արևելքի բարքի ու սովորութիւնների վերաբերութեամբ:

Ճաշը շատ փառաւոր էր: Թովմասը ակամոյ ու շաղրութիւն գարձրեց ծառաների վերայ: Խերաքանչիւր աթոռի մօտ կանգնած էր մի մարդ ոտից զլուխ սպիտակ հաղնուած, մի մեծ զլսարկ զլխին, բորիկ սեաւ ոտներով ու արծաթեայ մատանիներ ոտների մատներին հազգրած: Սենեակը շատ ընդարձակ էր և առաստաղեց կախ էին արած երեք հատ մեծ հովհարներ: Սառեցրած զինին ու հովհարների միակերպ շարժողութիւնը մի տեսակ թմրութիւն էին պատճառում: Թովմասի քունը քիչ էր մնում տանէր ճաշը վերջերին, երբ նորա ականջին հնչեցին Գէորգի խօսքերը.

— Զարմանումեմ, որ ձեզ մինչև այսօր չեն կողոպտել պատասխանեց Գէորգը տանտիրօջ մի նկատողութեանը:

— Բանն այնէ, պատասխանեց միատէր Մարտունը, որ բնիկները յաճախ գողանումեն շատ մանր ու չնչին բաներ, գուցէ շատ անդամ և մի քանի ռուս փի^(*), բայց շատ քիչ է պատահում, որ նոքա թան-

(*) Ոսկեայ կամ արծաթեայ զրամէ Արևելքում Հընդկական ոսկեայ ռուսին արժէ 9 ռ. 68 կ. Պարսկականը 9 ռ.

կագին բան գողանան: Նս համապուած եմ, որ իմ ադամանդներս ապահով են:

Ճաշից յետոյ առնուէրը իւր հիւրերին տարաւ գործատունը, ուր մի քանի բնիկներ տաշումէին ու կոկում ադամանդները: Գործատունը տան վերին յարկումն էր զսնւում: Նորա մօտ մի կողմը նոյն իսկ միատէր Մարտրունի ննջարանն էր, միւս կողմը նշանակուած էր սենեակ Թովմասի համար:

Փամբ ատակին ամենքը առանձնացան իւրեանց սենեակները: Գէորգը ներքելը պիտի քնէր և Թովմասը պատշգամբում բաժանուելով նորանից՝ տանտիրօջ հետ բարձրացաւ վերին յարկը: Նորա սենեկի երկու մեծ լուսամուտները, որոնք նայումէին պաշտգամբին՝ բոլորովին բացեին, ինչպէս միշտ անութեն Հնդկաստանում և միմիայն վանդակափեղկերներին պինդ փակած: Մահճակալի շուրջը պատումէին վարագոյններ մոծակներից պաշտպանուելու համար: Մի բայց գուռն էլ տանումէր դէպի լուացարանը:

Թովմասը շտապով հանուեց ու վարագոյններն իջեցնելով՝ պատկեց: Լուսնի գունատ ճառագայթները յատակի վերայ նկարում էին գեղեցիկ ձևեր: Թովմասը, ընայելով որ յոգնած էր, չկարողացաւ քնել մոծակների բզզրցից: Կարճ միջոցից յետոյ վարագոյրների մէջ նորա շունչը սկսեց կարուիլ և առանց ամենելին մոտածելու՝ մի կողմը ձգեց բոլոր վարագոյնները: Ուշ, զիտէք թէ ի՞նչպէս ծանր կերպով տուժեց նա

19 կ. Հնդկական արծաթեայ ռուսին 60 կ. իսկ Պարսկաստանինը 1 ռ. 22 կ.

այս սխալը. Վարագոյները բարձրացրեց թէ չէ, բզզոցը նոյն իսկ նորա ականջների տակից սկսուեց լուսիլ: Թովմասը մի վայրկեան սպասեց ու բոլոր ուժով զարկեց իւր ականջին: Բայց աւաշը նա միայն վետաեց իւրեան: Թշնամին թռչելով՝ իմացրեց իւր ցեղակիցներին, թէ պառկածէ Անգղիսյից նոր եկած մի գեղեցիկ պատանի առանց ամենելին պաշտպանուելու Մադրասի մոծակների քաջասիրտ խմբից: Թէպէտ Թովմասը շատ էլ աշխատումէր քնել: Բայց անիրաւ հօգեհան մոծակները չեին հանգիստ թողնում նորան:

Նորան մնում էր միայն, որ գլուխը պաստառի տակ թագցնէր ու անշարժ պառկէր: Բայց յանկարծ նկատեց, որ յատակին երեւեցած լուսի շերտերը կիսով չափ անյայտացան: Թովմասը մոտածեց, թէ գուցէ լուսինը ամփի ետել ծածկուելէ, բայց տեսաւ, որ չէ, լուսի շերտերը դարձեալ պարզ կերպով երեւացին: Թովմասը դուրս նայեց պատուհանից. ստուելով կրկին անգամ երեւեցաւ. Նա այժմ պարզ կերպով նկատեց պատշզամբում կամ գնած մի մարդու պատկեր: Թովմաս Բարտօնը վերկացաւ, կանդնեց անկողնի վերսոյ ու սկսեց մաաղբութեամբ նայել վանդակափեղ կերին: Փեղի երկու փայտեայ շերտերի միջից ներս էր կոսել մի մարդ իւր մերկ, սե ու զօրել ձեռքը: Նա խարիսափելով որոնումէր վանդակափեղի սողնակը, որ և բացեց. յետոյ նոյնպէս կամաց ու անշունչ անյայտացաւ: Մի վայրկենից յետոյ սե ստուելով ներս թռաւ սենեակը: Գողը երեկի բոլորովին հաւատացած էր, որ անկողնում ոչոք չի լինիլ պառկած, որովհեաւ չնայեց անգամ այն կողմը, այլ ուղղուիլ

գնաց դէպէի այն սենեակը, ուր պահումէր աղամանդը: Նա յաջող միջոց էր ընտրել լուսինը մայր էր մոնում, իսկ նա այնպէս էր դատում անշուշտ, որ դիշերուան խաւարը կծածկի նորան հետախուզութիւնից:

Թովմասը տեսաւ, որ այն մարդը չկասկածեց անգամ, թէ ինքը այնտեղ ներկայ էր: Կ'նչ անէր: Օգնութիւն կանչէր: Բայց Թովմասը սրտով էր ուղում, որ գողին ինքը բռնէր առանց կողմնակի օգնութեան: Նա վայր թռաւ անկողնից և մտածելով, որ գողը գուցէ գանակ ունենայ իւր հետ, վերցրեց հետը իւր ձեռքին գտնուած միակ զէնքը, այնէ պաստառը և զգուշութեամբ ու տռանց ձայն ծպտուն հանելու բորիկ սոտով գնաց գողի ետևէից: Նւ այն վայրկենին, երբ նեղիլ թեքումէր բանալին դւան ծակի մէջ մոցնելու, Թովմասը յաջող կերպով ծածկեց նորա գըշին իւր պաստառը և գլորեց յատակի վերայ: Այդ յարձակումը այնքան յանկարծակի էր ու անակնկալ որ նեղը իւրեան բոլորովին կորցրեց և չկարողացաւ աղաղակը թագցնել: Վայր ընկնելու ձայնն ու աղաղակները գրաւեցին միստէր Մարաբունի ուշադրութիւնը, որ շուտով ձրագը ձեռքին ներս վագեց այնտեղ, իսկ երկու երեկ բոսէից յետ սենեկում երեւացին ծառայքը: Մինչ այս մինչ այն գողը ուշքի եկաւ ու աշխատումէր պաստառի տակից ազատուել Թովմասը բռնեց նորան մերկ մարմնից. սակայն գողը դուրս սողաց նորա ձեռքից, որովհետեւ նախազգուշութեան համար իւրեան օծելէր իւղով: Նա վագեց պաշտգամբը, բայց ծառաները բռնեցին ու ճանաչեցին: Այդ գողը

երբեմն աշխատում էր միստէր Մարաբունի մօտ և գործեան կասկածի տակ ընկնելով՝ կորցրեց եւր պաշտօնը:

Տանտէրը մեծ շնորհակալութիւն արաւ Թովմասին իւր աղմասները աղատելու համար: Գոզը բանտարկուեց այդում գտնուած խողերից մէկի մէջ և ամենքը ցրուեցան իւրեանց տեղերը:

Առաւոտեան, երբ Թովմասը պատշգամիր դուրս գնաց, լսեց մի տեսակ օտարուի աղմուկ և խօսակցութեան ձայներ: Ցած գնալով՝ տեսաւ լայն ծառուղու մէջ բնիկների մի խումբ, որոնք գալիսէին դէպի տուն: Թովմասը դառնալով ծառային, որ նախաձաշ էր պատրաստում, հարցրեց, թէ այդ ի՞նչ խումբ էր, որ իւրեանց կողմն էր գալիս:

— Դոքա այն գոզի ազգականներն են, որ այս դիշեր բռնուեցաւ: Ակելն աիրոջիցս խնդրելու, որ նորան:

Թովմասը դռներում կանգնած՝ ճշումէր ծովային առողջ օդը, որ առաւոտները միայն մի փոքր նորոգումէր Մադրասի խեղդով մթնոլորդը: Այս միջոցին այդին բաւական դեղեցիկ ահաք ունէր. բայց Թովմասը չկարսղացաւ վայելել ո՛չ օդի անուշահոսութիւնը, ո՛չ տեղի գեղեցկութիւնը և ամբողջ ուշադրութիւնը դարձրած ունէր սեամորթ խմբի կողմը: Երբ տանտելը դուրս եկաւ, բնիկները ջերմեռանդութեամբ երկրպագեցին նորան. նոցանից որոնք ոտներին կօշիկ ունէին հագին, իսկոյն հանեցին: Սակայն միստէր Մարաբունը նոցա բոլոր աղաջանքներին խուլ ձեւացաւ ու խումբը հեռացաւ բարձրաձայն քրթմնչելով, մա-

գերը քաղելով ու պատառոտելով վաները ձգած ցընցուիները:

Փոքր ժամանակից յետոյ ամենքը նստան ձիաների վրայ ու ուղելուեցան դէպի ափը: Փրփրացող ժայռահար ալիքներն ու նոցա տեսքը և ծովային օդը զուարթացրին մեր տղայոց: Երկու ժամից յետոյ ամբողջ խումբը տուն վերադարձաւ:

Մեր տղայքը երկու օր անցրին միստէր Մարաբունի հիւրասէր յարկի տակ: Այս միջոցին Թովմասը փոքր ինչ մրսեց: ՚Ն դէպ, այսաեղ պէտքէ նկատել, որ յօդացաւը, ատամնացաւն ու ամեն կերպի մրսելը տաք երկներում տւելի են տարածուած, քան թէ ցուրա ու խոնաւ աեղերում: Ամենքը կարեկցաբար օգնումէին Թովմասին, միստէր Մարաբունն ու նորա կինը առանձնապէս հոգումէին նորա մասին խորհուրդներ ու հրահանգներ տալով, որ նշանաւոր կերպով զայրացնումէր անհամբեր տղային: Նոյն րոպէին, երբ Թովմասը բարեկամաբար հրաժարական ողջոյն տալով ամբողջ գերդաստանին, Գէորգի հետ միասին նստեց կառքը, միստէր Մարաբունը մօտեցաւ կառքի դըռնակին, կրկին անդամ ջերմութեամբ սղմեց Թովմասի ձեռքը ու տուեց մի փոքրիկ ծրար:

— Վերցրէք այս, սիրելի՝ բարեկամն, և միշավուահ եղէք իմ ջերմ բարեկամութեան ու դէպի ձեզ ունեցած յարգանքիս վերայ, ասաց նա:

Թովմասը ձեռքով սղմեց ծրարը ու նորանում ինչոք պինդ բան նկատեց: Նա վսեմ կերպով դարձաւ Գէորգին:

— Ի՞նչ նշանաւոր ծերունի է, գուեց նա: Ան-

շուշան, Գէռ'րգ, նորա ինձ տուած ընծան մի քանի
կոտր ադամանդ պիտի լինի:

Նա շուտով պատառեց ծրարը և գտաւ նորա-
նում. շաքարից շինած հազել դեղ:

ԴԱՌԱ ԺԴ.

Ա Ի Ա Բ:

Տղայքը ընդունուեցան միւնոյն զօրագնդի մէջ.
Նոքա երկուան էլ միասին Մագրասից ճանապարհ ըն-
կան Բէլլարի գիւղաքաղաքը: Արդէն հինգ օր էր
ճանապարհին էին, այսինքն, Ճիշդ խօսելով, հինգ
զիշեր, որովհետեւ նոքա ցերեկները իջևաններումնէին
անցկացնում: Նոքա ճանապարհորդումէին մի փոքրիկ
կառքով, որի երկու կողքերը բաց էին ու ծածկած
վենետիկեան օդանցիկ վարագոյններով: Կրկին առաս-
տաղը պաշտպանումէր ճանապարհորդներին արեի
ուղղահայեաց ճառագայթներից: Կառավարը նստած
էր առաջեւը, նոյնպէս փոքրիկ յարկի տակ:

Թովմասը վճռապէս յայտնեց, որ մտադիրէ ամ-
բողջ մի քանի օր կանդ առնել ու գիշերը անկող-
նում քնել: Նոքա այս նպատակով ընտրեցին Գունդ-
լուր գիւղաքաղաքը, ուր նոցա բնիկ—ծառաների
խօսքով, երկելի որսի տեղէր:

Մատաղահաս աղայքը սաստիկ յոգնած էին
ճանապարհորդելուց: Միակերպ, ամայի տեղերը, խեղ-
դող տաքութիւնը և մանաւանդ ճանապարհին որ-
պիտի և իցէ արկածքի բացակայութիւնը, վհատեց-

բել էին նոցա և հոգեկան ուրախ դրութիւնը
փոխել:

Միանգամ պատշգամբում նստած միջոցին՝ նոցա
մօտ եկաւ Գէորգի ծառան Ոխպուրը ու հարցրեց,
թէ չե՞ն կամենում արդեօք խօսել մի քանի տեղա-
կան որսորդների հետ, որոնք իւրեանց ծառայու-
թիւնը առաջարկումեն մատաղահաս պարզներին:

Գէորգն ու Թովմասը խիստ բաւական մնացին
այս առաջարկութիւնից ու պատուիրեցին որսորդնե-
րին բերել Խջեանի փոքրիկ շինութիւնից երկեցան
երկու հոգի գիւղական տանտիրոջ հետ: Սոցա եր-
կար ողջոյններից ու խօսակցութիւնից յետոյ, որոն-
ցից մեր աղայքը շատ քիչ բան հասկացան, վճռե-
ցին լուսինը երկեալուն պէս որսի գնալ: Թովմասի
հարցին, թէ յոյս կայ արդեօք վագր որսալու,
գիւղապետը պատասխանեց, որ մի շաբաթ առաջ
վագրը յափշտակել է մի կին և հաւանական է, որ
կերել է նորան, բայց որ այնուհետեւ ո՛չ վագրին և
ոչ թշուառ զոհի որևիցէ մնացորդները չեն տեսել:

— Սա լաւ բան չէ, Վէ՛րգ, ասաց Թովմասը:
Ես կցանկայի այն կատուիկի հետ մենամարտել:

— Ի՞նչ կարողենք անել, վագրի որսը միւս ան-
գամին թողնենք, պատասխանեց Գէորգը, իսկ առ
այժմ բաւականանանք եղածովը:

Երկար հարցուվարձից նոքա համոզուեցան, թէ
անտառի լեռնային խորքում, որ լաւ ծանօթէր որ-
սորդներին, խիստ շատ կան սե արջեր ու յովազներ:
Այնուհետեւ բնիկները ողջունեցին ու անյստացան,
իսկ Գէորգն ու Թովմասը ճաշելուց յետոյ սկսան

իւրեանց զէնքելի պատրաստութեամբ պարապել։
Թովմասի հրացանը շատ թեթե էր ու յարմար,
իսկ Գէորգին նա տուեց երկար ու ծանր հրացան,
որ հարկաւորւում էր կալծամորթ կենդանիներին
զարկելու համար։ Նոքա ունեին նոյնպէս որսոր-
դական դանակներ, լոյն, սրածայր ու երկսայրի-
սեպերով։

Զէնքերը զննելով ու բոլորն էլ միանդամայն
անմնաս գտնելով, մեր մատաղահաս մարդիքը քնե-
ցին։ Գէորգը մի ամբողջ ժամ շուռումուռ էր գալիս
սյա ու այն կողքի վերայ. շոգը, մոծակներն ու
գուցէ հենց սրտի յուղմունքն էլ առաջիկայ որսի մա-
սին՝ խանգարում էին նորան քնել. վերջապէս նա մտա-
ծեց մահճակալը տեղափոխել ու տանել պատշգամբը.
այնաեղ թեթե քամիէր փչում և մոծակներն էլ
աւելի քիչին անհանգտացնում։ Որոշելով լուսաբո-
ցին զարթնել, նա շուտով ընկղմուեցաւ խոր քնի
մէջ։ Յանկարծ Գէորգը իւր դէմքի վերայ ջերմ շունչ
զգաց. աչքերը բանալով՝ մի քանի մատնաչափ
հեռաւորութեամբ նկատեց փայլուն ու կատաղի
աչքեր։ Լուսինը հենց այնէ բարձրանումէր և նոյն
գունատ լուսով Գէորգը որոշեց կարճիկ ուներով
մի մեծ կենդանի, ծածկուած երկայն մազերով—
դա վայրենի կատու էր, որ հանգիստ հոտոտումէր
նորան և գուցէ փորձէր էլ տեսնելու թէ ինչ համ
ունէր նա, եթէ Գէորգը ժամանակին չզարթնէր։
Սա իսկոյն անկողնից վայր թռաւ ու վրայ ընկաւ
հրացանին, բայց կատուն բոլոր ուժով փախաւ և
շուտով ծածկուեցաւ մացառների մէջ։

Որսորդները արդէն սոցա էին սպասում և իւրեանց
հետ թարգման վերցներով, ամենքը ձանապարհ ըն-
կան։ Բնիկները համարեա ամենեին զինուորուած
չէին. սակայն նոցա պարտաւորութիւններ միմիայն
գիտել կենդանին։ Որսորդներին այնպէս պատահեց,
որ ամբողջ կէս ժամ բաց դաշտի միջով պիտի անց-
նէին։ Յանկարծ նոքա լսեցին սարսափելի չարա-
գուշակ աղաղակ, որ հետզհետէ աւելի բարձրա-
նումէր. որսորդները սկսան բարձր ձայնով աղաղակել և
զարհուրանքի ու յուսահատութեան ձայներ ար-
ձակել։

Մի լոսկ չանցած ճագաբների մի ամբողջ խումբ
անցաւ. այն ձանապարհով, որ բաժանումէր որսորդ-
ներին՝ անտառից։ Յետոյ ամեն բան անյայտա-
ցաւ, աղաղակները աստիճանաբար մեղմացան, մի
տեսակ զարհուրելի ու զերծնական ասկաւորութիւն
թողնելով։

Շուտով որսորդները անտառը մտան։ Ծառերի
ճոխ Ճիւղերը հիւսւում էին նոցա զլմների վերայից,
գալարուն բոյսերը պատուումէին բների շուրջը և զե-
ղեցիկ բոլորակներով կախէին ընկնում բարձր Ճիւ-
ղերի վերայից։ Ժամանակ առ ժամանակ հնչւումէր
բուի կամ գիշերային ուրիշ թռչնի ձայնը։ Որսորդ-
ները մեծ դժուարութեամբ Ճեղքելով խիտ ան-
տառը, դուրս գնացին այնտեղից և մտան մի բացօ-
թեայ աւազուտ դաշտ։ Կա մի ցամաքած գետի
տաշա էր. այստեղ այնտեղ երեսումէին ահագին
քարերի կյատեր։ Բնիկներից մինը հաւատացրեց, թէ
փոքր ինչ հեռու գտնումէ մի խոր քարանձաւ, ուր

Նա գտելէ սև արջերի ամբողջ գերդաստան։ Նորան
հետեւլով՝ շուտով ամենքը հասան քարանձաւի
անցքին։ Նա դատարկէր. երեւումէր, որ արջերը
գնացել էին կերակուր գտնելու և շուտով պիտի վե-
րադառնային իւրեանց որջը։ Քարանձաւը ուղեկցի
խօսքի համեմատ երկու անցք ունէր։ ՎՃռեցին, որ
Գէորգը, Թովմանն ու նեգրերից մինը մնան մի անցքի
մօտ հսկելու արջերի դարձը. այն ինչ երկու ուրիշ
որսորդներ պէտքէ մնային քարանձաւի հակադիր
անցքի մօտ։

Գէորգն ու Թովմասը պառկեցան գետնին, աշ-
խատելով թագել քարէկոյտերի ետեւ. լուսինը
թոյլէր լուսաւորում, մի թեթև քամի բարձրացաւ,
լոյն էլ արդէն բացւումէր։ Փոքր ժամանակից յետոյ
մոյդ պատկերը (արջերի խումբը) հեռացաւ թաւ
անտառից և ուղեւորուեց քարանձաւի անցքերից
մէկի կողմը։ Յամրաքայլ ու արժանաւոր կերպիւ էր
ընթանում արջը, զդոյշ քայլելով աւագե վերայ։ Նո-
րա ետեւից երեւեցաւ մատակ արջը հասակով
նորանից փոքր և վերջապէս նոցա որդին ու ժա-
ռանդը։

— Ամբողջ գերդաստաննէ. Աստուած վկայ սիրաս
դող ընկաւ, դժուար թէ կարողանամ հրացանս ար-
ձակել շնչաց Թովմասը։

Արդէն որձը մօտ ուժ սաժէն հեռու էր քարան-
ձաւից։ Գէորգը, իբրի. պատասխան Թովմասի ողոր-
մաձայն խօսքերին, հրացանը դրեց ուսին ու ուղղե-
լով արջե սրտի սպիտակ բծին՝ արձակեց։ Արջը երե-
սի վերայ վայր ընկաւ։ Խեղձ մատակ արջը արդէն

մօտեցած էր որձին ու չգիտենալով իւրեան սպառնող
վտանգը, բարձրաձայն ողբումէր նորա վերայ, ար-
տայայտելով իւր ցաւը և գուցէ զարմանքը։ Մինչդեռ
այս ամենը կատարւումէր՝ արջեկը հետ էր փախել
անտառը, Տնողներին թողնելով բաղտի կամքին։ Թով-
մասը, որի սիրաը յանկարծ պնդեց, Գէորգի օրինա-
կին հետեւց և արձակեց իւր հրացանը. վերաւո-
րուած մատակ արջը բարձրաձայն մոնելով գլուխուեց
գետնին։

Տղայքը յարձակուեցան իւրեանց որսի վերայ։
Պարծենալու տեղիք ունէին. երկու մեծ արջերը
սպանուածէին առանց ամենափոքր բծի և մինչեւ
անգամ առանց բոպէական վասնգի։ Այժմ էլ փոքր
բան չէր պակաս. ոչ ոքի մոցովն անգամ չէր անցել
թէ այսպիսի մեծ աւար կունենան. ոչինչ նախա-
պարաստութիւն չէր տեսնուած զաղանները մինչեւ
իշեան հասցնելու. եթէ մէկ արջ լինէր, կաբող էին
զիցուք զլրելով էլ տանել, բայց երկուսն ուրիշ
բանէ։

— Կիւղեց մարդիք ապսպարենք, առաջարկեց
Թովմասը։ Ես իսկոյն Ոիպուրին ու միւս որսորդին
կկանչեմ։

Ասաց ու վաղեց, իւր գէնքը թողնելով գետնին՝
սպանած արջերի մօտ. մի քանի վայրկենից յետոյ
նա հասաւ ժայռի միւս կողմը, ուր պիտի լինէին
երկու նեգրերը. բայց ոք մի տեղ չկային։ Արե-
ւելքում արշալոյսը բացւումէր։ Նախ և առաջ եր-
կնքում թափառող թեթև ամպերը ներկւումէին ծի-
րանի գունով, իսկ յետոյ ոսկէգոյն ճառագայթները

բարձրանումէին դէպի վեր երկնքում. լուսնի գունատ ու ցուրտ լուսի փոխութլը՝ ցերեկեան լուսաւորի պայծառ այրող տաք լուսի, կարծես թէ մի վայրինում կատարուեց:

Թովմասը զուարձանումէր այդ փառահեղ տեսարանով: Յետոյ նայեց իւր շուրջը և զարմացաւ որսորդների բացակայութեան վերայ: Մի քանի քայլ հեռու գարձեալ ձգուումէր խիտ անտառ. նորա մօտ կար մի բարձր ծառ: Թովմասը պատահմամբ նայելով ծառի վերև, տեսաւ նորա վերայ մի ահազին կապիկ, որ զարհուրելի կերպով ծռմրւումէր ու բարկացած ձայնով կանչումէր ուրիշ կապիկներին, որոնք գտնւումէին քնքոյշ ճիւղերի վերայ և որոնք ըստ երկութին մայրն ու ձագերն էին: Որձը՝ իւր գիրդաստանին ամբողջապէս ծառի ամենավերին ծայրն ուղարկելով, կարծես հանգստացաւ, բայց զեռ էլ շփոթուած նայումէր իւր շուրջը: Թովմասը ակամայ հետեւց նորա հայեացքին, ենթադրելով, որ այդ կենդանին նկատած պիտի լինի Արագուրին ու որսորդին, որոց ինքը որոնումէր: Երեակայեցէք նորա զարհուրանքը, երբ իւր ծանօթ ու գէմքերի փռխարէն՝ նա տեսաւ մի ահազին վագր, որ գանւումէր մօտակայ ժայռի զլիխին:

Վազրը իւր փայլող աչքերը ձգեց Թովմասի վերայ, որ առաջին բոսկին հազիւ կարողացաւ իւր զրութեան բոլոր վասնղը հասկանալ: Այսուշեաւ նորա միտքը բացուեց: Հազարաւոր մուգեր ու զգացմունքներ միենոյն միջոցին զարթեցան նորանում: Միանգամայն ահօղնական լինելը, մերձակայ մահուան—

և այն՝ անփախչելի ու զարհուրելի, վայրի գազանի ձանգերով մահուան երկիւզը — այս բոլորը կայծակի պէս անցան թշուառ զոհի զլսովը: Թովմասը շունչ քաշելու համաձակութիւն չունէր. նա զիտէր, որ ամենափոքր շարժման միջոցին՝ վագրը անրապաղ յարձակուելու էր իւր վերայ: Զարհուրելի գազանի շրթուկնելը ծամածուեցան ու ահազին ժամիքները երեացին: Նա վերկացաւ, մի քանի քայլ առաջ եկաւ կարծես առաջ թուշելու նպատակով:

— Տէ՛ր Աստուած, ազատիր ինձ, արտասանեց Թովմասը ու հազիւ թէ այս խօսքերը արտարերել էր, երբ մի ձայնեղ, սուր թնկիւն հնչեցրեց օդը. վագրը նոյն խիկ կանգնած տեղը բարձրանալով՝ զարհուրելի մանչեւնով ցած զլորուեց աւազի վերայով:

Այս անսկնկալ կերպիւ ազատուելը մահից, որ անփախչելի էր թւում, այնպէս զօրեղ կերպով ազգեց Թովմասի վերայ, որ ստիպուեցաւ վայր ընկնելու համար ծառին դէմ ընկնել. ստիպյն մի բոսկից յետ նա իւր ոյժը հաւաքեց:

— Այ Աստուած օրհնի իմ հրաշալի հրացանս, գոչեց նա, երբ Գէորգը մօտեցաւ նորան: Ա՛խ, ուզումէի ասել որ Աստուած քե՛զ օրհնի, իմ ազնիւ բարեկամ: դո՛ւ ազատեցիր կեանքս:

Եւ քաշելով իւր մօտ՝ ջերմաջերմ հայրուրեց նորան:

Գէորգը տեսած էր հեռուից Թովմասի վտանգը: Բարերազգաբար, նա անցագաղ լցրել էր հրացանն ու զգուշութեամբ բարձրանալով աւազի վերայ այնքան մօտիկ, որ կարելի լինէր ճիշտ նպատակին ու դժւըլ

թագ էր կացել յաջող ըռադէի սպասելով։ Երբ վազրը տեղից վերէր կացել Գէորգը հրացանն ուղղելով գաղանի ձախ ուսին՝ ուղղակի սրտին էր զարկել։

Գէորգը չէր կամեցել կրկին անգամ արձակել, մորթը չփաշցնելու համար։ Երիտասարդները զգուշութեամբ մօտեցան ահագին գաղանին։ Կասկածի տեղից չէր մնացել. վազրը անշունչ պատկածէր և Գէորգը զարմանքով ու ակամայ հպարտութեամբ զուարձանումէր իւր զոհի վերայ։

Նեղբերից մինը գնաց գիւղեց սայլ բերելու, իսկ մնացած որսորդները պահպանումէին կենդանիների գիւղները գիշատող թռչուններից։ Գիւղի բնակիչները հրացան սպանած վազրը տեմնելով։ Նոքա համոզածէին, որ այս իսկ և իսկ այն գաղանն էր, որ յափշտակել էր թշուառ կնոջը։

Որսորդները վերադարձան իջևանը շողից յոդնած ու սարսափելի սովոր։ Նախաճաշից առաջ կշռադատելով նախընթաց գիշերուայ եղելութիւնները, նոքա չկարողացան խոստովանիլ, որ վերջապէս իւրեանց էլ մի ծանր արկածք էր պատահել։ Իսկ ինչ Արփուրին ու միւս որսորդներին է վերաբերում, նոքա շատ ու շատ առաջ արդէն գիւղն էին վերադարձել։ Սոքա քարանձաւի հակաղիր անցքը պահպանելու գնալիս՝ տեսելին այն ահագին վազրը ու նախ քան վազրը կընկատէր իւրեանց՝ փախելէին։

Ամենայն որսորդ սիրումէ իւր սպանած կենդանու մորթը պահել։ Գիւղի մէջ գտնուեցաւ մի մարդ, որ մորթեր մաքրելով ու պատրաստելով էր պարապում և նորան յանձնուեցաւ մատաղահաս

մարդոց աւարը։ Նա յանձն առաւ մորթը պատրաստել և ուղարկել Բէլլարի, ուր յիրաւի մի քանի շաբաթից յետոյ ստացուեցաւ։

ՊԼՈՒԽ ՃԵ.

ՃԱՇԻ ԱԽԵԼՈՐԴ ՀԻՒԲԲ:

Երկու ամիս էր արդէն, ինչ Գէորգն ու Թովմասը գնացել էին Բէլլարի։ Նոքա հեծելագնդի զլխաւոր բնակարանին մօտ, ուր և ծառայումէին, բաւական յարմար մի փոքրիկ կացարան գտան և այնտեղ բնակեցան երկուսը միասին։ Այդ քարաշէն միայարկ տունը շրջապատած էր մի փոքրիկ պարտիզով ու ծածկուած յարգով։ Նա արտաքին կողմից բաւական խղճուկ ու խարխուլ էր երեսում։ Երեք կողմը պատրշամբով էր պատած։ Ներսի մի գուռ տանումէր գէպի հիւրասենեակը, որի աղքատիկ կարասիքը երեսումէր, որ մի քանիսի ձեռք էլ անցել ամենից շատ ուշադրութիւն դրաւումէր իւր վերայ հին գաշնամուրը, որ Թովմասի սեպհականութիւն էր։ Պատերից կախած էին մի քանի լուսանկար պատկերներ շրջանակների մէջ զետեղած ու Գէորգի ձեռագործ բազմաթիւ ծաղըանկարներ։ Հիւրասենեկի երկու կողմերը կային երկու սենեկիներ, որոնցից մէկի մէջ Գէորգն էր տեղաւորուած, իսկ միւսի մէջ իւր ընկերը։ Մի անգամ Գէորգը գնաց Թովմասի սենեակը ու հարցրեց։

— Հը, գնա՞նք որսորդների համաժողովը։

Այդ լոռպէին ձիու ոսնաձայն լսուեցաւ և երկու մատաղահաս մարզիք դռան խսիրէ վարագոյրը բարձրացնելով՝ մտան սենեակը: Նոցանից մինը ծովապէտ Բալջին էր ու միւսը՝ թժիշկ Ուլտրին, նորա մօտիկ բարեկամն ու ընկերը: Երկուան էլ խիստ շատ էին սիրում որաք և գժբաղդարար միայն մի քանի Անդրդիական լաւ որսորդ չներ ունէին հետները բերած: Բայց այնուամենայնիւ նոքա մեծ յաջողակութեամբ որսումէին աղուէսներ, որոնցով լիքն էր շրջակայքը:

Չնայելով որ խիստ շոգէր, չորաք միասին ձանապարհ ընկան որսի: Նոքա հագած ունէին բաց գունի հասարակ կտորից նշանազգեստներ: Գէորգն ու Թովմասն էլ սիրուն կերպով նստած էին արաբական գեղեցիկ ձիերի վերայ. Նոքա գեռ ևս չդիտէին թէ ո՛քան պիտանի էին այդ ձիերը Հնդկասանի կլմայի համար: Բիմ, բիմ, բիմ—ձայները հնչուեցան նոցա ականջներին, երբ շարունակումէին իւրեանց ձանապարհը:

— Լսեցէք, լսեցէք, գոչեց Թովմասը ծիծաղելով. այս մեր Պօմզօն է վերագառնում:

Թովմասը Պօմզօն անուանումէր զօրագնդի հրամանատարին, որ հրաման էր արձակել թէ այն օրերը, երբ ինքը վերագառնումէր շրջելուց, փոխանակ օրէնքով նշանակած տասն և մէկ անգամի տասն երեք անգամ հրացանն արձակելով պատուեն իւրեան: Ծերունի զօրապէտ Պօրտէրը կատարելապէտ արժանաւոր մարդ էր ամեն կողմից. լուր էր տարածուած, իբրև թէ նա անուշադիր է դէպի տնավարձն ու իւր ան-

ձոռնի կինը, բայց նորա գլխաւոր թէրութիւնը այն էր, որ ինքը մեծ համարմոնիք ունէր իւր սեպհական անձնաւորութեան վերայ: Նա իւրեան այնպէս վեհանձն էր պահում, որ զօրագնդի մէջ յայտնի էր «Հին Պօմզօ» անունով:

— Աղնիւ խօսք եմ տալիս, ասաց ծովապէտ Բալջին, որ ինչ ուղէին կասյի՝ Պօմզօի հայրենիք վերագառնալը տեսնելու համար: Այսաեղ նա սովոր է ողջոյններ ստանալ Վալլիսի իշխանի պէս. երանի մի տեսնէի, թէ ի՞նչ կասէր նա, երբ որ և իցէ մի տղայ Լոնգոնի սալայատակից բրդէր նորան ու միեւնոյն ժամանակ հայհոյէր, որ նա իւր առջեր չէ նայում:

Թարմ օդ էր. արեգակը մայր մանելուն էր մօտենում. երկայնաձեւ ստուերները ընկած էին ձանապարհի երկայնութեան վերայ, երբ մեր երիտասարդները հասան հաւաքուելու տեղը, ուր մեծ բազմութիւն կար: Որսորդներից իւրաքանչեւրը, որոց թւում կանայք էլ կային, գլխարկին ցցել էր մի մի կապագոյն գրիչ: Շուտով շները սկսան աւար որսնել ծովապէտ Բալջին որսորդագետի գերը յանձն առաւ և որսորդները ցրուեցան աւազուտ խորառերուտ դաշտի վերայ: Երեք ժամից յետոյ աղուէսները բռնուած էին ու նոցա ազիները յաղթանակի ձեռվ կացրած էին ափինների թամբերին:

Որսի վերջը որսորդները հաւաքուեցան պայմանաւորած տեղը, ուր խնջոյք էր պատրաստած. ծառաները ուտելիքի պաշարով առաջ և եթ ուղարկուած էին: Փոքր ծառերի մի խմբի տակ սեղան էր

բացած. գետնին փռած էր փայլուն խսիր. սեղանի վրայ զրուած էր քանի մի հաս լամպար. Սոված ընկերութիւնը շուտով հացի նստաւ. Երբեմն երբեմն լուռումէին ցիների սուր ձայնելն ու նոցա անյագ աչքերը փայլումէին մժան մէջ:

Որովհետեւ այս ընկերահաց էր, ուստի և բոլոր կերակրներն ու զինին մամնակցողներիցն էր բերուած: Տիկիններից մինը՝ միստրիս Ույլսօնը, որի խոհարար առանձնապիս հաչակուած էր, պուրդինդ ասուած կերակրի պատրաստութեամբը, հրամայեց նուրան պատրաստել անդղիական այս սիրելի կերակուրը, որ Հնդկաստանումն էլ մեծ գործածութեան մէջ էր: Նառան սկուածը սեղանի վերայ դնելս՝ վայր ձգեց գետին: Մի վայրկենում ցինը, որ վաղուց արդէն հսկումէր մի որեւէ տւար ձեռք ձգելու, վրայ ընկաւ պուրդինդին՝ շուտով նա շրջապատուեց և ուրիշ զիշակեր թռչուններով, բայց նոցանից ամեն մէկը բերաները այրելով տաք կերակրից՝ յետ փախան: Միստրիս Ույլսօնը ու բոլոր ներկայ գտնուողները վերաւրուեցան պուրդինդը կորցնելու համար. բայց, ինչպէս յետոյ կտեսնենք, սա ամենափոքրնէր այն դէպքերից, որոնք կարողեն պատահէլ Հնդկաստանում անպատճար մի տեղ՝ թեթևեամտութեամբ ձաշել որոշող մարդոց:

Խնջոքը վերջանալու վերայ էր. արդէն մութը տիրել էր տշխարհին. չզջեկները պատումէին նոցա գլխների վերել և հեռուից լուռումէին վայրի գաղանների ձայները: Ծովապետ Բալընին, Գէորգի գիմացը նստած, պատմումէր նորան իւր որսորդական

կեանքից զանազան իրողութիւններ: Նկարագրելով թէ ինչպէս ինքը պատահէլ էր վազրին, նա 'ի միջի այլոց նկատեց:

— Ես, արդարեւ, կարծես իմ կեանքումն այն ամեն արկածների պատահէլ եմ, որոնք միայն մարդկային կեանքի մէջ կարողէին երեալ:

Եւ դառնալով միստրիս Ույլսօնին, ծովապետը ծիծաղելով՝ աւելացրեց.

— Նոյն իսկ այսօրուայ պուրդինդի արկածը ասենք: Հնդկաստանում շատ հազեւ է պատահէում լաւ անգղիական պլում—պուրդինդ և մի վերաւորական բան չէ, որ մենք այսօր միմիայն աչքով կշտացանք: Ես համոզուած եմ, որ նա,... Բալըին ուզումէր ասել ամենընտիրն էրս, բայց յանկարծ խօսքը կըտրեց: Նորա գէմքը սկզբում կարմրեց, յետոյ զարշուրելի կերպով դեղնեց ու աւերուեց. ձայնը կըտրուեց և սաստիկ փոխուեց. նա կամաց ու ընդհատելով, գժուարանալով շրթունքները շարժել արտասանեց.

— Կարծես ոտիս օձ փաթաթուեց:

Բոլոր խմբին երկիւղ տիրեց: Ալեսոր բաղմավաստակ գնդապետ Ույլսօնը, որ արդէն շատ տարիներ Հնդկաստանումն էր անցրել, շուտով գոչեց.

— Մի շարժուէք, Բալըի, 'ի սէր Աստծու, եթէ միսյն դուք միանդամայն անշարժ մնաք, գեռ ևս փրկութեան յցս կարողնք ունենալ:

— Կաշխատեմ, գնդապետ, հազեւ լսելի ձայնով պատասխանեց Բալըին:

Միստրէր Ույլսօնը տիկիններին պատուիրեց հե-

ռանալ, որովհետեւ նոքա միայն գործին խանգարել կարող էին: Ամենքը տեղերից վեր կացան, բացի անբաղա Բալըիից: Սեղանը շատ զգուշութեամբ ու առանց աղմի հեռացրին. այն ժամանակ ամենքը աեսան թէ ինչ էր ընդհանուր երկիւղի պատճառը: Մի ահագին ակնոցաւոր օձ փաթաթուել էր երիտասարդ զինուորականի ոտներին. զզուելի սողունը հետզետէ աւելի ու աւելի բարձր էր սողում: Նորա հարթ գլուխը բարձրացած էր դէպի վեր ու փայլուն աշքերը անթարթ նայումէին ծովապեաի դէմքին. առջեւի կողքերը լայնացած էին ու մէջքին պայծառ կերպով երևումէր մի բիծ, որպիսին ունենումէն ակնոցաւոր օձերը: Այս լուսէն զարհուրելի էր ամեն ներկայ գտնուածների համար, — անպաշտապան Բալըի համար դա մի բարյայական տանջանք էր իւր ամբողջ կեանքի ընթացքում: Միմիայն գլուդապետ Ույլսօնը՝ ընդհատեց լութիւնը:

— Զարժուէք, Բալըի, 'ի սէր Աստծու, միշարժուէք, շշնչաց նա:

Զարհուրելի սողունը զլուխը տատանումէր յետ ու առաջ, բայց յանկարծ նորա զլուխը կախ ընկաւ, բծերը անյայտացան, ողերը թուլացան. և օձը վայր ընկաւ խօրի վերայ: Ծովապետ Բալըին նուաղած էր և թէպէտ նա շուտով ուշքի եկաւ, բայց յետոյ մի քանի ամիս շարունակ գուրս չկանգնեց, վտանգի րոպէին կրած ջղային զարհուրելի ցնցումի պատճառով:

Բայց ի՞նչ եղաւ արդեօք օձը: Եփոթութեան և ընդհանուր ուրախութեան սկզբում ոչ ոք մաքովւ

անգամ չանցկացրեց սպանել նորան: Բնիկների վերաբերութեամբ զարմանալի էլ չէ այս բանը: Հնդկաստանի մի քանի ցեղեր Աստծու աեղեն պաշտում ակնոցաւոր օձին և բոլոր հնդկաստանցիների մտքերը մահաւան երկիւղէ ձգումնա նախապաշարուած յարգանքի հետ միասին: Նոքա բացտոփիկ ու շատ հազվել պատահող դէպքերին են սպանում ակնոցաւոր օձը, որովհետեւ հաւատում են, թէ վերաւորուած օձը կամ ինքն է վրէժինդիր լինում իւր թշնամուն և կամ այդ բանը իւր նմաններին յանձնում:

Ամենքը շտապումէին Բէլլարի վերադառնալու: Մթնեց և աստղերը փայլումէին երկնքում: Մի ակամայ վրդովմանք էր ընկել որսորդների սրտերը: Ամեն մարդ իւր վերայ էր մտածում, թէ մի գուցէ օձը միոր և է մօտիկ տեղ է գտնուում:

Գնդապետ Ույլսօնի ծառան անհրաժեշտ ամանները ու բոլոր տնտեսական պիտոյքները բերել էր մի մեծ սայլով. միտէր Ույլսօնը պարտաւորեց Թովմաս Բարտոնին նոյն սայլը իւր մօտ ծառայող Մարլէի ձեռքով յետ ուղարկել: Մարլէին պատուիրուեցաւ վաղել մօտակայ փոքրիկ խուղը, որ խնջոյքի ժամանակ խոհանոցի տեղ էր ծառայում, վերցնելու այնտեղից իւր մատաղահաս պարոններին պատկանած իրեղէնները և անյապաղ վերադառնալ: Քառորդ ժամ անցաւ: Ամենքը արդէն ձի նստան, ձանապարհ ընկնելու պատրաստուելով:

— Սայլը ձեր ծառային է մնում, Բա՛րտօն, ձայնեց նորան գնդապետը:

— Սատանան տանի նորան, բարկացած պա-

տասխանեց Թովմասը: Այ ևս նորան ցոյց կտամ, թէ
ինչէ նշանակում սպասել տալը:

Եւ ձիուց վայր թռչելով՝ ինքը գնաց այն խուղը
մտրակը ձեռքին:

— Մարլէյ, Մարլէյ, բարձր ձայնով գուցց նա,
մօտենալով տնակին:

Պատասխան տուող չեղաւ: Թովմասը հրեց հին
դուռը. նա մի փոքրիկ ցեխոտ սենեակ տեսաւ. կո-
կօսի ընկուզի կճեպում զբած պատրոյզը աղօա կեր-
պիւ լուսաւորում էր: Մի անկիւնում քարաշէն վա-
ռարանի պէս բան էր երեւում, որի մէջ դեռ ևս կր-
բակ էլ կար: Յատակի վերայ նոյն իսկ վառարանի
մօտ տարածուած էր մի սպիտակ բան, այ սա էր
Մարլէյն:

— Ծոյլ անպիտան, պառկել է քնել իսկ այն-
տեղ սորան սպասումնք: Սպասի՛ր, ես քեզ կը զար-
թեցնեմ:

Եւ նա իւր մորակով զարկեց սպիտակ պատկերի
ոսմերին: Մարլէյն շշարժուց:

— Ի՞նչ ասեմ, կարծրամորթ խոզ: Եւրոպացին
այսպիսի հարուածից վաղուց արդէն կզարթնէր,
քրթմնջաց Թովմասը:

Նա կրկին անգամ մեծ ուժով խփեց նորան
Յանկարծ սպիտակ շորերի տակեց բարձրաձայն սու-
լելով դուրս սողաց՝ սրածայր ցոռուկով ու աղամանդի
պէս փայլող աչքերով մի տափակ գուլս: Օձը ուղ-
ղուեցաւ և առջեկի կողքերը փելով՝ սկսեց իւր
դիւական խաղը՝ հաւասարաշափ յետ ու տառ տա-
տանուելով: Մի փայրկեան անդամ շմտածելով՝ և դեռ

հազիւ վտանգը նկատած լինելով՝ Թովմասը մորակը
ձեռքի մէջ շուռ տուեց և մօտենալով օձին մորակի
կոթով բոլոր ուժով զարկեց նոյն իսկ ակնոցի թե-
րին. զարհուրելի կենդանու խաղը յաւիտեան ընդ-
հատուեց. նորա մէջքը կոտրուել էր: Թովմասը ՚ի զուր
սկսաւ. կանչել խեղջ Մարլէյին. նորանից ոչինչ
պատասխան չտացաւ: Գէորգն ու միւս որսորդները
համբերութիւնից դուրս գալով եկան վերջապէս
Թովմասի այդքան երկար ուշանալու պատճառն իմա-
նալու. նոքա Մարլէյին դուրս բերին թարմ օդի մէջ,
բայց նա անշարժ էր: Այդպիսի անզգայ զրութեանը
ակնոցաւոր օձից կծածներին՝ միշտ մահէ հետեւում
Ոչինչ հնար չկար խեղջ նեղբին աղատելու, մի ժա-
մից յետոյ նա մեռաւ. նորա տիրոջը յաջողուց մի-
միան իւր հաւատարիմ ծառայի մահուան վրէւն
առնել:

ԳԼՈՒԽ Ճ.Օ.

ԳԵՈՐԳԻՆ ՊԱՏԱՀԱՆ ԱՆԲԱՂՏՈՒԹԻՒՆԻ.

Որսից մի քանի օր անց՝ շողը այն տատիճոն
անստանելի գառաւ, որ ստիպուեցան ամեն զուար-
ճութիւնից ձեռք վերցնել: Տարուայ ամենաշոգ ժա-
մանակնէր այդ. կէս զիշերին անգտամ օդը նոյնչափ
խեղդող էր, ինչպէս և կէսօրին: Բէլլարիի շրջակայ
գետինը հետզհետէ աւելի ու աւելի էր սյրուում ու
մերկանում. համարեա՛ բոլոր լճակներն ու ջրհորները
չորացան. ստիպուեցան մի քանի մղոն հեռաւորու-

թիւնից ջուր կրել աւելի դժուարը այն սակաւագիւտ բոյսերի արմաներ որոնելն էր, որոնք Հնդկաստանի այժ աւազուտ մասնում ձիերի խոտի աել են ծառայում: Հնդկաստանում ամեն մի ձի բացի ախոռապանից ունի և մի ծառայ, որ նորա համար կերակուրէ գտնում: Այս վերջին պարտաւորութիւնը մեծ մասմբ կանաչը են կատարում և տարրուայ այս ժամանակին այսպիսի պարապմունքը ծանր է և տաժան: Առաւօտները վաղ կանաչը գլխներին մեծ մեծ կողովներ դրած մերկ տղայոց առաջնորդութեամբ՝ զնումնեն հաւաքելու, կամ աւելի ճիշտ, գետնից հանելու ձիու կերակուրը:

Մեր տղայոց կեանքը միօրինակ էր անցնում: Նոցա միակ զուտրճութիւնը երեկոներին զբօսանքն էր: Մի փոքրիկ հրապարակում, որի վերայ տարրուայ բարեյածող եղանակին աճել էին տեսակ տեսակ ծաղկիներ, ամեն երեկոյ զինուորական երաժշտութիւն է լնում, ուր հաւաքում էին բէլարիում գտնուող ներուողացիները, այսուեղ մեծ հաճութեամբ երեսումէր և նոյն իսկ Պօմպօն իւր բոլոր աստիճանաւորներով: Ծաղիկների մէջ զբօսնումէին մանուկներն ու հասարակութիւնը, իսկ չորս կողմը լսյն ծառուղի էր շենած կառքերի ու ձիաների անցնելու համար:

Այսուեղ՝ ի գէպ պէտքէ պատմել և այն, թէ Թովմասը շբաւականանալով նորանով, որ ուրիշների պէտք զեղեցիկ ու հանգիստ ձի նստել ու պահել զիտէր, որոշեց լաւ սովորել և ձիարշաւի այն մի քանի ձեւեր, ու ոնք գործէին զրւում կրկէներում:

Բայցի իւր երկու զօրքի մէջ գործածող ձիանե-

րից՝ Թովմասը ունէր և մի պոչատ ու անձնունի ու ձի, որ պատահմամբ գնել էր նա:

Դժուար է հաստատ ասել, թէ ինչ ցեղին էր պատկանում Թովմասի ձին, որին միրանդիայ» անունն էր տուել ի պատիւ այն որսորդական հոչակաւոր ձիու, որ տեսել էր նա բէրկշիրում: Արտբական արեան կաթիլ անգամ չէր նշմարւում նորանում, իսկ եթէ ունէր էլ շատ քիչ: Նա գերազանցումէր պարսպի վերայից թռչելու ու ամեն տեսակ արգելքներին տանելու յատկութեամբ:

Թովմասն ու եւր ձին երկուսն էլ ի միասին վրտանգի չէին ենթարկում: 'Ի միջի այլրոց նա առանձին ձաշակով սովորցրեց «Իրլանդիային» սանդուղքը բարձրանալ և ամեն անգամ ձիով էր մոնում իր բարեկամների ու ընկերների աները, որ նոցա ամեն անգամ հաճոյ չէր թւում: Նա քիչ էր մնում սպանէր զինուորական ընդհանուր սեղանի մառանապեաին և կառավարութիւնից ծանր յանդիմանութիւն կրեց զինուորական սեղանի վերայից ձիով թռչելու համար: Բարեբազրարար «Իրլանդիան» յաջող կերպով թռաւ, բայց կարող էր այլապէս էլ պատահել և այն ժամանակ ի՞նչ կլինէր մեր բարեկամ Թովմասի գրութիւնը:

Մի երեկոյ Պօմպօն, իւր սովորութեան համաձայն, դուրս գնաց զբօսնելու: Նորա գեղեցիկ կառքի մէջ ձածէին մի զոյգ ամենընտիր արարական ձիեր: Նորա մօտ նստածէր մատաղահաս միստրիս Բօյլտօնը, որի մարդը զեռ նոր բէլարի հասած՝ ումբաձիգ զօրքի հրամանատար էր նշանակուած: Ինքը Բօյլտօնն

էլ ձիով կանգնած էր այնտեղ. երկուսն էլ հրաւի-
րուած էին Պօրտէրի մօտ, որովհետեւ իւրեանք զեռ
ոչ բնակարան ունէին և ո՞չ կառք: Ներունի Պօմպօն
զուարձութիւնից փայլումէր ու ինքնաբաւական կեր-
պով այս ու այն կողմն էր նայում: Նա հաճոյաբար
ձեռքով նշան էր տալիս երաժիշտներին և շուրջը
խռովող զինուորներին քաղցրալիր ողջոյններ էր
նուիրում:

Յանկարծ նա իւր կառքի մօտ սմբակների ձայն
լսեց: Շուտով յեւ նայեց — և տեսաւ Թովմաս Բար-
տօնին իւր պոչատ ու անձունի ձիու վերայ նստած:
Նոյն իսկ պոչատ ձիու իւր կառքի մօտ կանգնելը
զօրապետը վերաւորանք համարեց իւր արժանաւո-
րութեանը. երևակայեցէք նորա արհամարհանքը,
երբ համոզուեց, որ ձիաւորը նստած է, զարմանք
բան, դէմքը ագիի կողմ դարձրած, կամ դոնէ այն
կովմը, ուր այգի պիտի. լինէր: Միստրիս Բօյլտօնը
բարձրաձայն ծիծաղումէր. ինքը Բօյլտօնը հօ լաւ էր
հասկանում Թովմասի արածի անփայելչութիւնը, այլ
և նոյնը կրկնումէր և իւր կնոջը:

Երբ ձին սկսեց աքացել, տեսարանը աւելի ծաղ-
բաշարժ դարձաւ և ժողովուրդը անմիտ ծիծաղով
հետեւում էր Թովմասին: Խեղձ միստրիս Բօյլտօնը ծի-
ծաղեց թուլանումէր. միմիայն զօրապետի դէմքն էր,
որ չէր ժպտում:

Բարտօնը այս կատակի համար հետեւալ առա-
ւոտն և եթ բանարը դրուեցաւ: Բարեկամները խոր-
հուրդ տուին Թովմասին զօրապետի աչքին չերեալ
և մանաւանդ հեռու տեղ թագինել պոչատ ձին:

Գէորգն ու Թովմասը հազեւ էին սամում, մա-
նաւանդ գիշերները, իւրեանց բնակարանի խեղդող
օդը: Ինչ ասես նոքա հնարումէին օդը նորոգելու
համար:

Վերջապէս նոքա վճռեցին գիշերները տեղա-
փոխուել տան հարթ կտրան վերայ: Ներքնակները
փոելով՝ նոքա քնեցին այնպիսի խոր քնով, որպիսին
չէին ունեցել մի քանի ամիս շարունակ, Բայց եր-
բորդ գիշերը մի քանի ժամ քնելուց յետոյ՝ Գէորգը
զարթնեց. Նա գողումէր ցրտից և մեծ զարմանքով
տեսաւ, որ մօծակներից պաշտպանող ցանցը, որով
նա լաւ օրինաւոր փաթաթուած էր, քամին տարել
էր: Նոյն իսկ րոպէին Թովմասի ցանցն էլ քամին տա-
րաւ: Հեռուից լսումէր որոտման ձայնը և պայծառ,
կուրացնող կայծակը ամեն կողմից կտրատումէր տ-
հարկու ամպերը: Օղի մէջ զգալի էր մի տեսակ հոտ,
անձրել խոչոր կաթիլներով սկսեց թափուել և յան-
կարծ զարհուրելի հեղեղի փոխուեցաւ: Գէորգն ու
Թովմասը իւրեանց բոլոր իրեղէններով միանգամայն
թաց եղան:

Անձրել ամբողջ գիշեր շարունակ գալիսէր և լու-
սաբացին՝ աւագոս ու ժայռոտ սննապատի նմանող տե-
ղերը, կանաչով ծածկուեցան: Բուսականութիւնը շու-
տով երեւաց գետնի երեսին. մի քանի շաբթից յետոյ,
ձիաների խոտը մեծ քանտկութեամբ էր ստացւում և
այնուհետեւ թզինին ու միւս ծառերը տերեններով
ծածկուեցան. սեխ, խաղող, թուղ, մինչև անգամ
կանաչ սիսեռը — ամեն բան այժմ բաւականին շատ
կար: Բէլարիում անձրենները երկարատեւ չեն լինում:

Այս տօթային գիւղաքաղաքի բնակիչները վերակեն-
դանացան և մոածեցին նոր նոր զուարձութիւններ
գտնել: Սկսուեցան խնջոյքները, որսերը, վերջապէս
երիտասարդները խօսք բաց արին և ձիարշաւի
մասին:

Այստեղ ձիարշաւները աշնանն էին լինում:
գիւղաքաղաքից երկու մղոն հեռու շնուռած էր գե-
ղեցիկ ձիարշաւի տեղ: Այդ տարին, բացի սովորական
ձիարշաւից, մի աւելի դժուար ձիարշաւ էլ էր առա-
ջարկում: Այս նպատակով ձիարշաւի ըջանի ներսը
մի փոքրիկ ըջան էլ շինեցին, որի վերայ միմեանցից
յայնի հեռաւորութեամբ դրուած էին ցանկեր
և անցէին կացրած կաւէ պատեր փոսերով երկու կող-
մից: Այս արգելքները այն աստիճան վտանգաւոր էին
թւում, որ նորա վերայ արշաւողների թիւը շատ
սահմանափակուած էր: Որովհետեւ պարսպի վրայից
թռչելու յատկութիւնը անկասկած թովմասի ձիու
գլխաւոր յատկութիւննէր կազմում, հասկանալիէ ու-
րեմն, որ նորա տէրը վառւումէր այդ նորահնար ձի-
արշաւին մասնակցելու ցանկութեամբ: Մի բան միայն
նորան անհանգստացնումէր, — ձիու պոչատ լինելը.
Բայց նա որոշեց ձիարշաւին մասնակցել կեղծ աղի
կացնելով իւր ձիուն: Գէորգին էլ արուեցաւ բժիշկ
Ռիարի ձին:

Արդէն մի քանի շաբաթ առաջ ձիարշաւի
սկսուելուց՝ մեծ պատրաստութիւններ էին տեսնում:
Ամեն առաւօտ երբ չէին վարժեցնում, զբոսեցնում
էին ձիաներին: Պատուաւոր անձանց համար առան-
ձին տեղեր շինեցին: Հանդիսականների տեղն էլ նո-

րից որոշուեցաւ: Խնդը Պօմազօն իւր խմբով, այդամեջ
բնակող զօրքի հրամանատարներն ու Քէլքարիի մե-
ծաւորները ներկայ պիտի գտնուեէին ձիարշաւին:

Վերջապէս հասաւ ձիարշաւի օրը: Արդէն լու-
սաբացին հաւաքուել էր ձիարշաւի տեղի շուրջը հե-
տաքրքիր ահազին բազմութիւն: Այստեղ ամեն աե-
սակ կառքեր կային: Կրոպական հասարակ կառքեր
էլ և տեղական լաւ կառքեր էլ մեջը եղներ լծած և
զարդարած պայծառ կարմիր ժապաւինազարդ վա-
րագոյններով: Կային նոյնպէս բազմաթիւ բնիկներ՝
տեղական փաքրիկ ձիերի վերայ նստած: ձիաւորները՝
ձիերի զլիններից շատ հեռու էին նստած և նոցա-
ասղնէգործ մաշեկների դէսի վ'ր ծռած ծայրերը:
դէմ էին ընկած ահազին ու լայն ասպանդակ-
ներին:

Ձիարշաւի համար մարդիկ որոշուեցան: Նշան
արուեցաւ ձիաները թամբելու: Մեր հերոսները հա-
մարեա՝ հասակակից էին: Գէորգը լայնաթիկունք և
բարձրահասակ էր: Թովմասը աւելի լիքն էր: Զիաները
արդէն թամբած էին: ո՛չ միլլանպիանս, ո՛չ էլ Գէ-
որգի ձին Ալատանանս գեղեցիկ չէին: Ծովապիտ Բալ-
յին եկաւ մի պատուական շառատ ձիով, որ փոքր
միջոց առաջ ձեռք էր բերել թանկ գնով բարե-
յուսոյ հրուանդանի մօտ:

Թէպէտ բոլոր ձիաւորները վեց էին թուով,
բայց մնացածները յայտնի գեր չունէին կատա-
րելու, վասն որոյ և չենք թուի նոցա: Ծովապիտ
Բալյին մութ կապոյտ բաճկոնակ ունէր հագին ո-
նոյնպիսի գլուարկ: Գէորգը բաց մանուշակագոյն սպի-

տակաշերտ բաժկոնակով էր ու նոյն գունի զլխարկով, այն ինչ Թովմասը զարդարած էր պայծառ կարմիր բաժկոնակով՝ ու գեղին զլխարկով:

Զիաների թամբելը բաւական երկար տևեց: Դեռ Գէորգը չէր նստել վրէն, երբ «Սատանան» առջեկ սաները բարձրացրեց և սկսեց աքացել: Նա չորս ոտով վայր ընկաւ գեանին ու այնքան աքացեց, մինչև որ ուժից ընկաւ: Ենրանդիան, ընդհակառակը, նոր ագու շնորհիւ բոլորովին նոր ոյժ ստացաւ: Թովմասը մի վայրկենում վեր թռաւ թամբի վերայ: Ծովապետ Բալշիի մոյդ կապոյտ զլխարկը արդէն փայլումէր նշան դրած սեան մօտ:

Պէտք է վաղէին ձուաձե գրութեամբ միանգաւմայն հարթ տարածութեան վերայ, որաեղից միենոյն ժամանակ ամբողջ տարածութիւնը նշմարւում էր: Բոլոր վեց ձիաներն էլ պիտի արշաւէին նոյն գծով. նոքա պիտի երկու շուրջ անէին և ընդ ամենը երեք մղոն ճանապարհ պիտի անցնէին. ընդ ամենը վեց արդելք կար դրած, նոյանից իւրաքանչիւրի վրայօք երկու անգամ պիտի թռչէին: Զանգը զարկեցին և ձիւորները տեղից շարժուեցան: Թովմասը Գէորգի հետ միասին էր գնում. երկուսի ձիաներն էլ ծանրաքայլ էին ընթանում. առաջին երկու պատերը ամենահեշտ թռչելու տեղերն էին. նոցա վերայից բոլոր վեցն էլ միասին թռան, յետոյ կապոյտ գըլխարկը միաներից յառաջեց. բայց առաջին պատի մօտ Բալշիի ձիու առաջին ոտները դէմ ընկան ու վայր ձգեց իւր վերայ նստովին. բարեբաղդաբար ձին

Էլ նստովին էլ միմիայն բռպէական վրտովմնւնք ունեցան: Ծովապետ Բալշին նորից շուտով վեր թռաւ թամբի վերայ և Ճանապարհ ընկաւ:

Այժմ գեղին ու բացմանուշակագոյն զլխարկները ամենից առաջէին գնում: Նոքա արդէն հաւասարուեցան ամենագժուար պարսպի մօտ, որ իւրաքանչիւր կողմից խորը փոսեր ունէր:

— Դու իմ օրինակին հետեւիր, Գէորգ, գոչեց թովմասը:

Եւ Գէորգից առաջ ընկնելով, նա քաջութեամբ թռաւ սլաքի պէս անցնելով պատճեշի վերայից: Գէորգը թեթև կերպով խթեց ձիուն և Սատանան յաջողութեամբ թռաւ պատճիշի ու փոսերի վերայից: Նոյն րոպէին, երբ նոքա առաջին անգամ մօտեցան յաղթանակի սեանը, Ենրանդիան ամենից առաջ էր գնում, նորանից յետոյ Գէորգն էր գնում, իսկ երրորդը ծովապետ Բալշին էր, որ արդէն մնայտծներից առաջ էր ընկել:

Հետեւեալ պատճիշի մօտ և տարաբաղտաբար նոյն իսկ տեղը, որ կանգնած էր զօրապետ Պօրտերը, Թովմասի ձիու փառաւոր ագին դէմ ընկաւ վանդակապատի փշերին: Զին հենց որ ետեւի ոտներով կանգնեց գեանին, զգաց, որ ագին մի բանի դէմ ընկաւ. Նա ոյժ գործ դրեց և առաջ զիմեց, ագին փշի վերայ թռջնելով ու առաջուայ պէս պոչատ մնաց: Պօմզօն ունքերը կախեց. Հասարակութիւնը բարձրաձայն ծիծաղ բարձրացրեց:

Այժմ Գէորգը առաջէր գնում, բայց կապոյտ զլխարկը աւելի ու աւելի մօտենումէր նորան, կարճ

միջոցից յետ նա արդէն Գէորգից շատ հեռու չէր.
շառատ ձին քաջութեամբ արշաւումէր, աշխատելով
կորցրած ժամանակը փոխարինել: Սատանան ինչկա-
րողանումէր՝ անումէր, միայն նորա արիւնը եռումէր
և Բալըի ձիուն մօտենալով՝ փորձումէր կծել նորան:
Արդէն երկրորդ անգամ նոքա մօտենում էին փոսեր
ունեցող պատճիշն: Գէորգն զգաց, որ ձին կծուու-
մէր սանձը և բոլոր ուժով քաշեց այն. նա աշխա-
տումէր կանգնեցնել բայց հնար չեղաւ: Գէորգն ար-
դէն գիտէր իւր գլխի գալիքը — դժբաղդութեան
առաջն առնելու հնար չէր մնում: Սատանան անմտու-
թեամբ փաղեց պատճէի կողմը և, համարեա՛ ամենեին
չըարձանալով գետնի մակերեռութից, ընկաւ փոսի մէջ:

Այս րոպէին, Գէորգի գլխի վերայից անցաւ
ծովապետ Բալըին, որին մնումէր միմիայն սեանը մօ-
տենալ և վերցնել մրցանակը:

Հանդիսականները շաապեցին գէպի փոսը, ուր
անօդնական ընկած էր խեղճ Ռոլլէստոնը, ահազին
ծանրութեամբ ձիու տակ ճնշուած:

Բարտօնը երկիւղից բարձր ճայց, երբ տեսաւ
իւր բարեկամի գունատ, անկենդան և արիւնաշաղախ
գէմքը: Գէորգին դիմն խոտի վերայ. հանդիսական-
ների թւում կային և մի քանի բժիշկներ, որոնք
ամենքն էլ շըջապատեցին հիւանդին:

Բժիշկը խոյն յայտնեց, որ Գէորգը կենդանի
է, բայց ծանր վիրաւորուած:

— Խեղճի անրակն է կոտրուել, ասաց նոցա-
նից մինը:

Այս խօսքերի վերայ Գէորգը ուշքի եկաւ:

ԳԼՈՒԽ ԺԷ:

ԲՆԱԿԱՐԱՆ ՓՈԽԵԼԸ:

Ամբողջ շաբաթներով Գէորգը անշարժ պառկած
էր և չարաչար տանջւում: Զէթէ միմիայն նորա ան-
րակն էր կոտրուել բայց և ներքին կողմից վնա-
սուել էր՝ իւր վերայ ընկած ձիու ծանրութեան
պատճառով: Անցան շաբաթներ և ամբողջ ամիսներ,
բայց նա դեռ ևս հիւանդ էր, թէպէտե առողջա-
նումէր հետզհետէ: Երեկոյեանները նորան սովորաբար
դուրսէին տանում պատշգամբը, ուր ամեն օր հաւաք-
ուումէին նորա մօա երիտասարդ զինուորներ, որով-
հետեւ ընկերները Գէորգին շատ էին սիրում: Բժիշկ
Ուխտին իբրև բժիշկ և բարեկամ անդադար այցե-
լումէր նորան, իսկ Բարտօնը նորա ամենասուրախ
խօսակիցնէր և միւնոյն ժամանակ ամենահոգատար
հիւանդապահ:

Մի երեկոյ, երբ Գէորգը առանձին հոգեկան
ախրութեան մէջ էր, որպիսի գրութեան մէջ վերջին
ժամանակները շատ յաճախ էր ընկնում և որը վը-
տանգաւոր կերպով էլ ներգործումէր նորա առող-
ջութեան վերայ, նա դարձաւ իւր մօտ նստած
բժշկին:

— Ես կարծումեմ, Ուխտի, որ այս ամենը 'ի
զուրեն, թոյլ ու դողլոջուն ձայնով ասաց Գէորգը,
իւր նիշար ու գունատ ձեռքով լուսից ծածկելով աշ-

քերը: Զեր ու Թովմասի բոլոր հոգուրը և ամեն տեսակ բարութիւնն ու կարեկցութիւնը, որոնցով ինձ շըջապատռմեն, 'ի զուր են: Ես այս վերջին ամսի ընթացքում առողջութեան նշան չտեսայ:

— Այ քեզրան, դաշն բժիշկը, աշխատելով իւր ձայնին առաւել առօդ և ուրախ ձև տալ, ես չեմ կամենում այդպիսի բաներ լսել: Ինդրեմ այդպէս չխօսէք:

Բայց այնուհետեւ բժշկի գէմքը տխուր կերպարանք ստացաւ և ծանր կերպով ասաց.

— Կաեցէք, Ռոլլէստոն, ես երբէք չեմ կարող ձեզ թոյլ տալ, որ գուք միս անգամ դարձեալ այդ ձիով մանդաք: Այնուհետեւ, երբ ձեզ այս անբաղասութիւնը պատճեց, խելքս վրաս չէ, բայց երդումեմ և հաստատ գիտեմ ու համոզուած եմ, որ ոյժմ ձեր առողջութիւնը շուտով կվերականգնի: Իսկ ինչ կոտրածինէ վերաբերում, շարունակեց նա ժպտելով ոսկրը միանգամայն աճելէ և այնքան լաւ, որ ես իբրև բժիշկ, սիրով եմ նկատում այդ:

— Այս', ես լաւ գիտեմ, որ իմ բոլոր ոսկրներս այժմ կարդին են, Ո'յորի, 'ի սէր Աստծու, չկարծէք թէ դուք քիչ թէ շատ մեղաւոր էք իմ այս թշուառութեանս համար: Բայց ճշմարիտ եմ առում, որ ինձ երբեմն այնպէս է թւում: Թէ ինձ համար ամեն բան վերջացած է. դուք չէք հաւատում, թէ ինչպէս թուլութիւնն ու խոնջութիւնը զզուացնում ու ծանրացնում են ինձ: Ես գիտեմ, որ շատ յիմար պիտի լինի մարդ, եթէ այսպիսի բաներ խօսի և ես այս բոլորը Թովմասին չեմ ցանկանում տաել: 'Ի հարկէ

գծուար չէ ինձ համար հիւանդութեանս պատճառով արձակուրդ առնել նւրոպա գնալու, բայց ես ոչ ոք չունիմ Անգլիայում: Ոչ ոք բացի ծծմբիցս չէ մոտածի՝ արդեօք կենդանի՞ եմ ես թէ մեռած. ոչ ոք չի ուրախանայ այնտեղ գնալուս համար: Այս ամենը ինչ որ ես ասում եմ՝ անխօհեմութիւն է իմ կողմից, բայց ես էլ թոյլ եմ ու հիւանդ և չեմ կարող տխուր մոտածմունքներս հեռացնել ինձանից: Նւգէմքը ձեռքերով ծածկեց, աչքերից հոսող արտասուզքը բժշկից թագյնելու:

Այս իսկ րոպէին պարտիզլից ուրախ ձայներ ու ձիու զրովի լսուեցաւ: Այդ Թովմասի և ծովապէտ Բալլիի ձայներն էին, որոնք գալիս էին հիւանդին տեսութիւն: Թովմասը թամքից վայր թռաւ և ձեռքին մի նամակ բռնած՝ բարձրացաւ սանդուզքը:

— Ահա՝ քեզ նամակ, Գէորգ, որի հասցէն կնոջ ձեռքովէ գրած, կարծեմ սա մի փոքր կուրախացնէ քեզ: Հետաքրքիր է, թէ ումնից պիտի լինի սա:

Գէորգը կամաց վերցրեց նորանից նամակը և ծրարին նայելով՝ ասաց.

— Երեսումէ, որ Անգլիայից չպիտի լինի:

— 'Ի հարկէ այնտեղից չէ, ես արդէն վաղուց իմացայ այդ, վրայ բերեց Թովմասը, գեհ շուտով բաց արա: Ի՞նչ վատ սովորութիւն է նամակը ձեռքի մէջ շուռումուռ տալ տարակուսելով թէ ումնից է ուղարկուած, երբ բաւականէ միայն բանալ և իրնդիրը իսկոյն կլուծուի:

Գէորգը նամակը բացեց և մեծ զարմանքով տեսաւ, որ միստրիս Գօնբարիցն էր ու ղարկած: Այս բարի

կմոր լսելէր Գէորգին պատահած թշուառութիւնը և ծանր հիւանդութիւնը ու հրաւիրումէր նորան իւր մօտ Մխառու, ուր բնակւումէր նորա ամուսնու զօրս-բաժինը: Միստրիս Դօնբարը գրումէր, որ Մխառուի (Քօմբէի նախագահութեան մէջ) կլիման խիստ թարմէ ու առողջարար, քան թէ Բէլարիինը և որ, եթէ միայն բժիշկները կթոյլատրեն Գէորգին այդպիսի մի ձանապարհորդութիւն յանձն առնել խոստանումէ հոգալ նորա վերայ ինչպէս լաւ որդեսէր մայր:

Անյապաղ որոշուեցաւ ընդունել Դօնբարի սիրա-միր հրաւէրը. բայց երբ քարտիսին նայեցան ու տե-սան Մխառուի ու Բէլարիի մէջ եղած ահազին հեռ-ուորութիւնը, Գէորգի գէմքը դարձեալ տիրեց. գործը առաւել բարեյաջող դիրք բռնեց, երբ գնդա-պետը իմացրեց իւր սպաներին, թէ զօրագունդը հրաման է ստացել Հայդերաբատ տեղափոխուելու:

— Այս բանը ձեզ ձեռնառուէ, Ռոլլէստոն, քաղց-րութեամբ ասաց նա, մենք հաւանականէ, որ մի երկու շաբաթից յետոյ ձանապարհ ընկնենք, աշխա-տեցէք մինչեւ այն ժամանակ որքան և իցէ կազ-դուրուել, որ կարողանաք զօրքի հետ գալ:

Այս միջոցից Գէորգը կազդուրւումէր ֆիզիքա-պէս և բարցյապէս: Զօրագունդը ուրախութեամբ թողեց Բէլարին:

Որովհետեւ Գէորգը գեռ ևս չէր կարող ձի նըս-տել, ուստի նա դնաց պաշանինսաւ: Պալանկինը մեծ արկղե պէս մի բանէ, ուր մարդ կարողէ պառկել անդամ: Կողքերից բացէ լինում և վարագոյներով ծածկած: Կողքերից կացրած են երկայն ձողեր. ուժ-

հոգի են տանում պալանկինը՝ ձողերը ուսերին դրած: ուրիշ ութ հոգի էլ կարգով գնուումեն՝ շուտ շուտ փոփոխելու համար: Գիշերները պալանկինի կողքերից վառած մօմեր են տանում, որոնցից շրջակայքում մի գարշելի հոտէ բուրում: Ձողաբարձները ամբողջ ձա-նապարհին մի տեսակ տիսուր և նոյնաձայն երգ են երգում և որքան շուտ շուտ են գնում, այնքան նոցա երգը կամ աղաղակը բարձր է լինում: Հիւանդ Գէ-որգը գժուաբութեամբ էր շունչ քաշում պալանկինի մէջ, այս յարատե երաժշտութեան ձայնի ազգեցու-թիւնից, մանաւանդ եթէ երեւակայենք կառքի հա-րուածներն ու ձայթիւնները:

Զօրագունդը միմիայն առաւօտներն էր առաջ գնում և շատ գանդաղ կերպով էր մօտենում Հայդէ-րաբատին: Վերջապէս մի գեղեցիկ առաւօտ զօրքի առաջին կարգի զինուորները նկատեցին Հայդերա-բատի մեծ մզկիթի աշտարակները. յետոյ պալատն երեաց և շուտով գունդը հասաւ մի խղճուկ պա-տին, որ ծառայումէր իրը պարիսպ նիզամ քաղա-քին: Զօրագունդը վրան գցեց քաղաքից գուրս:

Հայդերաբատափից Մխառու՝ Գէորգը իւր երկու ծա-ռաներով ստիպուեցաւ եղնաքարշ ծածկած կառքով գնալ: Բէլարիից գուրս գալիս նա Խիզուրին արձա-կեց և վարձեց մի նոր ծառայ Ֆիրմալ անունով, որ ամեն կերպով հաւատարիմ էր թւում և շուտով առիթ ունեցաւ իւր քաջութիւնն ու անձնուիրու-թիւնը ցոյց տալու Գէորգին: Այս տասն և հինգօրեայ գանդաղ ձանապարհորդութիւնը՝ բաւական ձանձ-րալիք էր: Նրջակայքը մեծ մասամբ ամայի էր ու-

լիքը ամեն տեսակ կենդանիներով, անտիլօպներով, արջերով ու վայրի վարազներով. սիրամարգերը սիդաձեմ քսյլումէին իւրեանց բոլոր գեղեցկութեամբը: Բայց Գէորգը դեռ այն աստիճան չէր կազմուրուել որ որսի գնար ու այնտեղ գտնէր իւր զուարձութիւնը: Սակայն նորա առողջութիւնը օրէցօր լաւանումք: Օդափոխութիւնը անկասկած բարեյաջող կերպով ներգործումէր նորա վերայ: Որքան Գէորգը աւելի էր շրջում, այնքան նորան ներկայանումէր հակապատկերը Բէլլարիի շրջակայքի, ուր սովոր էին նորա աշքերը: Երկու կողմը ձգւումէին ճոխ, պտղաբեր ու ոռոգուած մարգագետիններ. լայն գետերն ու կատաղի հեղեղները ոռոգումէին ճոխ բուսականութեամբ ծածկած հովիտները:

Գնդապետ Գօնբարի տունը կառուցած էր Միասու ամրոցից երկու մզոն հեռու մի մեծ այգու մէջ, ուր աճումէին բարձրուղել ծառեր. միայարկ տան առաջը շինած էր փոքրիկ լճակ:

Գէորգը տեսաւ Գօնբարին պատշգամբումը կանգնած. նա նոյնքան գեղեցիկ էր, որքան և առաջ. նորա գրկումնատածէր իւր երկամեռյ դստրիկ՝ Վիլին: Միատրիս Գօնբարն էլ ու նորա ամուսինն էլ սիրով ընդունեցին Գէորգին:

Աւելի քիչ վնասակար կլիմայի բարեբեր ազգեցութեան ու բարի տանտերերի հոգացովութեան շնորհիւ՝ Գէորգը սկսաւ նկատելի կերպով առողջանալ: Եւ ի՞նչքան էլ ուրախ էր: Երջակայքում զբօսնելիս ու զանազան հետազօտութիւններ անելիս՝ ժամանակը աննկատելի կերպով էր անցնում: Լիլին այնքան

սիրեց Գէորգին, որ մի քայլ չէր թողնում հեռանալ իւրեանից:

Մի ամիս էր արդէն, որ Գէորգը Միասու էր: Մի երեկոյ, երբ ամբողջ գերգաստանը պատշգամբումն էր հաւաքո ել, հեռութից սուրհանդակի զանգաձայն լըսուեց և այնուհետեւ խիտ ծառերի միջից մամի վալիցը երևաց:

Հնդկաստանում սուրհանդակի հազրդակցութիւնը հետեւակ մարդոց ձեռքովէ կատարւում, որոնք ձիուց պակաս արագ չեն վազում: Նոքա վեց միոն ճանապարհ գնալուց յետոյ՝ յանձնումն մի ուրիշ սուրհանդակին: Դիշերները ձեռքին բռնումն վառած կերպներ, որոնցով պատշպանումն իւրեանց վայրի գաղանների յարձակումց: Վերջին տասնու հինգ, քսան տարինների ընթացքում, երկաթուղինների թիւը մեծանալով ու հազրդակցութեան ճանապարհների բարուղերով՝ այսպիսի սուրհանդակների գործադրութիւնը միանդամայն վերջացաւ:

— Աչա՛ սուրհանդակը գալիսէ, ասաց միստրիս Գօնբարը, երբ տեսաւ նորան. յոյս անիմի, որ նա վատ համբաւ չի բերի մեզ. Առողի մէջ ինչ որ մի բան է կատարւում:

Արդէն Միասուի բնակիչները լսել էին, որ Բէնդագալեան նախագահութեան մէջ և մանաւանդ Լուկնովում՝ խռովութիւն կար: Բայց միստրիս Գօնբարը ի հարիկ մաքովն անգամ շանցկացրեց, թէ այս անգամ բերած նախակները՝ պարունակում էին իւրեանց մէջ մի որոտանման լուր Հնդկական ապսաւամբութեան առաջին ճայթիւնի մասին:

Միլուակի մէջ բնակող երեք զօրագնդերը ապրաւամբերի էին և սպաներին սպաներով՝ գնացել էին Դէլ, ուր բնակող զինուորներն էլ հետեւ էին նոցաօրինակին: Դէլ բնակող բոլոր երապացիք, զինուուրականները, քաղաքական աստիճանաւորները, կանայք ու երեխայք բոլորն էլ սպանուել էին: Այս զարհութելի լուրը մայիսի վերջին հասաւ Միստու. հետեւ երեք, չորս շաբաթուայ ընթացքում ապսամբութիւնը օրեցօր մեծանումէր. հիւսիսային Հնդկաստանի քաղաքներից շատերի մէջ մեծ արիւն-հեղութիւն էր պատահում: Մինչև այդ ժամանակ Բօմբէյի նախագահութեան մէջ անբաւականութեան նշան անգամ չկար և Գէորգը, որ նոյն օրերում պէտք է վերադառնար զօրիքի մէջ, ուրախ էր, որ Դօնբարներին անփառնգ էր թողնում:

Յունիսի 30ին առաւոտեան գնդապետ Դօնբարը զօրախաղ ունէր. զինուորների տիսուր գէմքերից ամենաին չը նշարւում ոչ շարութիւն, ոչ վայրենի ատելութիւն ու կատաղութիւն: Զօրահամազիսից վերադառնալով՝ նա զարմացմամբ տեղեկացաւ, որ իւր ամուսինը իւր բացակայութեան ժամանակ արձակելէ գերձակին: Այս մարդը արդէն բաւական ժամանակ ծառայումէր Դօնբարների մօտ և միշտ աղնւութեամբ. բայց այդ առաւոտը նա իւրեան բաւական անպարհուց պահանջեց: Միստրիս Դօնբարը յանդիմանեց նորան մի որևէ զործ չկատարելու համար և, ի միջի այլոց, նորան յիմար անուանեց: Յանկարծ նա տեղից վեր թռուաւ և նոյելով նորան չար ու վայրենի աչքերով՝ գուեց:

— Բաւական է ինչքան ձեզ համբերեցի. բաւականէ, ինչքան սպիտակներդ մեզ ձնշեցիք, այժմ հերթը մերն է:

Եւ իւր տիկնոջ ներկայութեամբ կօշկները հագնելով, որպիսի արարմունքը վիրաւորանք է համարւում Հնդկաստանի մէջ, նա դուրս գնաց: Միստրիս Դօնբարը այնքան միայն կարողացաւ նորա ետեից զոշել, որ այլ ևս չվերադառնայ:

Այդ երեկոյին Դօնբարների մօտ հիւրեր կային և նոցանից շատերը գանգատուումէին իւրեանց ծառաների մասին, որոնք վերջին ժամանակներում յաձախ թոյլ էին տալիս իւրեանց շատ կոսպիտ արարմունքներ: Բայց Գէորգի ծառայի վարքը դեռ ևս անհասկանալի մի բան էր: Երբ Գէորգը գիշերը պառկեց քնելու, Ֆիրմալը աղմած գէմքով ու փայլուն աչքերով գնաց նորա մօտ ու տաց.

— Ո՞ր ժամին պիտի գն սք, տէր: Նս բոլոր իւրերը գարսեցի և պատուիրեցի, որ գիշերս արդէն պատրաստ լինին եղները:

Գէորգը զարմանքով նայեց նորան:

— Խելքդ գլխիդ է՞ թէ չէ: Նս քեզ ասացի, թէ վաղը չէ միւս օրը կերթամ. ևս չեմ էլ մոտածել այսօր զնալու մասին:

Ֆիրմալը գէմքի արտայայտութիւնը փոխեց.

— Պարոնս շատ լաւ կանի, որ այսօր գնայ: Նս արդէն ամեն բան սկատարատել եմ և եզները շուտով պատրաստ կլինին լծուելու համար:

— Դու ՚ի զուր ևս անհանդիսա լինում, ասաց

Գէորգը: Երերը, խնդրեմ; յետ բեր նոքա կարողին
պէտք դաշինձ:

Իրմալը յուսահատութեամբ մասներն էր կո-
տըրառում:

— Պարսնպ անպատճառ այս երեկոյ պիտի ու-
ղեղորուի. այս անհրաժեշտ է:

— Գատարկ դատարկ մի խօսիր, վրայ բերեց
Գէորգը և կրկին անզամ հրամայեց նորան չէմօդանը
(Ճանապարհի արկի) բանալ:

Ֆիրմալը հնազանդուեց ու գուրս գնաց: Գէորգը
պառկեց անկողնում վարագոյնները ծածկելով մոծակ-
ների ահից և շուտով մոտաւ խոր քնի մեջ: Մի զար-
հուրելի երազ տեսաւ նա. իրեւ թէ Թովմաս Բար-
տօնի հետ միասին բիզն էին որսում. մտել էին մի
բարձր ու խիտ անտառ և որաը բոլորովին աչքից
կորցրել: Յանկարծ նոցանից մի քանի քայլ հեռա-
ւորութեամբ՝ ծառերը ջարդելով ու թփերը կօխ-
ճըռտելով՝ երեել էր մի փիզ. նոյն իսկ բուդէին նորա
շուրջը երեւումէին բնիկների մութ պատկերներ. նոքա
բարձրաձայն գուռումէին ու գոչում: Երբ փիզը որտորդ-
ների կողմ գիմեց, Թովմասը հրացանն արձակեց,
բայց Գէորգը ամենեին չխարողացաւ գտնել իւր հրա-
ցանը և փիզը իւր կնճիթով բռնեց նորան ուսից:
Ահագին աղմաւկ ու ճիշ բարձրացաւ. հրացանի ձայ-
ները մէկը միւսի ետելից լսումէին նորա ականջին:
Բայց ոչ մի գնդակ չէր կարողանում նորան թշնամու-
ճեռքից աղատել նա արդէն զգումէր, թէ ինչպէս
փիզը նորան գետնից վեր բարձրացրեց, մի վայրիկան
էլ և նա կթռչէր ահագին կենդանու զլխի վերայից:

Այդ լուպէին Գէորգը աչքերը բացեց. նա պառկածէր
իւր անկողնի մէջ և Ֆիրմալը նորան ուսերից բռնած
ցած էր քարշում: Սենեակը ծխովլիքն էր և գրսից
հրացանաձգութեան ձայներ էին լսւում: Ֆիրմալը
տեմնելով որ իւր տէրը զարթնեց՝ գոչեց.

— Գնանք, տէ՛ր, ես ձեզ ետևի ճանապարհով
դուրս կտանեմ: Սիպայները (Օստ-Խնդիրյի բնիկներից
կազմած Անգղիական զօրք) պաշարումն գնդապետի
տունը և անպատճառ պարոնիս կսպանեն: Նոտապե-
ցէ՛ր, ապա թէ ոչ յետոյ ուշ կլինի:

ԳԼՈՒԽ ԺԷ.

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱԼՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՄԻՆՔ

Գէորգը հասկացաւ, թէ ինչո՞ւ Ֆիրմալը համո-
զում էր նորան այդ օրն և եթ ճանապարհորդել
Շառան սրտանց սիրումէր իւր տիրոջ և յանկանու-
մէր նորան վտանգից աղասիէլ:

— Ո՞ւր են միստրիս Դօնբարն ունորա մանկիկը,
այս եղաւ նորա առաջին հարցը:

— Նոքա ննջարանումն են, պասասխանեց Ֆիր-
մալը: Բայց շտագեցէր, տէ՛ր, ապա թէ ոչ անշուշտ
կսպանուէք: Այս մարդիքը կատարեալ գեեր են:

— Իսկ ինքը գնդապե՞ալ ուրէ, շարունակեց հարց-
նել Գէորգը, շտագով հազնուելով: Սեղանի վերայ զրած
տարձանակը լցնելով՝ նա Ֆիրմալի խորհուրդ տուած
տեղը չգնաց, այլ նորա հակառակ գոնից մտաւ տան
աւելի ներսի խորքը:

Կ՞նչ զարհութելի տեսարան ներկայացաւ նորան, երբ մտաւ սեղանատունը: Մի քանի խռովարաններ պատշգամիքից լրւամանի միջով ներսէին թափուել և համախմբուելով սեղանատան մի անկիւնում՝ յայտնի կերպով որոշումէին իւրեանց անելիքը: Նոցադիմացի դրան մօտ կանգնած էր կիսամերկ միստէր Գօնբարը, մի ձեռին ատրճանակ բռնած և միւս ձեռքին մերկ սուրը: Նոքա Գօնբարի զօրագնդի զինուորներ էին. իսկ սա գեռ նոյն առաւտար ինքնարաւական ու ապահով զգացմունքով էր նայում նոցանտարբեր ու բթատես զէմքերին: Գուցէ գէպի իւրեանց առաջնորդն ունեցած յարգանքի մնացորդն էր այդ վճռական բոպէին տատանում նոցա, կամ որոշումէին միմիայն կողոպտելով բաւականանալ: Գնդապետը ամեն բանի պատրաստ էր գոնէ մի բոպէ ազատելու այս վայրէնիներից իւր համար թանկագին բանները:

Գէորգը օգնութիւն վաղեց Գօնբարին:

Եմ ետևիցս այդ դռնից մոտէք, շնչաց Գօնբարը նորան, ի սէր Աստուծոյ, աղատեցէք կնոջս ու երեխայիս: Տանից դուրս տարէք նոցա ետևի Ճանապարհով:

— Աւելի լաւ է ինքներդ գնացէք նոցա մօտ, վրայ բերեց Գէորգը: Ես քանի կենդանի եմ այս գուռը կապաշտապանեմ:

— Ոչ ո՛չ ի սէր Աստուծոյ ժամանակ մի կորցնէք: Մի բոպէից յետոյ արդէն ուշ կլինի:

Գէորգը սղմեց նորա ձեռքը և մտաւ ննջարանը: Երբ ննջարանի գուռը բացուեց՝ միստրիս Գօն-

բարը երեխան ձեռքին վելցնելով՝ զարհութելի աղողակով վաղեց լուացարանի կողմբ:

— Ես եմ, Գէորգ Ռոլլէստոնը, ասաց Գէորգը, ի՞նձ նայեցէք: Գնդապետը ձեզ ու մանկանդ ինձ յանձնեց և Աստուծոյ օգնութեամբ երկուսիդ էլ կազատեմ հա:

Լուացարանի գուռը բանալով՝ նա տեսաւ այնտեղ ծծմօրը երկիւղից կիսամեռ յտակի վերայ փուռած: Նորան բարձրացըրեց և համոզից աշխատել իւր տիկնոջ ու մանկան աղատելու, որոց նա այնքան շատ էր սիրում:

Խեղճ կինը ահ ու գողով նայեց նորան ու շտապով հարցրեց.

— Ի՞նչ կարողեմ անել, տէ՞ր: Խնչով կարողեմ ես տիկնոջս օգնել:

Գէորգը պատուիրեց նորան մօտենալ տան ետեկ գուանը իմանալու թէ արգեօք չարագործները հօ չե՞ն պաշարել այն դուռն էլ: Չնայելով որ երկու կիւղը տիրել էր նորան, այնուամենայնիւ խոճուկ կինը անյապաղ հնազանդուեցաւ և կամաց սենեկից գուրս գնաց: Զգուշութեամբ բանալով պարտիզննաւող դուռը, նա չէմքի մօտ տեսաւ Ֆիրմալին, որին և պատմեց իւր տէրերի զարհութելի դրութիւնը: Ֆիրմալը խոսացաւ չնայել իւր օգնութիւնը և գնաց պաշարողների մտադրութիւնը իմանալու:

Բայց Ֆիրմալը գեռ ծծմօրից չէր հեռացել, երբ նորա վերայ յարձակուեցան վեց խռովարաններ ու պահանջեցին փողի կամ թանկաղին իրեղէնների տեղը ցցց տալ: Չստանալով բաւարար պատասխան

նոքա բռնեցին նորան և բանտարկեցին պարսպում գտնուած պահապանների խուղերից մէկի մէջ:

Մինչ այս մինչ այն միստրիս Դօնբարը աշխատում էր հանդստացնել վախեցած մանկան. ինեղծ աղջիկը այլ ևս ահից չէր գոչում, այն միայն ողորմուկ ձայնով կրկնումէր ինքն իւրեան՝ «Հայրի՛կ, Հայրի՛կ» խօսքերը:

Գէորգը տեսնելով, որ ծծմայրը չե վերադառնում, կամեցաւ գնալ նորա ետեկից, բայց զարմանքն այն է, որ մի անակնկալ դէպքի պատահեց: Միստրիս Դօնբարը միանդամայն չէր կամենում տունը թողնել, քանի որ իւր ամուսինը այդանդ էր: Ի զուր տեղը Գէորգը աղաջումէր նորան մասմէն երեխայի մասին, ՚ի զուր կրկնումէր նորան գնդապետի խօսքերը: Նա իւր խօսքի վերայ հաստատ էր կանգնած. այս մատաղահաս ու հեղահամբոյր կինը յանկարծ հաստատ ու ժայռի պէս անշարժ դարձաւ: Գէորգը շատ դժուար դրութեան մէջն էր:

Չորս, հինգ րոպէի ընթացքում, երբ նոքա ննջարանումն էին, սեղանասնից ոչինչ բան չէին լսում: Գէորգը յոյս ունէր, թէ գնդապետը հնար գտած կինէր չարագործներին համովելու, որ ձեռք վերցնեն այդ անկարգութիւնից: Յանկարծ միստրիս Դօնբարը թոյլ կերպով ճշաց. Գէորգը նորա ետեկի պատուհանին նայելով, տեսաւ ֆիրմալը սև գէմքը: Գէորգը բնազդմամբ վրայ ընկաւ առդամնակին, բայց ֆիրմալը շտապով ասաց.

— Մի՛ արձակէք, տէ՛ր, մի՛ արձակէք. ես եւ կել եմ տիրոջս ու գնդապետի աիկնոջը աղատելու:

Ամենելին աւելորդ է գանով գուրս գնալ տանից: Ահա՝ պարան, հաստ պարան, սորանով կապեցէք տիկնոջ ու մանկան գոտիկատեղը. ես առանց դժուարութեան կարովմ զոյց կտուրը բարձրացնել: Հաւատացէք ի՞նձ, տէ՛ր. Ֆիրմալը ամենելին սուտ չի խօսել:

Գէորգը յիշեց, որ մի քանի ժամ առաջ դէպք էր ունեցել համզզուելու այդ ծառայի անձնութրութեան մէջ և վճռեց այս անգամ հաւատալ նորան: Մանաւանդ որ փախչելն անհնար էր թւում և հետեապէս, ժամանակաւորապէս որ եկցէ տեղ թագչելու աղատութեան միակ միջոցն էր մնում: Ինեղծ միստրիս Դօնբարը ամենափոքր ընդդիմութիւն անգամ ցոյց չտուեց, երբ Գէորգը սկսաւ պարանը փաթաթել նորա մէջքի շուրջը. Նա կամենումէր մանուկը ձեռքին վերցնել բայց Գէորգը պարզեց, որ գուցէ պարանը երկու ծանրութիւն միասին չփարողանայ վերցնել: Այնուհետեւ նա նորան ձեռքով բարձրացրեց որքան էլ կարող էր. Ֆիրմալը պարանի միւս ծայրը կապեց դուրս ցցուած քարին և մեծ ոյժ գործ գնելով շուտով իւր բեռը հասցրեց կրտսրանը: Այն ինչ Լիլին լայն բացած ու արտասուայից աչքերով յատակի վերայ նստած զարհութելով նայումէր, թէ ինչպէս իւր մայրը պատի վերայով բարձրանումէր. ինեղծ աղջկայ կարծես լացը հատել էր ու միմայն ողորմանձան հեծումէր՝ վերաւորած դառնուկի նման: Գէորգը զգուշութեամբ բռնեց նորան ձեռքից և պարանով կապելով՝ Ֆիրմալի օգնութեամբ բարձրացրեց նորան էլ մի բոպէ

չանցած Կիլին դարձեալ մօր զրկումն էր նստած:
Յետոյ Ֆիրմալը պարանը վայր թռղեց Գէորգին, բայց
նոյն խկ վայրկենին սեղանատանը աղմուկ լսուեցաւ:
Նա ատրճանակը ձեռքին դռան մօտ գնաց. դռւոր
դրսից բացուեցաւ և շեմքում երևաց չարագործ
զինուորներից մինը: Գէորգը ատրճանակը դատարկեց
նորա գէմքին. զինուորը ընկաւ երեսի վրայ. մնացած
չարագործները յետ փախան: Յանկարծ Գէորգը մի
այսպիսի բան մտածեց, «Եթէ ես սպանելու ետևից
դնամ, աւագակները կրաքրանան գնդապետի կնոջ
ու երեխայի մօտ, այժմ ուշէ նորան փրկելը. աւելի
լաւ. է որ նորա պատուէրը կատարեմ»: Եւ մի քայլ
յետ գնալով, դռւոր պինդ փակեց ներսի կողմից,
յետոյ պարսնի օգնութեամբ բարձրացաւ ու շու-
տով միացաւ միստրիս Դօնբարի հետ:

Մի քանի րուպէ շարունակ ոչինչ ձայն չէր լրս-
ւում. զինուորները, ըստ երևութին, վախենումէին
Գէորգի ատրճանաւիլց: Բայց շուտով տան մէջ զար-
հուրելի աղմուկ բարձրացաւ. ամանները ջարդում
էին, բոլոր զզրցների ու պահարանների արկիները
դուրս ու ներս էին քաշքում. կողոպտողները ու.
բախութեամբ ու հիացմամբ գորգոսումէին: Մինչգեռ
այս ամենը կատարւումէր, արեգակի այրող ձառա-
գայթներն էլ ընկան կտրան վերայ, ուր թագէին
կացած թշուառները: Ամենատոքը անզգոշ շար-
ժուածքն անգամ կարողէր նոցա ապաստանաբանը
զինուորներին մատնել: Գէորգն ու միստրիս Դօնբարը
աշխատումէին մանկան թագյնել իսկ խեղճ Կիլին
ծարաւից մեռնելով՝ անդագար կրկնումէր.

— Կիլին թէյ է ուզում, մայրիկ, Կիլին թէյ
տուր:

Եթէ այս տօժք երկնքի տակ՝ այսպիսի բարոյա-
կան զարհուրելի տանջանքը շարունակուէր, գժուար
է երևակայել թէ ինչ կպատահէր դրցա: Սակայն
բարեբաղդաբար մի ժամ չանցած կողոպտումը սկսաւ
գագարել. պարափղեց լսուող քայլերից ու աղաղակ-
ներից իմացւում էր, որ չարագործները քաշւում էին:
Զայններն աստիճան առ աստիճան հեռանումէին և
վերջապէս տանն ու նորա շուրջը լուռթիւն տիրեց:
Սկզբում Գէորգը իջաւ կտրանից, գնդապետի գերզու ս-
տանը յանձնելով Ֆիրմանին, որ ամբողջ խռովութեան
միջոցին ինչպէս հաւատարիմ շուն չէր հեռանում
իւր փրկած գերդաստնից:

Տան դրսի կողմից պատին կպած քարեայ նեղ
սանդուղք կար, որից իջաւ Գէորգը և ետևի գոնից
մտաւ տուն: Գէորգը հետաքրքրուած լինելով զբն-
դապետի վիճակով, համարեա՛ ուշադրութիւն չդարձ-
րեց քարուքանդ ու անկանոն տեսարանին. Հայելի-
ները, կահկարասիքը, լուսամտի շրջանակներն ու
վանդակափեղկերը կտոր կտոր արած թափուած էին
յատակի վերայ, շորերի ցնցոտիներն ու բոլոր իրե-
ղէնները, որոնք առաջ պահուած էին զգոցների ու
անդուկների մէջ, այժմ դուրս թափած հաւաքուած
էին անկիւններում: Մինչև անգամ միստրիս Դօնբարի
միրելի պարակական կատուն էլ սպանուած էր. ջարդ
ու փշուր արած վանդակի մօտ էլ ընկած էր խեղճ
թութակի անշունչ մարմինը:

Գէորգը ումը որոնումէր՝ սեղանատանը տեսաւ:

Գնդապետը արիւնաշաղախս պառկած էր և կետնքի նշյլ անգամ չէր երևում նորա մէջ։ Ուրիշ գիտիներ կամ վերաւորուածներ այլ ևս չկային։ Հաւանական է որ զինուորները նոցա հետներն էին տարել։ Գէորգը ծունկ չոդեց և բարձր ձայնով կանչեց Դօնբարին՝ բայց պատասխան շատացաւ. սակայն, վերաւորուածի ձեռները տաք էին և ականջը դնելով նորա ձախ կողքին՝ Գէորգը համուպուեցաւ, որ նորա սիրալ բարախումէ։ Նա շուտով վերապարձաւ ննջարանը և վերե գտնուածներին բարձր ձայնով զոռաց, թէ գնդապետը կենդանի է, չնայելով որ վիրաւորուած է ու անզգայ։ Այս բոպէին Գէորգը առաջին անգամ նկատեց թունդ այլուածի հոտ և սենեակներից մէկի դուռը բանալով՝ գարհուրելով տեսաւ. յատակի վերայ բարդուած բազմաթիւ կարասիներ, որոց միջից բոց էր բարձրանում։ Զինուորները հարկաւոր էին. համարել իւրեանց եղեռնագործութիւնը հրդէհով վերջացնել։

Խեղճ՝ միստրիս Դօնբարի համար՝ իւր ամուսնուն կենդանի գտնելը, թէպէտե վատնգաւոր կերպիւ վերաւորուած, անասնի բազգաւորութիւն էր և նոյն բոպէին, երբ նա համբուրումէր գունատ, արիւնաշաղախս գէմբը, գնդապետը աչքերը բացեց։ Զինուոր ներից մնացած մի քանի կաթիւ օղին՝ նշանաւոր կերպով կենդանացրեց նորան Հարկաւոր չըր բոպէ անգամ կորցնել։ բոցը զարմանալի կերպով տարածւումէր։ Նոքա վերքերը փաթմաթեցին, արեան հոսանքը կարելու. համար, գնդապետի զլուխն ու ապղը վերաւորուած էր սրով. բացի դոցանից, ինչ-

պէս յետոյ երևաց. գնդապէնեւից մինը մաել էր ուսի մէջ։ Գէորգն ու Ֆիրմալը գրին նորան ներքնակի վեմէջ և ներս տարան ոյդու մէջ գտնուած մի վոքրիկ սենեակը։

Մի քանի բոպէից յետոյ նոքա լաւցին ողօրմելի ձայներ հարեան շինութիւնից և դուռը բանալով գտան այնաեղ գաւան արտասուող ծծմորը։

Յետոյ Գէորգը ներս մտաւ ախոսուը. Դօնբար գնդապետի ձիսներից չըրսը տարել էին չարագութիւնները, իսկ եղներին ու կառքին ձեռք չէին տուել Գէորգը որոշեց քաշուն Սխառու ամրոցը, որ երկու մղոն հեռու էր դանուում։

Միստէր Դօնբարին զգուշութեամբ զըին կառքի մէջ նորա կինն ու կիլին էլ մտը նստեցան. միացածները ուսով էին։ Այգուց գուրս զալով տեսան, որ հարեան գաստակերտներն էլ բոցով էին պատած և ծիփ թանձր սիւները բարձրանումէին նոցանից։ Գէորգը ակամայ մտարերեց, թէ ինչպէս ինքը իւր գալուուած էր բոլոր շրջակայքի գեղեցկութեամբ ու բարեվայելու տեսքով։ Դեռ քառորդ մղոն էլ չէին անցել երբ միստէր Դօնբարը նորից անզգայ գրութեան մէջ ընկաւ. երեւում էր, որ նա անկարողէր այգալիսի ճրճաւացող կառ քով ձանապարհուարկեւն, այս պատճառով էլ Գէորգը որոշեց ծառերի հովանու տակ իջևանել Ֆիրմալին ամրոցը ու զարկելով թշշկի ետելից։ Ժամերն անցնումէին միմեանց ետելից. Կիլին քնեց վերջապէս՝ դայիկի դողդոջուն ծնկան վերայ. միստրիս Դօնբարը ամսւանու մօտ նստած՝ անդապար թռչում էր նորա դշով ջողով և

ահ ու գողով հետեւմ էր նորա մէջ երբեմնապէս երեցած կեանքի նշոյներին։ Գէորգը ման էր գալիս և անհամբերութեամբ Ֆիրմալին էր սպասում։ Յանկարծ ճանապարհին երեցաւ նոյն զօրագնդի բժիշկը, ուր ծառայումէր Թօնբարը։ Երջանկութեան և մեծ ուրախութեան արտասուբներ թափուեցան միստրիս Թօնբարի աչքերից, երբ բժիշկը յայտնեց, թէ հիւանդը կենդանի կմնայ։ Նուսով Ֆիրմալն էլ եկաւ և նորա հետ մի քանի մարդիք պատգարակում։ Բժժիշկը համառօտ կերպով պատմեց Գէորգին բոլոր անցածը։ Գաւաճանները արդէն Մխառուից դուրս էին գնացել և ուղեղորուել էին Խնդօր։ Խռովութեան ժամանակ միսիայն երեք սպաններ էին սպանուել Մխառի մէջ։ Երոպացիներից մեծ մասը ամրոցումն էին թագչել։ Պէտքէ նկատել, որ գնդապետը շմեռաւ, բայց տարաբաղտարար իւր ամրողջ կեանքի ընթացքում հաշմանդամ մնաց։ Երբ նա ոյնքան առողջացաւ, որ կարողէր ճանապարհորդել, ամրողջ դերդաստանով վերադարձաւ Անգղեա։

ԴԼՈՒԽ ՃԹՅ.

ԵՕԹ ՏԱՐՈՒՑ ԹԵՏՈՅՑ:

Որովհետեւ այն զօրագունդը, որի մէջ ծառայումէր Թօլէստօնը, չէր մասնակցում խռովարաների գէմ յարուցած պատերազմական գործողութիւններին, Գէորգը մտաւ կամաւորների թւումը և Սէր Թայեա—Թօկաի առաջնորդութեամբ՝ մասնակցեց կենդ-

րոնական Հնդկաստանում կատարած արշաւանքին։ Նա ներկայ գտնուեցաւ բազմաթիւ ճակատամարտներին և գէպք ունեցաւ իւր ընդունակութիւնն ու քաջութիւնը ցոյց աալու։ Մի յարձակման ժամանակ Գէորգը ծանր կերպով վերատորուեցաւ և այս հանգամանքը ստիպեց նորան արձակուրդ վերցնել ներոպագնալու համար։

Անդղիս գնալով նա մի քանի շաբաթ մնաց Գամբլէտօնում։ Ծերունի Բարտօնը առաջուան պէս ուրախ էր ու հիւրասէր, իսկ Թօգան շատ մեծացել էր ու մի չքնաղ աղջիկ էր դառել։ Գէորգը այցելեց իւր խորթ մօրն ու էրկիին։ Ժամանակը քաղցրացրել էր նոցա փոխադարձ յարաբերութիւնները և թէպէտ ոչ մի կողմից բարեկամութեան ցոյցեր չկային, այնուամենայնիւ նոքա քաղցրավարութեամբ չկային, այնուամենայնիւ միմեանց։ Գէորգը նորախն էլ այցելեց, որ հոգւով չափ ուրախացաւ, այցելեց և Թօնբարներին՝ իւր Հնդկաստանի բարեկամներին։ Յետոյ Հնդկաստան վերադառնալով Թօլէստօնը հասարակ զինուորի պէս ապրեց։ Իսկ եօթ տարի ծառայելուց յետոյ՝ ստացաւ զինուորական աստիճան և առանձին զօրաբաժնի հրամանատարի պաշտօն։

Հարաւային Հնդկաստանի Խօսակամունդ ասուած մի վայելչատես գիւղաքաղաքում մենք դարձեալ հանդիպումենք մեր հին ծանօթներին։ Գէորգին ու Թովմաս Բարանին։ Մի փառաւոր այլու մէջ, որ գրտնուումէր փոքրիկ դաստակերտի մէջ, նոցա հետ միասին ծխաքարշը բերանում նստած էր ծերունի ու բարձրահասակ մարդ, որ առաջին իսկ նայելուց ճա-

նաշւումէր թէ զօրապետ Մակ—Գուգանէր: Մի մատաղահաս գեղեցիկ աղջիկ պայծառ ու առողջ այտերով, որ փկայումէր, թէ նա դեռ շատ ժամանակ չէր, ինչ տեղափոխուել էր այս այրեցած կողմերը, փնջի համար ծաղկներ էր քաղում: Նորա գեղեցիկ դէմքն ու փայլուն աչքերը այն ասահճոն զգալի նմանութիւն ունէին թովմասի դէմքին ու աչքերին, որ մարդ առանց գժուարութեան կճանաչէր, թէ փոքրիկ Ռօդա Բարտօնն էր նո:

Երբունի միատեր Բարտօնը մօտ մի արքի առ աջ մեռել էր և Ռօդան ուրիշ ազգականներ չունենալով բացի եղբօրից ու հօրեղբօրից, տեղափոխուել էր Հնդկաստան, զօրապետի տանը տնտեսի պաշտօն վարելու և երեխնապէս թովմասին տեսնելու միջոց ունենալու համար: Սէր Զօն Մակ—Գուգալը կրկին անգամ պաշտօն էր ստացած Հնդկաստանում: Նա փոխարինել էր մեր բարեկամ Պօմզին, զօրքի հրամանատարի պաշտօնով: Ռօդան այժմ 21 տարեկան էր և իւր հօր կեանքի վերջին ժամանակներում գեղեցկութեան կողմից տռաջինն էր համարում Քէրկշերում: Շատերին էր զրաւել իւր կողմ այս գեղեցիկ աղջեկը, մինչեւ անգամ լուր էր տարածուած, թէ ինքը երիկ Ռօլէստօնը, որ տարեկան տասն հազար եկամուտ ունէր, սիրահարուել էր նորա վերայ: Ինչ ուղումէ լինէր, Ռօդան ըստ երեսութիւն առանց մի առանձին ցաւակյութեան թողեց Անդիման և արդէն քանի մի ամիս էր, որ ապրումէր հօրեղբօր մօտ Հնդկաստանում: Շոգերն սկսուելուն պէս, զօրապետը երկամնեայ արձակուրդ վերցրեց և տեղափոխուեցաւ

Նէլլինէրեան բլրի գաստակերաը, ուր այցելեցին նորան Գէորգն ու Թովմասը:

Գէորգը ամառանոցի գոներում կանգնած՝ ակամայ իւր հայեացքը Ռօդաին էր ուղղել: Հարիւրապետ Ռօլէստօնը մի գեղեցիկ ու բարձրահասակ մարդ էր, մոյդ ընչացքներով ու թուլս դէմքով, որպիսի գոյնը աւելի էին մթացնում նորա կապոյտ աչքերը:

Դժուար է երեակայել Հնդկաստանի այս բարերեր տեղի բուսականութեան բոլոր ճխութիւնն ու գեղեցկութիւնը: Վարդի թփերը թեքւում են վարդերի ծանրութիւնից. Գէրանիում կոչուած բոյսերը բարձր թփերի չափ են աճում. փուքն ու արեածաղեկը մեկ Եւրոպացիներիս համար միանգամայն անհաւատալի մեծութեան են համար: Սակայն պայծառ ծաղկների բազմազանութիւնը և բուսականութեան անուշահոտութիւնը ոչինչէ՝ համեմատելով աեղի գեղեցկութեան հետ: Մի կողմից բլուրները գիզւում են միմեանց վերայ, կորչելով կապոյտ երկնքի հորիզոնում, միւս կողմից ձգւում են անվերջ գաշտավայրեր և աչքի տեսութիւնը կորչումէ հեռու հօրիզոնի մօտ. մթնոլորտի անսովոր թափանցկութիւնը, որ թոյլ է տալիս շատ մեծ հեռաւորութեան վերայ գտնուած առարկաները պարզ տեսնելու, աւելի զօրեղացնումէ տպաւորութիւնը:

Երբ Գէորգը սրահից հեռացաւ ու կամաց կամաց մօտեցաւ Ռօդաին, նորա ուշադրութիւնը գրաւեցին վիճով ձայները.

— Գեղ ասումեմնամակն ինձ տուր, գոչեց մեզ
9

ծանօթ մի ձայն և յետոյ սրահում երևաց Յուլիս
Կեսարը ձեռքին մի նամակ բռնած, որ և տուեց
Գէորգին. յետոյ մտաւ Ֆիրմալը:

— Այս մարդիքը խիստ պաշտօնասէր են, տէր,
ասաց Յուլիս Կեսարը: Իմ իսկական պարտաւորու-
թիւնն է նամակը անձամբ ձեղ տալ, տէր: Ես զօ-
րապետի մօտ եմ ծառայում և պէտք է նամակներ
տանեմ իւր բարեկամներին: Բարութիւն արէք, տէր,
և այս բանը հասկացրէք ձէր ծառային:

Յուլիս Կեսարը բնիկների հետ ինչպէս շների
հետ էր վարւում և թէպէտ ինքը նոյանից աւելի
թուխ էր, բայց և այնպէս միշտ ծառաներին անի-
ծեալ սեա տիտղոսով էր որոշում: Գէորգը Ֆիրմալին
սիրումէր, այս պատճառով էլ շփոթուած էր Կեսարի
վարմունքից. նա անհամբերութեամբ խլեց նորա ձեռ-
քից նամակն ու ասաց.

— Ֆիրմալն ուղիղէ, միտէր Յուլիս Կեսար, ես
չեմ թոյլ տայ, որ սորան անպատուէք:

Գէորգը բացեց նամակն ու զօրապետին դառ-
նալով՝ ասաց.

— Իմ եղբայր Երիկիցն է այս նամակը, սէ՞ր
Զօն, նա իմացնումէ ինձ իւր Մադրաս գալը. կարծեմ
կարծ միջոցից յետ նա այստեղ կտայ: Երիկը մտա-
դիր է Ֆօակամունդի Գառւսոն հիւրանոցը իջււանել:

— Այդ ի՞նչ խելք է փափկասնունդ եղբօրդ
կողմից, որ լոկ որսի համար Հնդկաստան է եկել,
ծիծաղելով վըայ բերեց սէր Զօնը: Արդեօք մի ուրիշ
բան բացի փագբերից ու փղերից չկայ, որ նորան
այստեղ է քարշում: Իմ կարծիքով, պէտք է մի խիստ

ստիպողական պատճառ լինի, որ այնպիսի ծոյլ ու
անբարոյական երիտասարդը, որպիսին Ճանաշումեմ ես
ձեր եղբօրը, յանձն առներ մի այսպիսի Ճանապար-
հորդութիւն:

Գէորգը թունոր կարմիեց և սկսեց շրժունքները
կռծել:

— Երիկը միշտ սիրումէր որս, նկատեց Գէորգը,
թէպէտեւ մի առանձին Ճաշակով չէր կարողանում
հրացան արձակել:

— Երևակայումեմ, աղաղակեց Թովմասը, թէ
նա իւր տասն հազար եկամտով ինչ երեկելի մարդ
պիտի լինի այստեղ:

Երիկի գալու լուրը ոչոքին անծանօթ չէր. մի
քանի շաբաթ առաջ նա արդէն Գէորգին զրել էր
Հնդկաստան գնալու դիտաւորութեան մասին վագրեր
որսալու նպատակով: Երիկ Ռոլլէստօնը այդ միջոցին
22 տարեկան էր. նորա մայրը մեռել էր, ուրեմն և
ոչինչ բան չէր կապում նորան իւր հայրենիքի հետ:
Նա արդէն երկու երեք տարի անցրել էր Լօնգոնում
և լուսին վայելել էր աշխարհիս վայելութիւնները:
Այդ ժամանակ մի տեսակ հօրութեալ գառել հարուստ
ու անգործ երիտասարդների համար, որսի, զուարձա-
նալու երթալ արևելքը, Երիկն էլ հօրակն էր հիտե-
ւում, որսի, ծիարշաւի ու այլ զուարձութեանց սի-
րուցը կամ աւելի զօրեղ ստիպմանքից, ինչպէս կար-
ծումէր զօրապետը:

Միմիայն Ռոդան արտայայտում էր բաւա-
կանութիւն Երիկի գալու պատճառով: Արդեօք,
յիրաւի ցանկանո՞ւմէր տեսնել նորան, թէ միայն

մասղիր էր Գէորգին զրգոել այդ յետոյ կտեսնենք:
Մի շաբաթ անցաւ: Էրիկը տեղափոխուեցաւ
Ֆօտակամունդ և օրուայ մեծ մասը սէր Զօն Մակ
Գուգալի մօտ էր անցնում: Ծերունի զօրապետի կար-
ծիքը, թէ միստրիս Խոլլէստօնին Հնդկաստան քարշող
մի ուրիշ պատճառ կար բացի որարդութիւնից, կա-
տարելապէս արգարացաւ: Մինչև անգամ դիտելու
անկարող մարդու համար պարզ էր, որ երկու եղ-
բայրներն էլ սիրահարուած էին Ռօդաի վլրայ. և
պէտք է խոստովանել, որ Ռօդան իւր կողմից զերա-
գասումէր Էրիկի խաւմբը:

Թովմասը տհաճութեամբ նկատում էր նորա աշ-
քերում կատարուող փոփոխութիւնները: Էրիկը գե-
ղեցիկ էր ու հաճելի և Բարտօնը սկսեց թունդ վեճել
նորա հետ այն բանի մասին, որ նա Ռօդաին սա-
ռեցնումէր Գէորգից:

Մի անգամ Թովմասը առաջարկեց Մէյսօր գնալ
որսի և թէպէտ Խոլլէստօնները չէին ցանկանում
դաստակերար թողնել բայց ո՛չ մինն ու ոչ էլ միւսը
պատճառ չէին գտնում մերժելու այդ առաջարկու-
թիւնը:

Մի քանի օրից յետոյ Երիտասարդները ձանա-
պարհ ընկան դէպի Մէյսօր: Դեռ մի քանի քայլ
չդրած, նոքա ակամայ յետ նայեցան գեղեցիկ, բազ-
մաբնակ դաստակերտին, ձոխապարդ այգուն ու Ռօ-
դաին, որ կանգնած էր սրահում վարդի թփերի մէջ:

Մէյսօր տանող ձանապարհը լերան ստորո-
տո մնէր և պտտւումէր բլուրների մէջ. մեր որսորդ-
ները երբեմն համարեա ուղղահայեաց զառիվայրովն

էին անցնում և կարողանումէին իւրեանց ոտների
տակ խոր հովիտներ տեսնել: Երիտասարդները որո-
շեցին օրուայ ամենատաք ժամանակը անցկացնել այն
գեղեցիկ իջևանում, որ գտնուում էր Ֆօտակամունդից
մինչև դաշտավայրները եղած Ճանապարհի մէջ տեղը:

Զիաները պահուեցան յարկի տակ և նախա-
ճաշելուց առաջ որսորդները զրօսնելու դուրս գնացին.
Ֆիրմալը խորհուրդ տուեց Գէորգին հրացան վերց-
նել իւր հետ, որովհետեւ իջևանի պահապանի խօս-
քին նայելով, այդ օրերը շըջակայքում յովազ էր
երեացել: Էրիկը կանչեց իւր ծառային, որին Մադ-
րասումն էր վարձել և պատուիրեց տալ իւր հրացանը:
Էրիկի պատուէրը շատ շփոթեց ծառային, որ վեր-
ջապէս խոստովանեց, թէ հրացանը մոռացել է բե-
րել Ֆօտակամունդից: Էրիկը շատ բարկացաւ ու-
րանցքով զարկեց նեղի զլսին, որպիսի արարմուն-
քից Գէորգը զարհուրեցաւ ու զզուեց: Յետոյ վերց-
նելով իւր հետ որսորդական նիզակը, որ պատշգամ-
բումն էր կախած, գնաց միայնակ: Գէորգը աշխա-
տումէր հանգարտեցնել նորան և համոզումէր իւ-
րեանց հետ միասին շըջել բայց ոչնչ պատասխան
չատանալով, սկսեց լնել իւր հրացանը. Թովմաս Բար-
տօնն էլ հետեւց սորս օրինակին:

Էրիկի ծառան տանից դուրս գնաց բարկացած
ու սկսեց քթի տակ խօսել:

— Ամօթ է Էրիկի համար, որ ծեծումէ իւր
ծառային, նկատեց Թովմասը. բայց սակայն բաւա-
կանէ միայն միանգամ նայել այս նեղին և կհամո-
զուենք, որ սա էլ անպիտանի մէկն է:

Երկու բարեկամները միասին ճանապարհ ընկածն. Գէորգը փոքր ինչ անհանդիստ էր, որ երիկը միայնակ էր և համարեա՛ առանց զէնքի:

— Ե՞ն, նա հօ այդքան էլ անխելք չի լինիլ որ առանց զէնքի յարձակուի յովազի վերայ, համոզումէր նորան Թովմասը:

— Աստուած նորան պահպանումէ, վրայ բերաւ Գէորգը. Ճշմարիտ, ես չդիտեմ, թէ ինչ կլինի նորա վերջը:

Ճանապարհը գտլարուն էր և երկու կողմերը թժիր կային: Մեր երիտասարդները ամենեին չկարողացան երիկին տեսնել. վերջապէս Թովմասը սկսեց բարձր ձայնով կանչել նորան: Գէորգն արդէն տեսնել. էր յօվազին, որ իւրեանցից քիչ հեռու խոտերի մէջ պտուկած էր: Նա Թովմասին նշան տուեց ու դատարկեց հրացանը: Յօվազը տեղն ու տեղը դրուեց: Նոյն վայրկենին Թովմաս Բարտօնը զարմանքից աղաղակեց: Գէորգը յետ նայեց ու տեսաւ մի ուրիշ յօվազը որ Ճանապարհի մէջ տեղը կանգնելով որսորդներից մի քանի սաժէն հեռու, ագին շարժումէր: Թովմասն արձակեց հրացանն ու վերաւորեց կենդանուն. յօվազը յետ քաշուելով՝ պատրաստումէր յարձակուել թշնամու վերայ, բայց Գէորգը ուղիղ նորա բերանին զարկեց: Կնդակը անշուշտ ուղիղ մէջն էր մտել որովհետեւ յօվազը սպանուած զլուրուեցաւ խոտերի վերայ:

Նոքա ակամայ կանգնեցան ու հիանումէին կենդանու ահագին մեծութեան վերայ. յետոյ շուռ եկան միւս՝ աւելի փոքր յօվազին նայելու: Բայց երե-

ւակայեցէք նոցա զարմանքը, երբ տեսան որ այլ ես չկար նա: Անշուշտ յօվազը միմիայն վերաւորուել էր և վերջին ոյժը հաւաքելով փախել: Յանկարծ ներքեցից մի զարհուրելի աղաղակ լսեց նա, «Երիկ», քուեց Գէորգը և վազեց գալարուն զառիվայր շաւովը: Հենց առաջին ճանապարհապայտքին նա մի զովը: Հենց առաջին ճանապարհապայտքին նա մի զարհուրելի աետարանի ներկայ գանուեցաւ: Երիկը փոռւած ընկած էր գետնին, վերաւորուած յօվազը յարձակուած նորա վերայ իւր սարսափելի չանկերով անկում նորա կուրծքը, նորա կնճիթը հասրով անկումէր նորա կուրծքը, նորա նիդակը ընկած էր նումէր Երիկի գլխին: Արիւնոտ նիդակը ընկած էր գետնին նորա մօտ և արեան վասկները հոսումէին կենդանու վերքերից: Գէորգի հրացանը լցուած չէր. նա հրացանի խողովակից բոնելով՝ կոթով զարհուրելի հարուած առւեց յօվազին: Յօվազը Երիկին հանրուեց կենդանու գլխին:

Երիկի վերքերը այնքան ծանր չէին, որքան ինքն կաթում սկզբում: զգուշութեամբ փաթաթելուց յետոյ բոլոր վերքերը, նա իւրեան այնչափ առողջ զգաց, որ լաւ ախորժակով նախաձաշեց: Նոյն երեզակացին մեր բարեկամները շարունակեցին իւրեանց ճակոյին մեր բարեկամները շարունակեցին իւրեանց ճանապարհորդութիւնը զէպի Մէյօր:

ԳԵՂԱՎՈՒ Ե.

ԹԵ ԻՆՉՊԻՍ ՎԱԴՐԸ ՔՈՐԵՑ ՍՈՒԼԹԱՆԻ ԱԳԻՆ:

Երկու օրից յետոյ որսորդները Մէյսօր հասանւ Մէյսօրի Ռաջան բացակայ էր, այնպէս որ մէր երիտասարդները պատիւ չունեցան այս հզօր իշխանաւորին ներկայանալու. բայց գնացին նորս պալտուը, ուր ամենից առաւել ուշադրութիւն էր գրաւում մեքենական խաղալիքների ժողովածուն: Այն խաղալիքը, որով աւելի շատ զմայլումէր Ռաջան, ինչպէս ասաց նոցա պալտում առաջնորդողը, ներկայ յնումէր երկաթուղու գնացք. դա բանալիի օդնութեամբ պատումէր բարակ ուղէկծերի վերայ, իւրաքանչիւր անդամը կանգ առնելով ԱՄԷյդէնհամ վերնագիր կրող փոքրիկ իջևանների մօտ: Նոքա այցելեցին նոյնպէս Ռաջաի գաղանանոցին, ուր վագրերը պահուած էին նոյնչափ բարակ վանդակների մէջ, որպիսիք մենք գործ ենք գնում կոկորդիլումների համար:

Ճաշեց յետոյ երեքը միասին պատշգամբում նստած՝ մատծումէին այն որսի մասին, որ մատղիր էին անել հետեւալ օրը: Յանկարծ Ֆիրմալը լուր բերեց, թէ սե արջը զուրս է փախել գաղանանոցից և թափառում փողոցներում, ուր արդէն պատառուելէ մի մարդ: Նոքա բոլորը անյապազ գնացին այնաեղ, ուր պատահէլ էր այն դէպքը: Մի փոքրիկ հրապարակում փողոցին մօտ նոքա մի հետաքրթիք տեսարանի պատահեցան: Երեսումէր, որ արջին պիտի

սպանէին. այս նպատակով հեծելագնդից քսան զինուոր էին ուղարկուած, որոնք արդէն մեծ եռանդով գործումէին: Նոքա արջին հալածերով՝ տարան հրապարակը, ուր յետոյ այնքան արագութեամբ շղթայակապ շղթապատեցին նորան, որքան կարողէին վազել նոյն ձիերը և այգպէս իւրեանց փայլուն շորերով մի գեղեցիկ տեսարան կազմեցին: Արջը մի քանի անգամ այս ու այն կողմ դիմեց, բայց ոչ մի կերպով չգտաւ մի այնպիսի յաջող բոպէ, որ կարողանար յարձակուել իւրեան հալածող ձիաների վրայ: Երջանը հետզհետէ այն աստիճան փաքրացաւ, որ ձիաւորները իւրեանց սրերը կարողանումէին գաղանին հասցնել: Թաւամազ հրէցը բոլորովին ճարահատելով՝ բերանաբաց նստեց ետեւի ոսների վերայ շղթանի մէջ տեղը: Փոքր ժամանակից յետոյ արջը կտոր կտոր եղաւ:

Այն տեղը, որ ընտրեցին մէր որսորդները որսի համար, հինգ մզննաչափ հեռու էր գտնուում Մէյսօրից. առաւտօտեան լուսաբացին նոքա արդէն այնտեղ էին: Նոցա տաջեւ անցնումէր մի փոքրիկ գետակ, որի միւս ափում մի քանի մզնն տարածութիւն ծածկած էր խիս թփերով, գամենայն տեսակ վայրի գաղանների բնակարանն է: Մէյսօրից որսորդներին ուղեկցող բընիները ասացին նոցա, թէ երկու օր առաջ գետի շղթակայքում տեսել են մի վագր և յիրաւի՛, նոքա գտան այնտեղ այդ գաղանի ծամարիտ հետքերը: Այդ գիշերը մերձակայ արօտներում արածող հօաիցը յափլշտակել էր մի կով, որի կէսը կերել էր, մէկին էլ ծանր վերաւորել. գետի ափում հենց այն տեղը,

ուր որ մեր որսորդները մտազիր՝ էին անցնել պարզ
նկատւումէին աւազե վերայ ահազին թաթերի
հետքեր:

Գետն անցնելու ժամանակ էրիկին մի անհաճյ
գէպք պատահեց: Փիղը, որի վերայ նա նստած էր,
սիրտ չէր անում ջուրը մանելու և լրիկը փոխանակ
գործը առաջնորդին յանձնելու, որ ինչպէս սովորու-
թիւն է, նստած էր կենդանու վզն, հանեց իւր որ-
սորդական դանակը և ցցեց փղի մէջքին, նորա կա-
մակորութեանը յաղթելու նպատակով: Խեղջ փիղը
սկսեց զարհուրելի կերպով աքացիլ և էրիկին վայր
ձգեց ջրի մէջ: Բայց նա շուտով ուղղուեցաւ և հա-
մազուելով, որ բոլոր ոսկրները ամբողջ են, այս գէպ-
քում աւելի բարեխիղջ զանուեցաւ, որքան չէր կա-
րելի սպասել նորանից: Նա նորից հեծաւ իւր հսկա-
յական ձիու վերաց, որ վիշանելով նորա աւելի հեղ
արարմունքին՝ համաձայնեց վերջապէս միւս ափը
դուրս գալ:

Թովմաս Բարտօնի փոքրիկ ձին էլ կամակորու-
թեամբ հրաժարւումէր ջուրը մննելուց և աւելի
դժուար էր նորան համոզելը. քան փղին: Գէորգը
«Սուլթան» անուանած արաբական գեղեցիկ ձիու վե-
րայ նստած, ամենից առաջ գետը մտաւ, այն յուսով
որ գուցէ Թովմասի ձին էլ նորան հիտեի: Փղի գնա-
ցած տեղից փշը ինչ ցած ջուրը շատ ցածր էր և
Գէորգը յաջողութեամբ անցաւ մինչև միւս ափը:
Գետի երկայնութեամբ աճելէին խիտ կերպով բարձր
թփեր, որոնց ետելը մի փոքրիկ բաց տափարակ
գետին կար: Արաբական ձին դուրս եկաւ ափը և

զգուշութեամբ անցնելով թփերի միջեց, իւր բեռ-
նովը միասին մտաւ այն հրապարակը: Գէորգը ձին
կանգնեցրեց և յետ նայելով սկսաւ ձայն տալ թով-
մասին:

Այդ բոսէին նա նկատեց, որ իւրեանից նրկու-
քայլ հեռու՝ թփերն ու տերեւները շարժում էին և
զգաց, թէ ինչպէս «Սուլթանը» դողաց: Զարհուրելի
մռնչենով գուրս վազեց թփերի միջեց մի ահազին
վագր: Ձին երկիւրղի սկսեց փախչել աւազուտ գետնի
վերայ. վագրը մի թռոցքով վազեց նորա ետեից,
բայց միմիայն կարողացաւ ձիու ազին բերանով լըռ-
նել: Առաջին անյաջողութիւնից յետոյ, գազանը
կարծես թէ կանգնեց: Գէորգը նկատելով որ թփերը
արգելք են լինում անցնելու, ընթացքը փոխեց ու է-
պի գետափը. քաջ ձին շուտով լողալով տարաւ նո-
րան գետի միւս ափը:

Թովմաս Բարտօնն էլ, էրիկն էլ վախեցան վագրի
մռնչալուց: Թովմասը գեռ էլի կռւում էր իւր ձիու
հետ, որին չէր կարողացել ստիպել որ ջուրը մնի:
Էրիկն էլ նոյն ափումն էր, ուր և Գէորգին էր, թէ-
պէտե նորանից փոքր ինչ հեռու և բարձր տեղեց
տեսաւ եղքուր, որ արշաւումէր գետեղը ուղղու-
թեամբ և հալածւում վագրից. առաջնորդը հրեց
փղին յուսալով Գէորգին օդնել և էրիկը գետեղի
ուղղութեամբ առաջ գնալով Թովմասի կանգնած տեղի
դիմաց, ձայն տուեց նորան.

— Բարտօն, ի՞նչ զարհուրելի թշուառութիւն.
Քայլը անկանած պատառած պիտի լինի Գէ-
որգին:

Դեռ չէր վերջացրել նա այս խօսքերը, երբ ինքը
Գէորգն երեւաց Թովմասի մօտ:

— Դեռ ևս չէ՛, երի՛կ, ուրախ ուրախ գոչեց նա:
Ինձ, արդարեւ, զարհուրելի վասնդ էր սպանում,
բայց, բարեբաղսարար, վազրը միմիայն Անութանի»
ազին քորեց:

Թովմասը նորից սկսեց ստիպել ձիուն միւս ավը¹
անցնել, բայց բանը նորանով վերջացաւ, որ եր-
կուսը միասին վայր ընկան խռախ մէջ:

Երիկը յաջող կերպով որսումէր գիմացի գե-
տափի մօտ: Փղի մէջքին նստած տեղից նա տեսաւ
վազրին թփերում ծածկուած՝ հենց այնտեղ որտեղից
յարձակուել էր Գէորգի վերայ: Երիկը անվզով նշան
դրեց ու արձակեց հրացանը: Վազրը միմիայն վերա-
սորուեց և իւր գարսնից գուրս վազելով՝ յարձա-
կուեց փղի վերայ, որի քիչ մնաց ուր կոտրեց: Ե-
րիկը իսկոյն հրացանը զարհուրելի զազանի գլխից
մի քանի մատնաշափ հեռու բռնելով՝ արձակեց ու ղ-
ղակի նորա ականջին: Վազրը թաթերը կախ ձգեց ու
վայր ընկաւ շնչասպառ: Միւս որսորդներն էլ յար-
մար ժամանակին հասան, Երիկի քաջագործութիւն-
ներին վկայ լինելու: Համար:

Երիտասարդները աւելի խորը մտան խիտ ան-
տառի մէջ: Այլ ևս գազանի հետք չէր երեւում և
Երիկը բաւականանալով միանգամայն իւր արած որ-
սով՝ առաջարկեց վերագառնալ Մէյսօր: Գէորգի ու
Թովմասի համար, ընդհակառակին, բոլոր զոււարձու-
թիւնը յետոյ պիտի լինէր. վէճ բացուեց: Երիկը
տաքացաւ. վերջապէս վճռեցին վերագառնուլ այն-

պայմանով՝ որ միւս առաւտովը գարձեալ որսի գան
միւնոյն տեղը:

Նատ անդամ՝ մարդուս բաղաը ամենասար հան-
գամանքներիցն է կախուած լինում: Երիկի անհամ-
բերութեան շնորհիւ, որսորդները մէկ թէ երկու
ժամնշանակածից վաղ վերադարձան և այս դէպքը
նոցա համար ամենազարհուրելի հետեանքներ ու-
նեցաւ:

Երիկն էլ պատշգամիի մօտ ձիաներից վայր ի-
ջան և սկսեցին կանչել իւրեանց ծառաներին: Բայց
ո՛րքան զարմացան, երբ ոչ մինը նոցանից չերեւաց:
Ֆիրմանը ու Թովմասի ծառան իւրեանց տէրերի բա-
ցակայութիւնից օգուտ քաղելով՝ փողոց էին գնա-
ցել: Երիկի ծառայ Զինէան նստած էր իւր տիրօջ
ննջարանի յատակի վերայ մէջքը դռանը գարձուցած:
Աողքին դրած ունէր շըռ օղի, իսկ բերանումը բռու-
նած Երիկի գեղեցիկ ծխաքարը:

Երբ գուռը բացեց Երիկը՝ զարմանքից ու բար-
կութիւնից ապշեց: Զինէան այն աստիճան անձնա-
տուր էր եղած իւր զքաղմունքին, որ չնկատեց իւր
տիրոջը և միայն այն ժամանակ սթափուեց, երբ
զգաց մէջքին մտրակի սարսափելի հարուած: Ծխա-
փազը բերանից մայր ընկաւ ու կաոր կաոր եղաւ:
Երիկը առաւել զայրացաւ և սկսաւ անողորմ կերպով
մտրակել յատակի վերայ զլորուող նեղքին: Ծառայի
աղաղակը լսելով ներս վազեց Գէորգը: Երիկը թշլ
տուեց և Զինէան մալաբարեան լիզուով անէծք ու
հայհոյանք թափելով՝ սենեկից դուրս սլքուեց:

— Սառ' ու քարտասի՞րս, ասաց Գէորգը և զբօր,

ի՞նչ է նշանակում ծեծել այնպիսի մարդուն, որ չեղարող նոյնը ձեզ անել:

Երիկը սարսափելի բարկացած էր, ուստի և անկարող իւր արածի անարդարութիւնը ճանաչելու թովմաս Բարտօնը մտաւ կռուի տաք ժամանակ:

— Դու ի՞նչպէս ես համարձակում խառնուել իմ գործի մէջ, աղաղակեց երիկը: Ես երեխայ չեմ և զիտեմ թէ ինչ եմ անում: Այս նեգրը իմ ծառաս է և ոչ քոնը և ես կատարեալ իրաւոնք ունիմ կամցածիս պէս վարուելու նորա հետ:

— Քանի այստեղ եմ՝ այդպէս մի՛ անիր, պատասխանեց Գէորգը: Ես խորին կերպով արհամարհում եմ այն մարդուն, ով որ իւրեան թոյլ է տալիս բնիկների հետ խստութեամբ վարուել և այդ բանին չեմ կարող սառնութեամբ նայել: Ի՞նչ ես կարծում, ի՞նչ կասէին քեզ քո բարեկամներն ու ծանօթները, եթէ իմանային, որ դու մտրակով ծեծում ես ծառայիդ: Քեզ կարող եմ հաւատացնել որ Հընդկաստանցի ամեն բարեմիտ մարդ նոյնպէս է մտածում, ինչպէս և ես:

— Ես առանց այդ էլ զիտեմ, ասաց երիկը, որ դու այժմ կերթաս Ռօդաի ու զօրապետի մօտ և նոցա մէկը տասնով կպատմես, որպէս զի քո անսովոր մարդասիրութեամբդ հաճոյանաս նոցա: Նորանից վատ մարդ կլնի՞ արդեօք, ով կանանց թուլութեան երես տալով՝ աշխատի շնորհ գտնել նոցա մօտ:

— Թող եղբայրս չլնի՞ իր, ես քեզ ցոյց կտայի, թէ ինչպէս պէտքէ խօսել, ասաց Գէորգն ու սենեկից դուրս գնաց:

Թովմասը դուրս գնաց պատշգամբը և սկսեց հանգստացնել Գէորգին:

— Լսի՛ր, Գէ՛րդ, ասաց նա. ի՞նչ ես ամեն բանից իսկոյն վշտանում: Զինէան այնպիսի անպիտանն է, որ ամենահեղմարդուն անդամ համբերութիւնից կարող է հանել: Իմ կարծիքով լաւ կիենէր, եթէ ես ու դու յետ գառնայինք մեր տեղը, լաւ չելնի՞, հա՞, ի՞նչ ես կարծում: Երիկը թող որս անի որքան կամենայ և թող ծեծի իւր ծառաներին, առանց քեզ տաքացնելու: Ես իմ կողմից, խոստովանք թող լնի, շատ ուրախ կլնեմ, որ նորան չտիսնեմ. ինձ չափազանց զայրացնումէ նորա մշտական երթեւեկութիւնը Ռօդաի մօտ:

Գէորգը յօնքերը շարժեց, բայց ոչնչ չխօսեց: Սակայն երեաց, որ երիկը իմացել էր Գէորգի ու թովմասի մտաղրութիւնը և անյապաղ յայտնեց, որ ինքն էլ վերադառնումէ նոցա հետ միասին: Եւ չնայելով որ եղբայրները մի փոքր սառն էին միմեանց հետ՝ նոյն խոկ գիշերը երկքը միասին ճանապարհ ընկան:

ԳԼՈՒԽ ԻԱ.

Չ Ի Ն Է Ա Ի Վ Բ Ի Ժ Ը:

Արեն արդէն մայր էր մտնում, երբ մեր ճանապարհորդները մծանացան կուլիսուտի անուանածիջեանին—մի նկարչական տեղին. երկայնաձև ստուերներ ձգւումէին հովտի ուղղութեամբ և թեթև մշուշ

բարձրանում էր երկրիցը երիկը, որ գեռ էլի հոգեկան վատ դրութեան մէջ էր, ընկերներից առաջ էր ընկել իսկ նորա եաւից զնումէին Գէորգն ու Թովմասը. սոյա շուրջը գալիս էրն ծառաներն ու սայլակը: Պատշգամիի մօտ ձիաներից իջնելով, նոքա գարմանքով լսեցին մի ծանօթ Ճիչ:

— Այս գու ես, Յուլիոս Կեսար, գոչեց Թովմասը. այդաեղ ի՞նչ ես շինում:

Մի գանդրահեր գլուխ գուրս նայեց դռնից: — Ես ինքս ես, պարսն Թովմաս: Կարծեմ դուք առենքդ էլ զարմանում էք, որ ինձ այսաեղ էք տեսնում: Կեսարն էլ իւր կողմից զարմանումէ որ տեսնումէ իւր պարոններին: Շատ ժամանակ է, ինչ որսի էք գնացել, տէր:

— Դու ի՞նչ ես շինում այսաեղ, կրկնեց Թովմաս Բարտօնը:

— Ես շատ զբաղուած եմ, տէր: Ես պատրաստասութիւն եմ տեսնում զօրապետի ու միսս Ռօդափար ընդունելութեան համար, որոնք վաղը առաւտական այսաեղ կիննեն: Երկի, երիասասրդ պարոններս կարծում են, թէ միմիայն իւրեանց է հարկաւոր փոքր ինչ զուարծութիւն: Զօրապետն ու միսս Ռօդան էլ ցանկանում են զբօննել:

— Ի՞նչ ասացի՞ր, գոչեց Գէորգը, զօրապետն ու միսս Ռօդան վաղը առաւտօտ այսաեղ պիտի լինի՞ն:

Յուլիոսը բացատրեց, որ սէր Զօնն ու Ռօդան ձանձրանալով տանը շատ նստելուց, որոշեցին երկուսով մի փոքրիկ ձանապարհորդութիւն անել զանազան հետազոտութիւններ անելու: Նպատակով: Նոքա

ամենից առաջ կամեցան Կուլիսուտի դալ, դուրա համար Յուլիոս Կեսարին մի օր առաջ ուղարկել էին այնտեղ մի քանի պատրաստութիւններ տեսնելու:

Երեկոյին երիկը, ՚ի միջի այլոց, ասաց Գէորգին: — Գիտե՞ս, Գէորգ, ես կամենումեմ Ռօդա Բարտօնին քեզանից ևլել: Դարձեալ մի միջոց վագրեր որսալով անցկացնելուց յետոյ կպահուեմ ու կաեղափոխուեմ Ռօլլէստօնեան ամրոցը: Եւ գիտե՞ս թէ ինչ հիանալի տանտիկին կարողէ լինել Ռօդան Ռօլլէստօնեան տան համար:

Գէորգն ու Թովմաս Բարտօնը խիստ շփոթուեցան երիկի այս խօսքերից, բայց երկուսն էլ ոչինչ չպատասխանեցին. այլ միայն Գէորգը փոքր ինչ ուսերը վեր քաշեց: — «Յիմա՞ր» մինջաց նա ու դուրս գնաց պատշգամիը, ուր և պատուիրեց իւր մահճակալը դուրս տանել: Թովմասը տեղաւորուեց հիւրամենեկում, իսկ երիկը բռնեց տան միակ ննջարանը: Տանը խաղաղութիւն տիրելուց յետոյ գեռ երկար ժամանակ պատշգամիում ծխաքարչեց ծուս էր բարձրանում: Խեղձ Գէորգը չկարողանալով հանգստանալը երբեմն այս կողքի վերայ էր պառկում, երբեմն այն, երիկի խօսքերը նորա մօքից չէին դուրս դալիս: Ի՞նչ պիտի լիներ, եթէ յիրաւի Ռօդան աւելի լաւ համարէր Ռօլլէստօնեան ամրոցի տանտիկինը դառնալ, քան մի խեղձ ու անապահով զինուորականի կին. նա երկար ժամանակ չէր կարողանում հաւատալ այս բանին: Գէորգը անդադար այս էր մօտածում, թէ երիկը կարող էր պատահել որ բացի ժառանալու:

գութինից և իւր սիրոյ առարկան յափշտակէր, ու
րին նա աշխարհիս ամեն բանից թանգ էր հա-
մարում:

Համոզուելով, որ իւր ամեն աշխատանքը՝
գուր կանցնեն, նա անկողնից վերկացաւ և վայր իջ-
նելով՝ դուրս գնաց: Ծխաքարշը դեն ձգելով ու ձեռ-
ները գրապանները դարսելով, տիսուր կերպով ման էր
գալիս տան առաջ: Լուսինը նոր էր դուրս գալիս և
նկարչական, ալպեան դաշտավայրը պայծառ լուսա-
ւորուած էր նորանով: Նոյն իսկ իջևանի գծից դուրս
աձումէր խիտ կերպով ճոխ բուսականութիւնը, իսկ
նոցա ետեւ երեւմէին բազմատեսակ ձևերով բլուր-
ների ամբողջ խմբեր: Գերեզմանական լուսթիւն էր
տիրում, որ երբեմնապէս խանգարւումէր զիշերային
թռչունի կամ հեռաւոր գազանի ձայնից: Գէորգը բո-
լըրովին միայնակ էր զգում իւրեան բնութեան փառ
ռահեղութեան մէջ: Յանկարծ նա տեսաւ, թէ ինչ-
պէս վայելլածե բարձրահասակ մի պատկեր, որին
նա իսկոյն ճանաչեց որ իւր եղբայրն էր, իջնումէր
պատշգամիք սանդուխքից: Երիկը մի բոպէաչափ
կանգնեց տան մօտ, յօրանցելով ու ձգձգուելով. յեւ
տոյ ուղեղուեց Գէորգի կողմը:

— Զարմացք է, որ մարդ հանգիստ խղճով էլ չե
կարողանում քնել, սկսեց Երիկը՝ կանգնելով Գէորգի
մօտ: Այ եթէ դու էլ ինձ նան երեկ նեզրին ծե-
ծէր, բանն ուրիշ կլինէր: Խղճի խայթը չէ, որ
տանջումէ ինձ, այլ այս անիծեալ տանը այն աստիշ
ճան գժոխային շոգէ, որ ամենեին չեմ կարողանում
քնել: Իսկ քեզ որ քամին է այստեղ բերել:

— Իմ ոսներա բերին, կարծ խօսքով պատաս-
խան տուեց Գէորգը:

— Այ քեզ բնութիւն, վրայ բերեց Երիկը.
այս մարդուց մի լաւ խօսք չես կարող իմանալ:

Նոքա միասին գնացին դէպի իջևանը և նոցա
խօսակցութեան արտայայտութիւնից պարզ երևում
էր, որ Ռօդա Բարտօնը այնտեղ փոքր գեր չէր
խաղում:

Այսպէս խօսելով երիտասարդները մօտեցան
իջևանին. լուսամուտների մէկից դուրս նաև Յուլիոս
Կեսարի գանգրահեր գլուխը:

— Վա՛չ, երիտասարդ Ռօլլէստօններն են խօսով-
ները: Ես պարզ լսումեմ կապիտան Գէորգի ձայնը.
տես ի՞նչպէս է տաքանում:

Եւ գլուխը դուրս բերելով՝ Յուլիոսը կարողացաւ
պարզ կերպով որոշել երկու եղբայրներին: Գէորգը
խօսումէր ձեռներով ու խիստ տաքացած:

— Վա՛չ, ասաց ինքն իրան կեսարը. գնամ պարոն
Թովմասիս զարթեցնեմ:

Ռօլլէստօնները այնչափ ջերմ կերպով էին խօ-
սում, վիճում, որ ամենելին չեն լսում, թէ ինչպէս
ժամանակ առ ժամանակ անտառի խտութեան մէջ
փշտումէին բարակ ճիւղեր: Թփերը զգուշու-
թեամբ շարժելով՝ ով որ հետզհետէ առաջ էր սո-
վում: Ի՞նչ կարող էր լինել արդեօք. յօվա՞զ, վա՞զը,
թէ մի ուղիշ որ և իցէ վայրի գազան, որ որսին էր
մօտենում: Բայց ահա՛ նա դուրս եկաւ ճանապար-
հին, ուղղուեց ու կանգնեց շուաքաւմ մեր մատաղա-
հասներից մի քանի ոտնաչափ հեռու: Սա Զինհան

էր, որ եկել էր իւր տիրոջեց վրէժն առնելու: Ո՛չ,
էրի՛կ, երանի՛թէ հայեացքդ, որ ուզզել ես դէպի,
քո եղբայրը, կարողանար փոքր ինչ հեռու թա-
փանցել: Կամ թէ գո՛ւ, Գէ՛րդ, կարողանայիր իմա-
նալ մահուան մօտենալը, որ պատրաստ է հարուածել
ծաղկահասակ մարդուն:

Զարագործը փոքր ինչ կողքանց էր կանգնած,
բայց այնչափ մօտիկ Գէորգին, որ բաւական էր փոքր
ինչ ուշադրութեամբ ականջ գնէր ու կլսէր նորա
շնչառութիւնը:

Գէորգը փոքր առ փոքր սկսել էր զսպել իւրեան
և չկամենալով եղբօր հետ կոռուել ձեռքը մեկնեց
երիկին իրեւ նշան հաշոռութեան:

Այս իսկ բոպէին օդի մէջ լսուեց սուր թա-
փանցող ձայն, մի խուլ արձականք էլ պատասխանեց
նորան: Երիկը չփերցրեց եղբօր մեկնած ձեռքը, այլ
ճիշ արձակեց ու ձեռները ձգելով՝ երեսի վերայ
ընկաւ:

— Ե՛րիկ, Ե՛րիկ, ՚ի սէր Աստծու, ձայն հանիր,
աղառումէր Գէորգը, — բայց էրիկի շրթունքները
յաւիտեան փակուած էին:

Յուլիս Կեսարը կանգնած էր Թովմաս Բարտօնի
մահճակալի կողքին և շարժումէր ուսիցը.

— Պարոն Թովմաս, պարոն Թովմաս, զարթե-
ցէք: Ես շատ եմ վախենում կապիտանի ու պարոն
երիկի վերաբերութեամբ, ես լսեցի որ նոքա վիճում
էին. վերկացէք խնդրեմ:

Թովմաս Բարտօնը, վերջապէս, աչքերը բացեց
և լաւ չիմանալով թէ բանն ինչումն է, անկողնից

վայր թռաւ: Նոյն իսկ բոպէին երկուսն էլ լսեցին
հրաձանի ձայնը:

— Ո՛չ, սէր Աստուած, խղճա մեզ վերայ, շտա-
պով ասաց Յուլիս Կեսարը, ծունկ չոգելով: Նրիտա-
սարդ պարոններից անշուշտ մինը միւսին սպանեց:
Ո՛չ, ցաւում եմ, ցաւո՞մ:

Թովմասը պատշգամբից ներքև վազեց ու գնաց
վազէվաղ այնտեղ, ուր Գէորգը լուռումունջ կանգ-
նած էր եղբօր դիակի առաջ: Էրիկի գլուխը դրած
էր նորա ծնկների վերայ և գժուար էր վճռել թէ
այն երկու եղբայրներից ո՞րն էր առաւել մուելի
նման: Թովմաս Բարտօնից ու Յուլիս Կեսարից յետոյ
նոյն տեղը հաւաքուեցան ծառաները. նոցա մէջն էր
Զինէան էլ, որ կարծես միւսների հետ միասին նոր
էր գուրս եկել տանից:

Թովմասը կանգնելով Գէորգի կողքին՝ շտապով
հարցրեց.

— Ո սէր Քրիստոսի, ասա՛ Գէորգ, ի՞նչպէս պա-
տահեց այս:

— Անտառի խորքից արձակած գնդակը սպանեց
առքան, դողդոջուն ձայնով պատասխանեց Գէորգը:

Այս միջոցին ծառաներից մէկը Երիկի պառկած
տեղեց մի քանի սաժէն հեռու անցնելով՝ մի ինչ որ
պինդ բանի ոտք գրեց. նա կռացաւ վերցնելու, —
վերցրածը ատրճանակ էր: Ծառան ատրճանակը տա-
րաւ Թովմասին տուեց, սա էլ լուսնի պայծառ լուսով
ճանաչեց, որ այն Գէորգինն էր:

ԳԱՐՈՒԹՎԱ ԻՐ.

ԽԱԻԱՐ ԼՈՒՌԻՑ ԱՌԱՋ:

Երբ Թովմաս Բարտօնը իւր բարեկամի ատրճանակը տեսաւ, շատ շփոթուեց ու յուզուեց: Ամենեւին ձայն ծպտուն չհանելով՝ նա համարեա' մեքենաբար դրապանը դրեց այն, թէպէտև կասկած չկար, որ բոլոր ներկոյ գտնուողները ձանաչեցին Գէորգի զէնքը: Յետոյ դիակը ներս տարան տուն: Բաւական էր երիկի դէմքին նայել համոզուելու համար, որ նա մեռած էր: Նորան դրին հիւրասենեկում մահճակալի վերայ և Գէորգը լուռ ու մունջ նստեց նորա զլիսի մօտ, հազիւ նշմարելով ինչ որ չորս կողմը կատարում էր:

Յուլիոս Կեսարը խիստ շփոթուած էր. նա բըռունցքը զլիին զարկելով՝ կրկնում էր անդադար:

— Ի՞նչ զարհուրելի գիշեր է. այ քեզ բան. այս ի՞նչ օրի հասանք. երեխ անպատճառ շուտով պիտի աշխարհիս վերջը լինի: Զօրապեաը ի՞նչ կասի: Միս Ռոգա՞ն ինչ կասի: Ի՞նչ պիտի անենք, ի՞նչ:

Բարտօնը ընդհատեց նորա խօսքերն ու պատուիրեց կառք պատրաստել երիկի մարմինը Ֆօտակամունդ տեղափոխելու համար:

— Կապիտան Ռոլլէստօնն ու ես ձիով կհետեւնք կառքին, աւելացրեց նա:

— Վայ, կապիտան Ռոլլէստօնն էլ գնումէ.

Նա պէտք է փախչի, տէ՛ր: Այս ինչ թշուառ գիշեր է մեզ ամենիս համար:

— Լեզուդ քե՛զ պահիր, Կեսա՛ր, բարկացած գոչեց նորան Թովմասը, ապա թէ ոչ կղղջաս անզգուշութեանդ համար:

— Միստէր Բարտօն, հեկեկաց Յուլիոս Կեսարը, ինձ համար շատ մեծ անբաղտութիւն է իմանալ այն, ինչ որ գիտեմ: Ես Կապիտան Գէորգին հոգուս չափ եմ սիրում: բայց ես լսեցի երկու մատաղահաս պարոնների ջերմ վիճաբանութիւնը, ուստի և վըճռեցի ձեզ զարթեցնել և այդ խկ բոպէին, ինքներդ պիտէք, տէ՛ր, որ թնդիւնը լսուեց: Ո՛չ, տէ՛ր Աստուած, ի՞նչ պիտի լինի սորա վերջը:

— Լեզուդ քե՛զ պահիր, կրկնեց Թովմաս Բարտօնը, այդ բոլորը միմիայն գու կարող էիր անել: Զյանդգնես այսուհետեւ ինձ մօտ դուրս տալ այդպիտի խելացնոր կասկածներ:

Երբ արեւը լուսաւորեց գեղեցկադիր բլուրները, տիսրութեամբ լցուած խումբը բարձրանումէր Ֆօտակամունդ տանող գալարուն ձանապարհով: Գէորգն ու Թովմասը ձիերով հետեւում էին կառքին: Բաւական ժամանակ երկուսն էլ լուռ ու մունջ էին գնում, վերջապէս Բարտօնն ասաց.

— Գէորգ, կարծեմ, ասացիր, որ գնդակը անտարիցն էր ուղղած:

— Այո՛, վայ բերեց Գէորգը: Եւ իմ մոքովս էլ նոր է անցնում, որ նախ քան մեր ձանապարհները, պիտի գտնէինք այդ տեղը. առաջին բոպէւներին ես այնպէս շփոթուեցայ երիկին պատահած

թշուտոռութիւնից, որ միանգամայն մոռացայ չարագործին որոնել: Արդեօք գորա համար կանխապէս պատրաստութիւն չպիտի՞ լինէր տեսնուած:

Թովմանը Գէորգին չասաց, թէ ոչ ոք չի որոնել մարդասպանին, որովհետեւ բացի Թովմանից, ամենքն էլ հաւատացած էին, որ շատ լաւ գիտեն մարդասպանի ով լինելը: Նա միմիայն ատրճանակը գրագանից հանեց ու ցածր ձայնով ասաց:

— Ահա՛, տե՛ս, այս զէնքով է կատարուած սպանութիւնը: Սա գտնուած է երիկի սպանած տեղից փոքր ինչ հեռու ճանապարհին:

— Այս հո իմ ատրճանակն է, գոչեց Գէորգը նորան սարսափեցրեց այն, որ եթէ չարագործը չգտնուէր, կածկածի տակ ինքը պիտի մնար: Փոքր ինչ առաջ երիկի հետ ունեցած վէճը, ժառանգութիւնը, որ կարող էր նա ստանալ եղբօր մահից յետ, — այս բոլորը մի վայրկենում անցան նորագլխով:

— Մի՛ վհատուիր, ասաց Թովմանը, ով որ քեզ ճանաչում է, կասկած չի տանի քեզ վերայ: Աւելի լաւ է, որ գործին սառնութեամբ վերաբերուենք: Նախ և առաջ, ի՞նչպէս կարող էր քո ատրճանակը չարագործի ձեռքն ընկնել: Մեր իրեղէնները միմիայն մեր ծառաների ձեռքն են: Ցիշեր, թէ ինչ կասկածելի անիծեալն է Զինէան և թէ ինչ զօրեղ պատճառ ունէր նա երիկին ատելու: Ի՞նչ ես կարծում, ճշմարիտ չի՞ լինի ասածս, եթէ ենթաղրեմ, որ այս չարագործութիւնը նորա ձեռքով է կատարուած:

— Ասաուա՛ծ գիտէ, բայց կարևոր գէպքում ինչո՞վ կարող ենք մենք այդ բանին հաւասարիանալ: Թովման Բարտօնը հազորգեց նորան իւր նախագիծը, որով կարող պիտի լինէր մեղադրանքը բարձել նեղրի վերայ: Սակայն Գէորգը ներկայ դրութեամբ գժուարանումէր բաժանել իւր բարեկամի յոյսերը: Այն միտքը, թէ որպիսի և իցէ մի հանգամանքում կասկածը կարող էր ընկնել իւր վերայ, արդէն ինքն ըստ ինքեան անտանելի էր: Ժառանգութիւն կորցնելն ու անցած տարիներում կրած դըժ-բաղտութիւնները ոչինչ էին ներկայ դրութեան հետ համեմատելով: Մինչև անդամ եթէ դատարանն էլ նորան եղբայրասպան չճանաչէր միթէ զարհուրելի կասկածը չպիտի ծանրանար նորա վերայ:

Նրա նոքա բլուրը բարձրացան և ճանապարհը այնուհետեւ հարթ դաշտավայրի վերայ էին շարունակում, Թովման Բարտօնը ցանկացաւ առաջ գնալ զօրապիտին ու Ռոկաին համբաւ տանելու՝ յանկարծերկիւղ չպատճառելու համար: Գէորգից բաժանուելիս՝ նա ջերմ կերպով սղմեց նորա ձեռքը և նայելով իւր բարեկամի գեղնածու աւերած դէմքին՝ ասաց:

— Քաջալերուիր, Գէո՛րգ, արիսցի՞ր, ամեն բան յաջող կերթայ:

Թովմանը խիստ ալեկոծուած էր և նորա շըրթունքները դողդողումէին:

Խ՝ նչպէս գեղեցիկ էր Ֆօտակամունդը յիշեալ առաւօտը: Ծագող արևի գունատ ճառագայթները ուրախ ուրախ խաղումէին ճոխ կանաչի վերայ և ցողապատ ծաղիկները նայումէին պարզ անսամպ եր-

կնքին: Միսս Քարտօնը երկար ժամանակ պատուհանումնստած զմայլած էր սքանչելի ու ճոխ բնութեամբ և միմիայն պատշդամբում կանգնած զօրապետի ձայնը ստիպեց նորան ճանապարհի պատրաստութիւնը տեսնել:

Սէր Զօնն ու նորա գեղեցիկ ազգականը դուրս եկան դաստակերտից և ճանապարհ ընկան բլուրների ուղղութեամբ: Ճանապարհի երկու կողմը լիքն էր վայրի կամելիայ, յասմիկ ու վայրի ձարխոտ. այստեղ այնտեղ ցրուած էին բարձր արմաւենիներ: Գյոնգդյոն թռչուններ թռչկոտում էին միմեանց ետեից, ուրախ ու անհոգ ձայնակցելով միմեանց. թրթռուրները, որոնք անհամեմատ գեղեցիկ ու մեծ մեծ էին Եւրոպայում գոտնուածներից, թռչկոտում էին ծաղկից ծաղկի: Զօրապետն ու Ռօդան ձիերը կանդնացրին, փոքր ինչ նայելու այն գեղեցիկ դաշտավայրին, որ ձգւումէր նոցա ոտների տակ. կապտագոյն թոյլ ստուերը բոլոր առարկաններին մի տեսակ հրաշալի կերպարան էր տալիս: Այսպիսի սքանչելի բնութեան քաղցրութիւնները վայելող մարդը իւրեան շատ լաւ դրութեան մէջ է զգում, ուստի և զարմանալի չէ, որ զօրապետն ու մանաւանդ Ռօդան հոգեկան ու բախ դրութեան մէջ էին:

Նոքա գեռ. միւնոյն տեղն էին կանգնած, երբ խօսակցութեան ձայներ ու ձիերի դրոփիւններ լսեցին: Շուտով ճանապարհապտոյտից երևեցան մի մարդ և մի աղջիկ, որոնք ծածկած ունեին լայն շրջանակաւոր և սպիտակ քոլերաւոր գլխարկներ: Երկուսն էլ ըստ երևութին խիստ յուզուած էին: «Զարհու-

րելի է», «Հափաղանց սարսափելի է» անընդհատ գոչումէին նոքա: Մօտենալով ճանապարհորդներին, զօրապետը ճանաչեց իւր հին ծանօթ մարդուն, որ Ֆօտակամունդի մէջ մի քաղաքական պաշտօն ուներ:

Փոխադարձ ողջունից յետոյ՝ պարոնը աղաղակեց:

— Գիտէք, թէ ինչ զարհուրելի դէպք պատահեց Կուլիսուտի իջևանում: Երկու մատաղահաս Անդղիացիներ, որոնք, եթէ չեմ սխալում, եղայլներ էին, մենամարտեցին ու նոցանից մինը սպանուեց:

Այդ բոսէին տիկինը մէջ ընկաւ.

— ՚Ի սէր Աստծու առաջ մի գնաք, դարձաւ նա Ռօդաին, սպանուածի մարմինը բերումեն և գուք անշուշտ կհանդիպէք այն խմբին: Ո՛չ, ի՞նչ զարհուրելի բան է: Այն մատաղահասները Մէյսօրումն էին. յետոյ նոքա դարձան Կուլիսուտի և ահա՛ այսպէս եկաւ վերջը: Մենք ցանկանումէինք իջևանում հանգստանալ, բայց երբ իմացանք այս բանը, ՚ի հարկէ վճռեցինք առաջ գնալ: Նս ինձ միանգամայն հիւանդ եմ զգում և ալէկոծութիւնից ու յոգնածութիւնից ջարդուած:

Ռօդաի դէմքը խիստ փոխուեց. նա շտապով հարցրեց:

— Ի՞նչպէս է նոցա ազգանունը:

— Ո՛չ, Ճիշտ չեմ իմանում, պատասխանեց Լէդին, Ռօյստոն էթէ Ռառուստօն, կամ սորանման մի ուրիշբան:

— Ռոլէստօն է ասաց մարդը, սպանուածը փոքրն է, երկուսից ամենագեղեցիկը. բայց մենք, տարագլտաբար, մանրամասնութիւնները չգիտենք:

Յանկարծ Ռօդան գեղնեց:

— Ո՛հ, հօրեղբայրս, սխալ կարող է լինել այդ,
գոշեց նա, սանձը վայր թողնելով ու յուսահատու-
թեամբ մատները կոտրատելով։ Մի վայրկենում ամ-
բողջ աշխարհը պատկերացաւ նորա աչքերի առաջ։
Մի բոպէ դորանից առաջ նորա շուրջը ամեն բան
հանգիստ էր ու երջանիկ, իսկ այժմ նորան միտնգա-
ման հակառակն էր թւում։

Սէր Զօնը սանձը վերցրեց Խօդաի ձեռքից և
դառնութեամբ լաց եղաւ։

— Հանգստացի՞ր, աղջիկս, ասաց նա. աշխատիր
քաջութեամբ տանել ցաւը։

— Ծուտովցած գնանք ու իմանանք թէ բանն
ինչումն է, հօրեղբայրս. խնդրեմ գնանք, աղաչումէր
Խօդան։

— Ո՛չ ոչ խօսեց ծերունին, անկարելի բան է։
Դու այժմ ոյժ չունիս այնքան, որ կարողանաս յու-
ղարկաւորներին դիմաւորել։ Ես քեզ յետ կտանեմ
որտեղից գալիսենք։

Նախ քան Խօդաի պատասխանելը, մի նոր ձի-
աւոր միացաւ նոցա հետ։ Սա Թովմաս Բարտօնն էր։
Քրոջ ու հօրեղբօր դէմքերի տխուր արտայայտու-
թիւնից նա իսկոյն գուշակեց, որ նոցա արդէն ամեն
բան յայտնի էր։

— Մի վհատուիր, Խօդա, շնչաց նա քրօջը։

Խօդան դարձրեց դէմպի նա իւր գունատ ու
կնճռու գէմքը ու տասաց։

— Բայց դու ինչպէս թոյլ տուիր այդ բանն
անելու. ի՞նչպէս թոյլ տուիր նոցա, որ կուռն մի-
մանց հետ։

Թովմասը տարակուսած նոյումէր քրոջը։ Սէր
Զօնը պատմեց իւր ազգականին այն ամենը, ինչ որ
լսել էին նոքա եղբայրների մենամարտութիւն մա-
սին։ Թովմասը անյապաղ հաղորդեց նոցա պատահած
անցքի բոլոր մանրամասնութիւնները և շմուացաւ
յայտնել և նեղի մասին ունեցած իւր անձնական
կասկածը։

Զօրապետը որ լսեց Թովմասի ասածները՝ զլուխը
թափ տուեց։

— Խե՛ղձ Գէորգ, խուլ ձայնով ասաց նա. բոլոր
մեղաղբանքը նորա վերայ է։

— Այդ ինչպէս էք ասում, հօրեղբայրս, ար-
համարհանքով դունց Խօդան։ Նորա արիւնն աչքերին
խիեց ու աչքերն սկսան փայլել։ Գէորգ Խոլէստօնը
նոյնքան աղնիւ է, որքան և քաջ։ Նա աշխարհիս
ամենալաւ ու ամենաազնիւ մարդն է։ Միթէ
մարդ կարող է մի վայրկեան անգամ կասկած տա-
նել նորա մասին այդպիսի գործի մէջ։

Այս իսկ բոպէին հեռութից երևացին տխուր
յուղարկաւորները Խօդան ձիու ընթացքը փոխեց և
մօտենալով Գէորգին՝ ձգեց նորա ձեռքը. նա կամե-
նումէր բան տակ, բայց բերանը չէր բացւում և ար-
տասուքը կարկտի սէս թափումէին նորա աչքերից։

Սէր Զօնը որոշեց, որ էրիկի մարմինը դաստա-
կերտը տանեն։ Այսուհետեւ խորին տխրութիւն ու
լուսութիւն տիրապետեց գեղեցկագիր կօտտեդմի(*) մէջ։

(*) Կօտտէդմը քաղաքից գուրս շինած տուն է իւր
բոլոր յարմարութիւններով. ԾԱՆ. ԹԱՐԳ.

Նուտով Ֆօտակամնադից աստիճանաւորներ գնացին դաստակերտը, մատաղահաս Ռոլէստոնի մահուան մասին մանրամասն տեղեկութիւններ հաւաքելու: Թէպէտե նոցա պարտականութիւնն էր պաշտօնական քննութիւն անել բայց ՚ի պատիւ սէր ծօնի նոքա առաջին հարցուփորձին բոլորվին մասնաւոր ճետուին: Գէրոգը կրկին անգամ ստիպուեցաւ մանրամասնաբար պատմել բոլորը ինչ որ նոյն գիշերը պատահել էր: Նա ուղղակի խոստովանուեց, թէ ինքը վիճել էր եղեօր հետ և կարողացաւ այսքանը յայտնել որ վէճի տաք ժամանակ էրիկը աներեւոյթ ձեռքով սպանուելով՝ վայր էր ընկել իւր օտների մօտ: Գէորգը խիստ շփոթուած էր թւում: Նա կցկտուր էր պատմում ու կարծես անգիտակցաբար: Եղեօր յանկարծակի մահն ու իւր վերայ ծանրացող կասկածը զօրեղ կերպով ներգործել էին նորա վերայ: Յետոյ պատմեց Յուլիոս Կեսարը, թէ ինչպէս լսել էր նոցա կոռուի ձայնը, զարթեցրել էր Բարտոնին, մի թնդիւն էր լսուել ու թէ ինչպէս տանից դուրս վազելով՝ տեսել էր Գէորգ Ռոլէստոնին եղեօր դիմի մօտ: Թովմասը իւրեան առաջարկած հարցերին պատասխանեց ինչ որ գիտէր և ՚ի միջի այլոց յիշեց, որ էրիկի ծառան միանդամայն կասկածելի անձն է: Նա պատմեց երկու դէպք, երբ հանգուցեալը խիստ պատժել էր Զինէաին և պարզ ուղղումէր ունկնդիլներին էլ նոյն կարծիքի բերել Զինէաի վերաբերութեամբ, ինչ որ ինքն ունէր: Բայց չնայելով, որ պարոններից ոչ ոք իւր կարծիքը չյայտնեց, այնուամենայնիւ Թովմասը պարզ նկատեց, որ իւր ջանքը ՚ի զուր էր և

որ ատրճանակը զարհուրելի ապացոյց էր Գէորգի յանցաւորութեան: Հարցուփորձը հիւրանոցումն էր կատարում և երբ ամբողջ խումբը ներս մտաւ հիւրասենեակը նախաճաշելու, Թովմաս Բարտոնն ու Գէորգ Ռոլէստոնը մնացին այնտեղ: Դոնից շորերի ձայն լսուեց ու մտաւ այնտեղ Ռոգան: Երբէք միսս Բարտոնը այդպէս գեղեցիկ չէր երևած:

Գէորգը մօտեցաւ նորան:

— Ռոգա, դուք գիտէք, այն պարոնները ինչ են մտածում իմ մասին միւս սենեկում: Դուք գիտէք, որ բացի Թովմասից ամենքը ինձ եղբայրասպան են համարում: Բայց միթէ դուք էլ հաւատումէք սորան:

Թովմասը երեակայելով, որ քոյրը իւրեանից լւաւ կարող էր միմիթարել Գէորգին՝ աննկատելի կերպով սենեկից գուրս գնաց:

Ռոգան, մեկնեց Գէորգին իւր երկու ձեռները և իւր բորբոքած դէմքը դարձնելով նորան ասաց.

— Ի՞նձ նայիր, Գէորգ, սի՞րելիս, բարեկամն, նայի՞ր աչքերիս ու ասա՛, կարողե՞ն դու սոցա մէջ կասկած նկատել: Ո՞չ ո՞չ այս ծերերի խելացնորութիւնը (և այս ասելով ձեռքը ձգեց սեղանատան կողմը) և ոչ մի բան աշխարհիս երեսին չեն կարող ինձ ստիպել, որ կասկած տանեմքո մասին: Նա քեզ խիստ լւաւ եմ՝ ճանաշում, Գէորգ...

Մի բանի բոպէից յետոյ՝ դուռը բացուեց և ներս վագեց Յուլիոս Կեսարը:

— Կապիտան Գէորգ, ո՞չ, միսս Ռոգա, գուեց

նա, ինչո՞վ պիտի վերջանայ այս: Զօրապետը հրաշմայեց, որ տանը գտնուած ամենքը, թէ պարոններ և թէ ծառաներ, պիտի զնան այս սենեակը, ուր հանգուցեալն է պրած: Ո՛չ, պարո՞ն Գէորգ, ասումեն, որ դուք էք սպանել ձեր եղբօրը: Եթէ այս ծմարիտ է, տէ՛ր, փախէք, փախէք: Աշխ, մենք ինչ պիտի անենք:

— Ամաչ'ր, Յուլիոս Կիսա՛ր, դո՛ւ. յիմարազլուխ, աղաղակեց Թովմաս Բարտօնը դուռը բանալով: Գէռ'րգ, մենք ամենքս վերև ենք դնում: իսկ դու, Ռօդա, աւելի լաւ կանես եթէ մինչև իմ վերագարձը այստեղ մնաս:

Վերև առանձին սենեկում անկողնի մէջ դրանք էր անկենդան երիկի դիակը: Թովմաս Բարտօնը առաջարկեց բոլը բնիկ ծառաններին գալ երկրպագել հանգուցեալյն: Ֆօտակամունդի աստիճանաւորների կարծիքով, եթէ յիրաւի նորա արտայայտած կառ կածը Զինէաի մասին ծշմարիտ է, ուրեմն և չպիտի յարգէր նորան: Սակայն նոքա չհակառակեցան Թովմասի ցանկութեանը երիկի ծառային էլ միւսների հետ, նոյն ձեռվ փորձելու, թէպէտ և չէին հասկանում նորա նպատակը:

Սենեակը կէս խաւար էր. վարագյրները իջեցրած էին, բայց լուսամուտները բոլորովին բաց էին, որտեղից բուրումէր այդու ծաղիկների անուշահռտութիւնը և լաւումէր նոյնտեղի միջասների բղըզոցը: Թոլոր ներկայ գտնուողները ցածր ձայնով էին խօսում և զգուշութեամբ էին մանգալիս դորդի վերայ: Զօրապետն ու միւս պարոնները, Թովմասի ու Գէորգի

Հետ՝ կիսաշըջանաձև կանգնած էին սենեկի մի անկիւնում:

Դուռը բացուեց և Յուլիոս Կեսարը ներս մտաւ իւր հերթին: Նոքա մտան միմեանց ետևից ու կանդնելով մեռելի ոսների մօտ, լուռ ու մունջ նայում էին նորան: Պարոնները սենեկի հակառակ պատի մօտ կանգնած՝ կարողէին նեգրների սև դէմքերին երևած ամենափոքր փոփոխութիւններն անգամ նկատել: Զինէան ամենից վերջը մտաւ. Նա քայլումէր կոպիտ կերպով, բայց գէմքի անբնական անշարժութիւնը ապացոյց էր նորա ներքին ալեկոծութեան: Նա մօտեցաւ անկողնին և մի պղտոր հայեացք ձգեց մեռելի վերայ: Յանկարծ գերեզմանական լրութեան միջոցին մի ձայն լսուեց, երիկի ձայնի նման և ըստ երևութին մեռելի բերանից դուրս եկող ձայն:

— Զինէա՛, ծառա՛ս, դու սպանեցիր ինձ, ծռնկչողիր ու խոսովանիր յանցանքի:

Նրկիւղց խելքը կորցնելով խեղճ նեգրը վայր ընկաւ ու սկսաւ ներողութիւն ինսդրել:

— Խղճա՛, խղճա՛, տէր, հեծումէր չարագործը. դու ինձ հետ խստութեամբ էիր վարում ու անզորմ ծեծումէիր ինձ: Ես կատաղութենից ինձ մոռացել էի միանգամայն, երբ ատրճանակն արձակեցի քեզ վերայ:

Եւ անվերջ զարհուրանքի արտայայտութեամբ ձեռքը բարձրացնելով՝ Զինէան ուշաթափուեց:

Հարկաւո՞ր է ասել արդեօք, թէ Գէորգի ումն էր պարտական յանցաւորի երևալու համար: Թովմասը պղուտ քաղելով իւր որովայնախօսելու յատկութիւն

նից, օգնեց իւր լնկերոջ: նա Անդղեան թողնելուց
յետոյ ոչ մի անգամ չէր գործածել այս արհեստը:
Հեշտ է երեակայել ներկայ գտնուողների զարմանքը,
երբ սենեկի մէջ լսուեցաւ մեռելի ձայն: Մինչև ան-
գամ պարոններն էլ չկարողացան սկզբում իմանալ թէ
ինչ բան էր այդ: Զինէախն անզգայ դուրս տարան.
երբ նա ուշքի եկաւ, մանրաման բացարութիւն
տուեց իւր արած յանցանքի մասին:

Ամենքը, որոնք կասկած ունեին Գէորգի վերայ,
չփափէն թէ ինչպէս շահէին նորա սիրաը ու քաւէին
իւրեանց մեղքերը: Նորա շնորհակալութեանը դէպի
թովմասը չափ ու սահման չկար:

Այսպէս անցան Գէորգի կեանքի ծանր օրերը և
նոցնից յետոյ սկսուեցան նորա համար կատարեալ
երջանկութեան օրեր, որպիսին նա դեռ մինչեւ այդ
ժամանակ չէր տեսել. նորա ամենաանգին ցանկու-
թիւններն անգամ կատարուեցան:

ԳԼՈՒԽ ԻԳ.

ՊԱՏՄՈՒԹԵԱՆՍ ՎԵՐՁԸ,

Մի տարի էլ անցաւ: Անդղիայի Բէյմաստօն գիւ-
ղում սկսուեցան հնձի օրերը. ոսկէնման հասկերը
հակւումէին հատիկների ծանրութեան տակ և Ռոլ-
լէստօննեան անտառի լայն ծառուղու ծառերը ծած-
կուած էին ձոխ կանաչով:

Մեղլաւ ծանօթ ապակէ դռնից, որ տանումէր
Ռոլլէստօն ամրոցի ընդարձակ նախասենեակը, դուրս

եկան մի պարօն ու մի տիկին: Գէորգը չէր ճանա-
չել, որ այն բարձրահասակ ու վայելչակազմ գեղնա-
գոյն դէմքով ու խիտ մաղերով մարզը Գէորգ Ռոլ-
լէստօնն էր, մեր հին ծանօթը, իսկ մատաղահաս,
գեղեցիկ տիկինը՝ նորա կին Ռոգան: Նոքա երեք
ամիս առաջ ամուսնացել էին և մօտիկ օրերում վե-
րադարձել էին Բէյմաստօն, ուր կտմենում էին մըշ-
տական բնակութիւն ունենալ: Գէորգը ամուսնանա-
լուց յետոյ՝ թողել էր զինուորական ծառսյութիւնը:
Զօրապետն էլ մի տարուց յետոյ պիտի գար Անդ-
ղեայ, երբ արդէն կվերջանար նորա ծառայութեան
ժամանակամիջոցը Հնդկաստանում: Թովմաս Բարտօնը
գեռ երկար տարիներ ստիպուած էր զինուորի թա-
փառական կեանքն անցնել արևադարձային տօթ
երկնքի տակ: Բայց մենք կարողենք հաւատացած
լինել որ նորա բարի սիրաը, միտքն ու ուրախ բը-
նութիւնը՝ կօգնէին նորան այն բոլոր չարչարանքնե-
րից յաջողութեամբ ապատուելու, որոնք մասն և
բաժին կլնինէին նորան:

Գէորգն ու Ռոգան պատրաստուեցան Ռոլլէս-
տօննեան հիւրանոցի կառավարիչներին այցելելու, այն
է պառաւ նօրախն ու Զօն Մարտինին: Կառքը սպա-
սումէր գոան մօտ և ահա՛ նոքա սլացան գալարուն
ծանապարհի վերայ: Մի փոքրիկ բլրակի վերայ Գէ-
որգը կանգնացրեց կառքը և երկուուր միասին սկսան
զուարձանալ անդղիական դաշտավայրների գեղեցիկ
տեսքով:

— Ռոգա, ասաց Գէորգը, ի՞նչքան տխրում եմ,
երբ մտածում եմ խեղճ նրիկի մասին, որ այժմ ան-

շունչ պառկած է օտար երկնքի տակ, մինչդեռ ես
նորա մահուան շնորհիւ շահւումեմ այս հարուստ
ժառանգութիւնից: Կեանքը ինձ շատ երջանկու-
թիւններ է խոստանում այժմ: Իմ ապագաս պարզ
է և որոշուած. միմիայն ցաւակցութիւնը խեղճ մե-
ռած երիտասարդի մասին մթնացնում է իմ միտքս:
Գիտե՞՞ս, սիրելիս, այսպիսի անսահման բաղտառու-
րութիւնը՝ վախեցնումէ ինձ:

— Սիրելի՛ Գէորգ, ծանր կերպով պատասխա-
նեց Ռոգան, նոյն Աստուածը, Որ քեզ առաջ պահ-
պանեց, քեզանից անբաժան կլինի և կեանքիդ
պարզ ժամանակը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարտք եմ համարում այստեղ մեծ շնորհակա-
լութեամբ յիշել մեծապատիւ օրիորդ ՄԱՐԻԱՄ Ա-
ԼԱԴԱԹԵԱՆՑին, տիկին ՎԱՐՎԱՐՈԱՑ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆՑին,
Պ. ԱԿԵՏԻՍ ԽԶԱՄԻՐԵԱՆՑին (Տփխիս), արժ. ՅՈՒՍԻԿ
ՎԱՐԴ. ՄՈՎՍԻՍԵԱՆՑին (Էջմիածին), Պ. Պ. ԱԲԳԱՐ
ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑին (Երևան), ԱՂԵՔՍԱՆԴՐ ՏԵՐ
ՄԿՐՏՉԵԱՆՑին (Ագուլս), և ԵՂԻԾ; ՔԱՀ. ՏԵՐ ԱՍ-
ՏՈՒԱԾՏՐԵԱՆՑին (Սղնախ), որոնք բարեհաջեցին
առյն գլքի համար բաժանորդներ գտնել:

Յարութիւն սարկաւագ Առաքելեանց — Ողա-
նեանցի թարգմանութիւնները. —

**1 — ՀԱՅԱՍՏԱՐՈՒԹԻՒՆԸ Ա-
ՄԵՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԻՆ
ՅԵՂՋԱԹՈՒՄ Է.**

Գործ Գրանց Հօֆմանի. Ե-
րես. 141. 1877. Տփխիս. գինն
է 40 կոպ.

**2 — ԽԵՆԵՐԻՑ ԴԻՎԻ
ԳՈՐԾ ՆՈՅՆ Հօֆմանի. Երես 146.
1877. Տփխիս. գինն է....40 կոպ.**

**3 — ԴՕՆ ՔԻՇՈՏ ԼԱՄՎԵ-
ՇԵՑԻ.**

Գործ Ա. Աէրվանտէսի. Համա-
ռութ տպագրութիւն Վոլֆի Հը-
րատարակութիւնից թարգմանած:
Երես 240. 1878. Տփխիս. գինն
է 70 կոպ.

4 — ԳԼՅՈՐԴ ՈՒԾԼԵՍՈ՞Ն.

Երես 168. 1879. Տփխիս. գինն
է. 60 կոպ.
Տասնից աւելի առնողներին 20°
զիջումն կլինի:

Առաջին երկու թարգմանութիւն-
ների ամբողջ տպագրութիւնները՝ շատ
փոքրաթիւ օրինակների բացառութեամբ
գտնւումն Կովկասնեան գրավաճառա-
նոցում Զաքարիայ Գրիգորեանի:

Կարճ միջոցում դուրս կգայ տպագ-
րութիւնից Հայերէն լեզուով Ա. Լա-

կիդէի մի փոքրիկ առակ «ԵՐԵՎԱՐԴ
ՈՂՈԿԻ» վերնագրով, որի Ռուսականը
արժանացել է պարզեատրութեան Ա.
Պետերբուրգի Գրէօբէլեան ընկերու-
թեան կողմից:

Հայոց Առաջնության ամենամեծ
առաջնորդ Պատրիարք Տիգրան Մատուցիւ
Առաջնորդ Առաջնորդ Տիգրան Մատուցիւ
Առաջնորդ Առաջնորդ Տիգրան Մատուցիւ
Հայոց Առաջնորդ Պատրիարք Տիգրան Մատուցիւ



ՀՀ Ազգային գրադարան



NL0585404

